

ՊԵՐՃ ԹԵՐՁԵԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՅՈՒՇԵՐԷՍ

ԳԱՀԻՐԷ - 2026

ՊԵՐՃ ԹԵՐՁԵԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՅՈՒՇԵՐԷՍ

ԳԱՀԻՐԷ - 2026

Պերճ Թէրզեան իր ինքնակենսագրականը գրել սկսած էր 2022 թուականի Նոյեմբերին՝ ընդառաջելով Արեւմտահայերէնի Ուսումնասիրութեանց Կեդրոնի հիմնադիր տնօրէն Դոկտ. Գրիգոր Մոսկոֆեանի խնդրանքին:

Բարեկամ մը, որուն մինչ այդ ներկայացուցած նոյն խնդրանքը մնացած էր անգործադրելի, առիթէն օգտուելով առաջարկած էր ընդլայնել ծիրը եւ պատրաստել ընդարձակ յուշագրութիւն մը, որ միահիսուէր եգիպտահայ գաղութի կարեւոր իրադարձութիւններուն հետ՝ որպէս վկայութիւն:

Թէրզեան համաձայն գտնուած էր, բայց նկատելով որ 2025 թուականի Հոկտեմբեր 15-ին կը լրանար 50-ամեակը Եգիպտոսի մէջ գործող երեք հայ ամառական կուսակցութիւններու (ՌԱԿ, ՀՅԴ, ՍԴՀԿ) ներկայացուցիչներուն՝ եգիպտահայ համայնքին գործերը համագործակցական մթնոլորտի մը մէջ միասնաբար, համերաշխաբար վարելու համար ստորագրած «ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ»ին, պատմականօրէն կարեւոր եւ առաջնային համարելով այդ ուղղութեամբ պատրաստելիք իր ուսումնասիրութիւնը (որ լոյս տեսաւ ներկայ տարուան Մարտին), յետաձգած էր ամբողջացումը յուշագրական հատորին:

Ներկայ յետմահու իրադարակութեամբ, հանգուցեալին այրին՝ Տիկին Սեդա Սամուէլեան Թէրզեան, իրականացուցած կ'ըլլայ իր սիրելի ամուսնոյն անկատար մնացած փափաքը՝ հանրութեան ներկայացնելով «Ինքնակենսագրութիւն եւ Պատատիկներ Յուշերէս» գիրքը, շնորհակալութիւն յայտնելով Դոկտ. Վաչէ Ղազարեանին եւ տիկին Շաքէ Մարգարեանին՝ խմբագրական աշխատանքներու համար:

Գիրքին մէջ տեղ գտած նամակները հարազատ արտագրութիւններն են անոնց բնագիրներուն, իսկ փաստաթուղթերը՝ բնօրինակներուն պատճէններն են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ	1
ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ.....	8
ՑԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ - Ա.	9
ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.....	10
ՄԵԾ ԱՊԱԳԱՅ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԱՅՍ ՊԱՏԱՆԵԱԿԸ ՇԱՏ ԴԺԳՈՂ ԵՆՔ ԻՐ ՎԱՐՔԷՆ.....	11
Ա. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ	14
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ (ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ) ԱԽԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	15
ՑԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ - Բ.	16
ՄԱՐՈՆԻԹ ՀԱՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԱԼ ՄԱՏՐԱՍԱ ԱԼ ՄԱՐՈՆԻԱ	17
ՑԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ - Գ.	20
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ	21
ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՂԻՍԱԿԱՆ.....	24
«ԱՐԵԻ»Ի ԱՆԴԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ	28
ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (< Գ Մ) (ՄԵՐ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՍԻՐԱՅԸ).....	36
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԻՏԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԵՒ ԿՈՐՍՈՒԱԾ ԱՌԻԹ ՄԸ	45
ՌՈՒՔԷՆ ԶԱՐԵԱՆ	52
ԼԵՒՈՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ	57

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՆ ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ Լեւոն Հախվերդեան	60
Թէ ԻՆՉՊԷՍ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՐՁԱՅ	68
Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԽՕՍՔԸ	70
ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը.Մ.-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	92
ՅԱՆՁՆԱՌԱԳԻՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԷՆ Ա. Ի	93
ՀԵՂԻՆԱԿԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՕՍՔԸ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՀ ԳԱՀԻՐԷԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ 2010	94
ԳԱՀԻՐԷԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-ԻՆ	99
ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՒԱԾ ԳԱՀԻՐԷԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ	100
ՅՈՒՇԱԳԻՐ՝ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԱԾ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 21 ՄԱՐՏ 1986-Ի ՆԻՍՏԻՆ Ի ՄԱՍԻՆ ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՄԵՐՃԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԸ ՏԱՐԵԿԱՆ 60 ՀԱՋԱՐ ՏՈԼԱՐՈՎ ՎԱՐՁԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ	111
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ	126

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Ծնողներս երկուքն ալ կիլիկեցի եղած են:

Հօրս անունն էր Տիգրան, որ ծնած էր Քիլիս 1896-ին:

Մօրս անունն էր Ռեբեկա (Տէմիրճեան), որ ծնած էր Այնթապ 1900-ին:

Իրարմէ անկախ, երկուքն ալ Եգիպտոս եկած են 1920-ականներուն սկիզբները, խուսափելու համար այդ օրերուն Քեմալական շարժումին կողմէ Կիլիկիոյ հայութեան դէմ շղթայազերծուած հալածանքներէն:

Անոնք ամուսնացած են Գահիրէի մէջ Մայիս 1925-ին եւ բախտաւորուած են երեք զաւակներով, որոնց անդրանիկը՝ Գէորգ¹ ծնած է 1929-ին, իսկ երեք տարի վերջ ծնած է իրենց երկրորդ զաւակը՝ Մարի², ապա 1938-ին ծնած է երրորդ զաւակը՝ Պերճ:

Հայրս ճանչցուած էր որպէս վարպետ դերձակ մը, որ 1927-էն սկսեալ իր սեփական հաստատութիւնը ունէր:

Մայրս խելացի եւ ուսեալ կին մը եղած է:

Երկուքը զիրար կ'ամբողջացնէին:

Մայիս 1941-ին անակնկալ կերպով կը մահանայ մայրս՝ Ռեբեկան, իր ետին ձգելով ամուսինը եւ երեք անչափահաս զաւակներ:

Տուեալ տխուր կացութեան առջեւ, հայրս՝ իր ընտանիքին կեանքը բնականոն հունին վերադարձնելու համար, Դեկտեմբեր 1941-ին կ'ամուսնանայ Մարաշ ծնած եւ ապա Եգիպտոս եկած Օր. Վերժին Ֆաթթալի հետ, որ հայ կաթողիկէ համայնքին անդամ էր եւ իր մօրենական

¹ Երէց եղբայրս՝ ԳէՈՐԳ, 1948-ին Եգիպտոսէն կազմակերպուած ներգաղթով մեկնած է հայրենիք, եւ հոն աւարտելով բարձրագոյն ուսումը, եղած է ֆիզկուլտուրնիկ, դասաւանդելով այլեայլ վարժարաններու մէջ:

² Քոյրս՝ ՄԱՐԻ, հայկական նախակրթարանը աւարտելէ յետոյ, անգլիական հակումով երկրորդական ուսման շրջանը աւարտած է եւ սկսած է պաշտօնավարել Եգիպտոսի մէջ, հասնելով մինչեւ ՄԱԿ-ի

կողմէն Մարաշի հայ կաթողիկէ հռչակաւոր Խըրլաքեան գերդաստանէն կը սերէր: Այս ձեւով հօրս երկրորդ կինը կու գար գրաւելու մօրս տեղը եւ կատարելու անոր դերը: Եղբայրս եւ քոյրս այդ շրջանին դեռահաս ըլլալով՝ յաջորդաբար 12 եւ 9 տարեկան, դժուարաւ կը համակերպէին ստեղծուած նոր կացութեան:

Իսկ ես երեք տարեկանս հազիւ բոլորած երախայ մըն էի, որ չէր կրնար երէց եղբօր եւ քրոջ դժուար ապրումները հասկնալ կամ ունենալ:

Այս առիթով, իր առաջարկով եւ փոխադարձ համաձայնութեամբ, տիկին Վերժինը մեր ընտանիքին մէջ այնուիտեւտեւ պիտի կոչուէր Մամի:

Նկատի ունենալով փոքր տարիքս եւ իր զաւակ չունենալը, Մամին զիս «որդեգրած» էր իբր իր զաւակը եւ իր ապագայի ապաւէնը: Ասոր համար է որ ճիգ չէր խնայեր զիս դաստիարակելու իր գիտցած ձեւով, որուն մէջ առաջին գիծի վրայ կու գար կաթողիկէ դաւանանքը:

Մանկութեանս մասին խօսելով, պէտք է ըսել թէ փոքր տարիքիս, մինչեւ 12-13 տարեկանս, շատ սահմանափակ շրջանակ մը ունէի, միայն տուն եւ դպրոց, ոչ ազգական, ոչ տուն այցելող ընկեր: Ոչ ոք: Այս կացութեան կարեւոր պատճառներէն էր, մեր փողոցին միւս ծայրը բնակող Աւետիս մօրեղբօրս ընտանիքին լարուածութիւնը «նոր հարս»ին նկատմամբ: Մօրեղբօրս ընտանիքին անդամները կը փորձէին «տիրութիւն ընել» իրենց հօրաքրոջ զաւակներուն եւ անտեղի վերագրումներ կ'ընէին Մամիին մասին, որոնք մշտական լարուած մթնոլորտ մը կը ստեղծէին:

Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան Աղէքսանդրիոյ գրասենեակը, որմէ յետոյ մեկնած է Ափրիկէ՝ Քոնկօ եւ Թոկօ, նոյն կազմակերպութեան ծիրին մէջ: Ապա, անցած է Լիբանան, ուրկէ մեկնած եւ հաստատուած է ԱՄՆ: Ան, իր վկայեալ հաշուակալի պաշտօնին առընթեր ունեցած է գրական հակումներ եւ դարձած անգլիագիր գրող մը, որ զանազան մրցանքներու մասնակցելով, արժանացած է առաջնութեան մրցանակներու:

Այդ պայմաններուն բերումով, հայրս կարճ կապեց խնդիրը եւ մեր կապերը խզեց մօրեղբօրս ընտանիքին հետ, որուն հետեւանքով կը մնային սահմանափակ թիւով մարդիկ (5-6 հոգի), որոնց հետ կարելի էր յարաբերիլ:

Հայրս, գաղթականի մը կրած բոլոր արհաւիրքները ցմրուր ապրած ըլլալով, իւրայատուկ մօտեցումով մը ամբողջ էութեամբ փարած էր իր գործին, օրն ի բուն մինչեւ ուշ երեկոյ աշխատելով, բացի Կիրակի եւ նշուող տօնական օրերէն:

Ան իր ուրոյն ըմբռնումները ունէր, լուրջ եւ բծախնդիր անձ մըն էր: Չէր սիրեր վիճաբանութիւններու եւ հակաճառութիւններու մէջ մտնել: Իր ըսելիքը եւ ընելիքը կ'ընէր անաղմուկ:

Գաղափար մը տալու համար իր կարգ մը մօտեցումներուն մասին, ստորեւ կը ներկայացնենք մեր մտքերուն մէջ դրոշմուած կարգ մը դրուագներ:

Կը յիշեմ, երբ հայկական վարժարանէ շրջանաւարտ եղայ, եւ սկսայ օտար վարժարան յաճախել, առաջին կիսամեային քննութիւններուն արդիւնքներուն մէջ յիշուած էր որ դասարանի շուրջ 40 աշակերտներուն մէջ 9-րդ տեղը կը գրաւէի, հակառակ անոր որ նիշերս յարաբերաբար բարձր էին:

Հայրս կը պնդէր, թէ պէտք էր դասարանին առաջինը հանդիսանայի:

Իր քով ուսումը նոր լեզուով իւրացնելու դժուարութեան մասին բացատրութիւնը եւ մեկնաբանութիւնը ընդունելի չէին:

Դարձեալ կը յիշեմ Կիրակի առաւօտ մը, երբ հայրս կանչեց զիս եւ պահանջեց ինձմէ կարդալ իր առջեւ սփռուած «Արեւ»ը, որ մեր ընտանիքին նախասիրած թերթն էր, ստուգելու համար հայերէնի ընթերցանութեան իմ կարողութիւնս:

Ես այն ժամանակ նախակրթարանի առաջին կամ երկրորդ դասարանն էի. սկսայ բարձրաձայն կարդալ: Ամէն անգամ որ կմկմայի, հայրս օգնութեան կը հասնէր:

Կարդալու ինքնավստահութիւնս հետզհետէ զօրանալով, սկսայ սահուն եւ անսխալ կարդալ:

Երբ կարդալու քննութիւնս աւարտեցայ, ուրախութենէս կը խայտայի, քանի որ ես ալ «մեծերուն պէս» պիտի կարենայի թերթ կարդալ:

Նախակրթարանի վերի կարգերուն մէջ եղած շրջանիս, այլ Կիրակի առաւօտ մը, հայրս զիս կանչեց, թելադրելով որ պատրաստուիմ իր հետ դուրս երթալու: Մեր երթալիք տեղին մասին գաղափար չունէի: Հանրակառքը, որ նստած էինք, ինծի անծանօթ փողոցներէ կ'անցնէր: Վերջապէս անխօս իջանք այն կայարանը, զոր հայրս նկատի ունէր:

Հայրս, ըստ երեւոյթին ծանօթ ըլլալով թաղին, անոր ներքին փողոցներուն մէջ առանց տատամսումի արագօրէն կը քալէր, մինչեւ որ հասանք բարձր պատերով շրջափակուած տարածութեան մը, որուն մուտքի դրան վրայի հայագիր արձանագրութեան մէջ նշմարեցի ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ բառը:

Հօրս ետեւէն յիշեալ դռնէն ներս մտնելով, աչքիս առջեւ կը պարզուէր կեանքիս մէջ մինչ այդ չտեսած մէկ տեսարանս: Չորս կողմս կանոնաւոր շարքերով տապանաքարեր կային, որոնց մեծամասնութեան վրայ գրուած էին «Աստ հանգչի» բառերը, որոնց կը հետեւէին անուն մը եւ մականուն մը, ինչպէս նաեւ ծննդեան եւ մահուան թուականներ: Կարգ մը տեղեր գմբէթաւոր տունիկներ կային, ինչպէս նաեւ մետաղեայ ցած ցանկապատեր կամ ալ արձաններ:

Վերջապէս հայրս կանգ առաւ եւ ես ալ իրեն հասայ:

Առաջին անգամ ըլլալով, աչքիս առջեւ յանկարծակի պարզուող տեսարանը դժուար եղաւ տանիլը եւ ողջ էութեամբ ցնցեց զիս:

Հայրս կանգնած էր գերեզմանի մը առջեւ, որուն տապանաքարին վրայ գրուած էին մօրս եւ Աւետիս մօրեղբօրս անունները՝ հարկ եղած մանրամասնութիւններով:

Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով գերեզմանատուն

կ'այցելի եւ առաջին գերեզմանը, որ մօտէն կը տեսնէի, մօրս գերեզմանն էր:

Պահը ծանր էր, տարբեր մտածումներ եւ զգացումներ իրար կը խաչաձեւէին:

Պատանեկան մտածողութեամբ, երեւակայութիւնս կը մղէր զիս մտածելու թէ կարելի է արդեօք, որ մայրս իր յաւիտենական ճամբորդութենէն պահ մը դադրելով, այս տապանաքարին տակէն դուրս գայ եւ զիս համբուրէ ու զգուէ, ապա վերադառնայ իր ճակատագրին:

Կը մտածէի որ եթէ մեզի հետ ողջ ըլլար, ինչ ձեւ պիտի առնէր մեր կեանքը:

Եւ այսպէս յորդահոս զգացումներ կը խեղդէին զիս:

Վերջապէս, ասանդական «Հայր մեր»ով եւ հանգուցեալներուն հոգիներուն համար կատարուած բարի մաղթանքներով, բաժնուեցանք մօրմէս եւ մօրեղբօրմէս:

Ու այսպէս վերջացաւ գերեզմանատան մեր անխօս այցելութիւնը:

Տեղի սղութեան պատճառով կը բաւականանանք այսքանով:

Վերադառնալով միջընտանեկան հարցերուն, պէտք է ըսել, թէ երկար տարիներ հարկ եղան հարազատներու միջեւ յարաբերութիւնները բնականոնի մօտ հասցնելու համար:

Ընտանիքին մէջ դեռահասները սկսած էին մեծնալ եւ կեանքի իրողութիւնները ատլի առարկայականօրէն կը դիմագրաւէին:

Իսկ երէցները, ատլի իմաստուն դառնալով, կացութիւնը դարձեալ բնականոնի կը վերածէին:

Որպէս լրացում կ'աւելցնենք, թէ հայրս մահացած է 1965-ին, Մամին 1992-ին, իսկ երէց եղբայրս՝ Գէորգը, 1999-ին:

Քոյրս՝ Մարի, կ'ապրի Լոս Անճելըսի մէջ: Իսկ տողերս գրողը կը մնայ իր ծննդավայրին մէջ եւ 1968-ին ամուսնացած է լիբանանահայ մանկավարժուհի Օր. Սեդա Սամուէլեանի հետ:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉ

Գալուստեան Ազգային Մանկապարտէզը երկյարկանի շէնք մըն էր, որ կը գտնուէր 1908-ին Պուլաքի թաղամասը փոխադրուած Գալուստեան Ազգային Վարժարանի մայր շէնքին կից: Մայր շէնքը կը բաղկանար տղոց եւ աղջկանց առանձին բաժիններէ՝ անկախ բակերով:

Մանկապարտէզի շէնքը աղջկանց մասնաշէնքին մօտ էր եւ անոր շրջափակին մէջ կառուցուած:

Մանկապարտէզը զուգընթաց էր, այսինքն՝ իւրաքանչիւր կարգի համար երկու դասարան նախատեսուած էր:

Դպրոցական կեանքիս առաջին քայլերը առած եմ Գահիրէի Գալուստեան Ազգային Մանկապարտէզին մէջ, աւարտելով անոր քառամեայ ընթացքը՝ յաջորդաբար յաճախելով Բողբոջ, Կոկոն, Ծաղիկ եւ Նախապատրաստական դասարանները:

Ուսուցչուհիները նուիրուած անձեր էին եւ կը գորգորային աշակերտներուն վրայ:

Կը յիշեմ թէ ամէն ուսուցչուհի իր դասարանի աշակերտութեան պատմութիւններ կը պատմէր, զորս աշակերտները հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէին:

Երբ Ս. Ծնունդը, Ս. Զատիկը մօտենային, անոնց նախօրէններուն կը սկսէր պատմելու գործընթացը:

Կը յիշեմ նաեւ ձեռային աշխատանքները, գունաւոր խաւաքարտեր կտրելը, անոնց վրայ գունաւոր թելեր կարելը, յետոյ այդ թելերուն շրջագիծին մէջ զանազան գոյներով ներկելը:

Այլ խօսքով, աշակերտները երբ կ'աւարտէին մանկապարտէզին ընթացքը, բաւական գիտելիքներ ամբարած կ'ըլլային: Ի միջի այլոց, սորված կ'ըլլային բազմապատկութեան աղիւսակը եւ ծանօթացած՝ այբբենարանի գիրերուն մեծամասնութեան:

ՅԱԻԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ - Ա.

Մանկապարտեզին մէջ շատ հաճելի պահեր ունեցած եմ: Սակայն, իմ մանկական ուղեղիս վրայ ծանր ազդած են երկու երեւոյթներ, որոնք տասնամեակներ շարունակ եւ մինչեւ այսօր ալ յիշողութեանս մէջն են եւ իրենց ներկայութիւնը կը զգացնեն:

Առաջին երեւոյթը կը վերաբերի Գալուստեան Վարժարանի Մանկապարտեզին:

Հոն կային «ծրի»ներ, այսինքն՝ դասակարգը այն աշակերտներուն, որոնց ծնողները նիւթական միջոցներ չունէին եւ իրենց ընկերային մակարդակն ալ բացառիկ չէր:

Այս «ծրի»ներով կը զբաղէին վարժարանին Տիկնանց Խնամակալութեան անդամուհիները, կէսօրները տաք ճաշ մը ապահովելով եւ տօնական օրերուն հանդերձեղէն հայթայթելով:

Մէկ խօսքով, Խնամակալութիւնը անոնց անտանելի կեանքը քիչ մը տանելի կը վերածէր: Մինչեւ հոս շատ լաւ, բայց երբեմն Խնամակալութեան տիկիները քննութեան կ'ենթարկէին «ծրի»ներուն գլուխները եւ կը պատահէր որ ոջլոտած պարագաներ գտնուէին:

Արդիւնքը այն կ'ըլլար որ ոջլոտած երախաներուն մազերը կը խուզէին եւ յատուկ վառուած կրակի մը մէջ կը նետէին ու ենթականերուն գլուխները կ'ածիլէին:

Շատ ծանր էին այն ապրումները, զորս կ'ունենայի նման պարագաներու առջեւ, երբ ենթակաները ընկճուած հոգեվիճակով, որ յստակօրէն կը ցոլար իրենց դէմքերուն վրայ եւ աչքերուն մէջ, վերստին կը միանային իրենց ընկերներուն:

Աւելորդ է ըսել, թէ աղջիկները իրենց հանդէպ առնուած քայլերը շատ անելի դժուար կը տանէին:

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Գալուստեան Ազգային Վարժարանի մանկապարտէզի բաժինը աւարտելէ ետք, որոշում առնուեցաւ որ տարրական ուսումն առնելու համար յաճախեմ Գահիրէի Վիեննական Մխիթարեան Վարժարանը:

Հակառակ անոր որ երէց եղբայրս ալ, մօրս ողջութեան, քանի մը տարի յաճախած էր նոյն վարժարանը, իմ մասիս առնուած որոշումին մէջ, վստահաբար, Մամին դէր ունեցած է:

Արդարեւ, ինչպէս որ նախապէս յիշուեցաւ, ան կաթողիկէ էր եւ թերեւս կը մտածէր, թէ երբ վարժարան մը պիտի յաճախէի ուր կաթողիկէ ուսում կը ջամբէին, յոյս կար որ ես ալ կաթողիկէ կրնայի ըլլալ: Կարճ ժամանակ յետոյ, այս ենթադրութեան ճիշդ ըլլալը կը փաստուէր:

Յամենայն դէպս, Մխիթարեան Վարժարանի մէջ կաթողիկէ ըլլալը կամ չըլլալը մեծ տարբերութիւն չէր ըներ, որովհետեւ մթնոլորտը զուտ հայկական էր:

Կաթողիկէ դաւանանքին մասին շարունակելէ առաջ, նախ ծանօթանանք Վիեննական Մխիթարեան Վարժարանին, որ 1935-ին կառուցուած էր հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին կից ընդարձակ հողամասին վրայ, որուն հասցէն էր Հարէթ Քինիսէթ Էլ Արման (Հայոց եկեղեցիի նրբանցք):

Այս վերջինը կը բաժնուէր քաղաքի կեդրոններէն համարուող Աթապա հրապարակէն եկող Ֆարուք (այժմ Էլ Կէյշ) մայր պողոտայէն:

Վարժարանին մէջ երեք կամ չորս վարդապետ, փորձառու ուսուցիչ եւ ուսուցչուհիներու օժանդակութեամբ, կը վարէին կրթական գործը:

Վարժարանը բարձրագոյն նախակրթարանի կարգավիճակ ունէր, հիմնականին մէջ ֆրանսական հակումով

ծրագիր մը, անկախաբար խնամուած հայերէնի ծրագրէն:

Իմ հոն գտնուած տարիներուն (1946–1951), աշակերտութեան թիւը շուրջ 120 էր:

Կ'արժէ առ ի տեղեկութիւն յիշել, թէ այդ շրջանին (1947) կը փակուէր Մանիսալեան Քոյրերու Վարժարանը եւ Գահիրէի մէջ ազգային վարժարաններէն զատ կը գործէին միայն Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Վարժարանը եւ Արարատեան Գոլէճը:

ՄԵԾ ԱՊԱԳԱՅ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԱՅՍ ՊԱՏԱՆԵԱԿԸ ՇԱՏ ԴԺԳՈՀ ԵՆՔ ԻՐ ՎԱՐՔԷՆ

Մխիթարեան Վարժարանի դասընթացքներուն կը հետեւէի եւ ճիգ չէի խնայեր բարձր նիշեր բերելու համար:

Արդիւնքը այն եղաւ որ երկրորդ դասարանի Ա. Կիսամեայի նիշերը տեղեկացնող վիճակացոյցին մէջ տնօրէնութիւնը գրած էր հետեւեալ նշումը. «ՄԵԾ ԱՊԱԳԱՅ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԱՅՍ ՊԱՏԱՆԵԱԿԸ»:

Ըստ ընդունուած կարգին, տունէն պէտք էր առ ի գիտութիւն ստորագրէին վիճակացոյցը եւ վերադարձնէին: Այդպէս ալ եղաւ:

Սակայն, տունէն չմոռցան ի պատասխան տնօրէնութեան գնահատանքին, վիճակացոյցին մէջ աւելցնելու հետեւեալ պարբերութիւնը. «ՇԱՏ ԴԺԳՈՀ ԵՆՔ ԻՐ ՎԱՐՔԷՆ», եւ ես ստիպուած էի վիճակացոյցը, այդ երկու ներհակ գնահատումներով, տանիլ վարժարանին տնօրէնութեան:

Այս խօսքերը տասը տարեկան պատանեակի մը մասին են, զոր տասնամեակներու հեռաւորութենէն դիտելով պէտք է զինք անաչառօրէն դատել:

Հարցը կարելի ամփոփումով պատմելու համար ըսեմ, թէ իմ ծնած տարիներու սկիզբը մեր ընտանիքը կը բնակէր ընդարձակ տան մը մէջ: Թէեւ մանրամասնութիւնները չեմ

գիտեր, սակայն լսած եմ որ տանտիրոջ հետ հորս ունեցած տարակարծութեան մը պատճառով, ստիպուած եղած է ընտանեօք այդ տունը ձգելու եւ հապճեպով ասելի փոքր բնակարան մը փոխադրուելու՝ «Ժամանակաւոր» կերպով:

Նկատի ունենալով որ այդ շրջանը կը զուգահիւսէր Համաշխարհային Երկրորդ Պատերազմի օրերուն եւ անգլիական գրաման ուժերը Գահիրէի մէջ տեղաւորուած ըլլալով, բնակարանային սուր տագնապ մը ստեղծած էին ու դիրին չէր կարճ ժամանակի մէջ յարմար բնակարան մը գտնել: Այդ «Ժամանակաւոր» բնակարանին մէջ, ուր կը բնակէինք, մնացինք 15 տարի:

Այդ «Ժամանակաւոր» բնակարանը, ուր անցուցած եմ մանկապատանեկան գիտակցական կեանքս, իր տարածութեամբ կը բաղկանար մէկ հատ սովորական չափով եւ մէկ հատ ալ փոքր չափով ննջասենեակներէ:

Ասոնց միջեւ կար այլ սենեակ մը, որ դարձեալ փոքր էր չափով եւ ցերեկը որպէս նստասենեակ կը գործածուէր, իսկ գիշերը՝ իբր ննջասենեակ:

Բնակարանին մնացեալ բաժիններուն՝ խոհանոց, բաղնիք եւ այլն, նուազագոյն կարելի տարածութիւնը յատկացուած էր:

Այդ սենեակը գետինը փռուած գորգով, ի չգոյէ այցելուներու կամ դուրսի աշխարհին հետ կապի, կը վերածուէր իմ «գլուխգործոց»ներուս բեմահարթակին, ուր բեմադրիչը եւ դերակատարները նոյն անձն էր, յանձին ինձի, եւ ես ներկայացումներուս մէջ կ'օգտագործէի հազագային երաժշտութեան բոլոր կարելիութիւններս:

Մամին, այսպիսի պարագաներուն խուսափելու համար աղմուկէն, իր սենեակը կը քաշուէր: Կը մնար քոյրս, որ դժուար թէ իր սենեակին մէջ կարողանար բանտարկուիլ, իսկ սենեակին դուռը բանալու պարագային կը դիմագրաւէր ահաւոր աղմուկ մը:

Իսկ ես իմ մէջս կուտակուած բոլոր աշխուժութիւնս կը դրսեւորէի յիշեալ բազմազան եւ բազմաձայն բեմադրութիւններով:

Ահա այս է պատճառը որ տունէն «ՇԱՏ ԴԺԳՈՂ ԵՆՔ ԻՐ ՎԱՐՔԷՆ» պարբերութիւնը կը հալածէ մեր հերոսը:

Եզրակացնելով այս բաժինը, կրնանք ըսել թէ գրուածը թէեւ կրնայ ճիշդ ըլլալ, սակայն գրուած տեղը սխալ էր:

Այս բաժինը վերջացնելէ առաջ, կ'ուզենք նշել որ այդ բնակարանին մէջ մեր կեանքին առնչուած կարգ մը պատկերներ կը յամենան մեր յիշողութեան մէջ:

Ինչպէս ըսուեցաւ, այդ ժամանակաշրջանը Համաշխարհային Երկրորդ Պատերազմի շրջանն էր եւ յաճախ թշնամի օդանաւերը կը բռնաբարէին Գահիրէի երկինքը:

Այդ առիթներով կը լսուէին ահազանգեր:

Տուեալ կացութեան մէջ մեր ընտանիքին բոլոր անդամները կ'արթննային եւ շէնքին վարը կ'իջնէին:

Նոյնն էր բոլոր դրացիներուն պարագան:

Ահազանգի միջոցին կը տեսնէինք զօրաւոր լուսարձակներով փնտռուող թշնամի օդանաւերուն, որոնք ենթակայ էին ոմբահարման:

Գործողութիւններու աւարտին, համապատասխան անդորրազանգ կը տրուէր եւ շէնքին բնակիչները կը վերադառնային իրենց տուները՝ գիշերուան մնացեալ մասը խաղաղօրէն ամբողջացնելու:

Այդ դէպքերը, հերթականօրէն կրկնուած ըլլալով, շատ տպաւորած են զիս:

Հայրս այդ տարիներուն միշտ իր բաճկոնը կախուած կը պահէր մասնաւոր աթոռի մը վրայ, ուր կը դնէր տան եւ գործին բանալիներու տրցակը, պատրաստ ըլլալու համար որեւէ հաւանական վտանգ դիմագրաւելու:

Ա. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Երբ 1949 թուականը եկաւ, ես 11 տարեկան աշակերտ մըն էի եւ երեք տարի կաթողիկէ վարժարան յաճախելէ յետոյ, կաթողիկէ դաւանանքին հետ առնչութիւն չունէի:

Մամին, իր ծրագիրը հետապնդելով, իմ թեկնածութիւնս կը դնէր առաջին հաղորդութիւն առնելու համար:

Կաթողիկէ եկեղեցին աւանդութիւնը ունի փոքրիկներու (8-9 տարեկան) առաջին հաղորդութիւնը տալէ առաջ, լուսաբանելու զանոնք Ս. Հաղորդութեան էութեան մասին:

Այս գործընթացը սովորաբար կը սկսի շաբաթական հերթականութեամբ, ամէն տարուայ Յունուարէն մինչեւ Ս. Զատիկ, որմէ յետոյ կիրակնօրեայ պատարագի մը ընթացքին փոքրիկները՝ աղջիկ եւ տղայ, վերէն վար սպիտակ հագուած, կ'առնէին իրենց Ա. հաղորդութիւնը:

Ս. Հաղորդութեան գաղափարին ընտելացման եւ ծանօթացման համար, փոքրիկներուն կը բացատրէին Ս. Հաղորդութեան արարողութեան մէջ գործածուող եզրերը, ինչպէս՝ **«Առէք կերէք այս է մարմին իմ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի...»** եւ **«Արբէք ի սմանէ ամէնեքեան, այս է արին իմ նորոյ ուխտի...»**:

Ես տարիքով մեծ էի (11 տարեկան), երբ սկսայ հետեւիլ առաջին հաղորդութեան մասին ջամբուած դասերուն:

Մամին անշուշտ գոհ էր երեւոյթէն, իսկ ինծի համար այս դասերը գիտելիքներու զարգացման առիթ մըն էին:

Մխիթարեան վարժարանը հայադրոշմ վարժարան մըն էր եւ իմ մանկական գիտակցութեանս մէջ տարբերութիւն չէր ըներ մէկ կամ միւս դաւանանքին պատկանելու հարցը:

Երբ առաջին հաղորդութիւնը առի, միւս հաղորդուող ընկերներու հետ, սպիտակ հագուստներով յիշատակի խմբանկար մը նկարուեցանք, որուն մէջ իմ ներկայութիւնս ոչխարներու հօտի մը մէջտեղ կանգնած ընծուղտի մը տպաւորութիւնը կը ձգէր:

Բայց մեր Մամին գոհ էր եւ կարեւորը այդ էր:

*ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ (ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ)
ԱԻԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ*

Մխիթարեան Վարժարան յաճախելուս վերջին տարին՝ 5-րդ դասարանին, տնօրէնութիւնը պաշտօնի կոչեց արաբերէն դասաւանդող տիար Արամ Մովսէսեանը:

Ան շատ երիտասարդ էր եւ բժշկութեան ուսանող՝ Գահիրէի համալսարանը:

Անիկա ինքզինքին նպատակ ըրած էր որ մեր դասարանի աշակերտները մասնակցին եգիպտական նախակրթարանի աւարտական քննութիւններուն, եւ յաջողելու պարագային, նախնական ուսման վկայական ստանալով, իրաւունք պիտի ունենային իրենց երկրորդական ուսումը շարունակելու:

Աշակերտներէն 5 հոգի իր ղեկավարութեամբ մասնակցեցանք այս ծրագրին եւ յաջողեցանք:

Իմ պարագայիս, կեանքի ուղղութիւնս փոխուեցաւ եւ երկրորդական ուսումնա շարունակեցի եգիպտական ծրագրով, Մարոնիթ Հայրերու Վարժարանին մէջ մինչեւ պաքալորէա:

ՅԱԻԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ -Բ.

Գալուստեան Մանկապարտէզի վերաբերեալ նախորդ գլուխին մէջ իբր ցաւալի երեւոյթ խօսուած էր «ծրի»ներու մասին:

Այժմ կը ներկայացուի երկրորդ ցաւալի պարագայ մը, որ կը պարզուէր Մխիթարեան Վարժարանին մէջ:

Վարժարանին տնօրէնութիւնը դիւրութիւն կու տար աշակերտներուն իրենց տուներէն բերած կէսօրուայ ճաշերը առաւօտեան յանձնելու վարժարանի ճաշարանին, որպէսզի որոշեալ ժամուն տաքցուած ճաշերը յանձնուէին իրենց տէրերուն:

Այս սովորական ընթացքին մէջ երկու փոքրիկ եղբայրներու համար տարբեր կարգադրութիւն մը եղած էր:

Ամէն կէսօր, փոքրակազմ կին մը կու գար այդ երկու փոքրիկներուն ճաշը բերելու եւ կը սպասէր անոնց ճաշի աւարտին, որպէսզի ամանները առնէ եւ վերադառնայ տուն:

Այս ամէնուն մէջ յատկանշական էր կնոջ երեւոյթը:

Այդ փոքրակազմ կինը իր իրանով իննսուն աստիճան կքած էր մէջքին վրայ, աչքերը միշտ գետնին յառած, այր մարդու կօշիկներ հագած, մոխրագոյն մազերը խոփ եղած, երեսը խորշոմներով ծածկուած լռակեաց մէկն էր եւ փոքր աշակերտները վախով կ'անցնէին իր քովէն:

Ժամանակ մը ետք տեղեկացանք, թէ ան հայ որբուհի մըն էր, որ Մեծ Եղեռնի արհաւիրքը տեսնելէն վերջ, Եգիպտոս եկած էր եւ «որդեգրուած» եգիպտահայ ունեւոր ընտանիքի մը կողմէ, որ զինք կը պահէր մինչեւ այդ օրերը:

Այդ կնոջ արտաքինը ուղղակի հոգեկան ճնշումի կ'ենթարկէր զինք դիտող անձը:

Արդարեւ, ան խտացեալ պատկերն էր Մեծ Եղեռնի եւ որբութեան տարիներու դառնութիւնը ապրած զոհերուն:

ՄԱՐՈՆԻԹ ՀԱՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԱԼ ՄԱՏՐԱՍԱ ԱԼ ՄԱՐՈՆԻԱ

Տարրական ուսման (նախակրթարան) պետական վկայականով զինուած՝ երկրորդական ուսումնա պիտի շարունակէի յարմար վարժարանի մը մէջ:

Ընտրութիւնը այս անգամ եւս կ'երթար կաթողիկէ Մարոնիթ Հայրերու Վարժարանին:

Մեր սիրելի Մամին, երբ զիս վարժարան տարաւ մուտքի արձանագրութեան համար, չմոռցաւ տնօրէնութեան փափաք յայտնելու որ իրեն պէս ինծի ալ կաթողիկէ դաստիարակութիւն ջամբեն:

Նորութիւնը այն էր որ այդ տարեշրջանին գիշերօթիկ աշակերտ պիտի ըլլայի վարժարանին մէջ:

Երբ որ վարժարանին դասաւանդութիւնները սկսան եւ ես առիթ ունեցայ ծանօթանալու ինծի պէս գիշերօթիկ միւս աշակերտներուն, յուսախաբութիւնս մեծ եղաւ:

Մեր հաւաքական ննջարանին մէջ 10 հոգի ընդունելու յարմարութիւններ կային, իրաքանչիւր աշակերտի համար՝ մէկ անկողին եւ մէկ պահարան:

Երեկոյեան, երբ քնանալու կը մտնէինք, աշակերտները գիշերուան մութին մէջ անկողինէ-անկողին կ'ունենային բարձրաձայն խօսակցութիւն, որուն բովանդակութիւնը կը վերաբերէր իսլամական եւ գիւղական նիւթերու:

Երբ անկողինէ-անկողին տարուող գեշերային խօսակցութիւնը ակամայ կը լսէի, մտքիս մէջ կ'արժարժուէր Մամին կողմէ տնօրէնութեան յայտնուած փափաքը որ ինծի կաթողիկէ դաստիարակութիւն ջամբեն:

Գաղափար մը տալու համար, ըսեմ թէ մեր 10 հոգինոց հաւաքական ննջարանին մէջ կը գտնուէին մէկ հայ եւ մէկ ղպտի, մնացեալները գիւղական շրջաններէ եկած

մեծահարուստ հողատերերու զաւակներն էին կամ արաբական երկիրներէ եկած աշակերտներ, որոնք մայրաքաղաքի գիշերօթիկ վարժարանի մը մէջ ուսանելով, կ'ականկալէին իրենց կենցաղագիտական մակարդակը բարելաւել եւ այդ ձգտումին մէջ ձեռքով կեղուելիք արմաւը կը ջանային դանակ եւ պատառաքաղով կեղուել եւ ուտել:

Վարժարանը, անսալով մեր սիրելի Մամին փափաքին, զիս դրաւ Մարոնիթ Եկեղեցիին պատկանող եղբայրակցութեան մը մէջ:

Այն քանի մը անգամներուն որ եղբայրակցութեան հաւաքներուն ներկայ եղած եւ եղբայրակցութիւնը վարող աղանդամուլ վարդապետին քարոզները մտիկ ըրած եմ, այդ տարիքիս (13 տարեկան) համոզուած եմ որ այդ ճամբով Մխիթարեանի մէջ արմատաւորուած հայութիւնս վրայ պիտի տամ եւ այդ բերումով անվերադարձ քաշուած եմ եղբայրակցութենէն՝ հակառակ վարժարանին տնօրէնութեան եւ տան հետապնդումներուն:

Անշուշտ, կարելի չէ այս երեւոյթը ընդհանրացնել բոլոր Մարոնիթ հայրերուն վրայ, որոնց մէջ կային հեզահամբոյր, ազնիւ եւ նուիրեալ անձեր:

Եղբայրակցութեան հարցով ունեցած ծայրայեղ ընդվզումս տեսնելով, Մամին, բարեբախտաբար, շատ կարճ ժամանակ մը վերջ դադրեցաւ դաւանանքի հարցով զբաղելէ:

Այս ձեւով յստակ կը դառնար, թէ կը վերադառնայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին գիրկը:

Հոս տեղին է նշել, որ բացի դաւանանքի հարցէն, Մամին հիմնական դեր ունեցած է մանկութեանս եւ պատանեկութեանս շրջաններուն նկարագրիս դրական գիծերուն կազմաւորումին եւ զարգացումին մէջ, որուն համար երախտապարտ եմ իրեն:

Կ'ուզէի նաեւ շեշտել, թէ եղբայրակցութեան հարցը զուտ

անձնական էր եւ որեւէ վերապահութիւն չունիմ կաթողիկէներու հանդէպ, որոնց բոլորն ալ կը յարգեմ:

Իսկ հայախօս հայ կաթողիկէները, ինչպէս կ'ըսեն, «գլխուս վրայ տեղ ունին»:

Գիշերօթիկ եղած շրջանիս ամենէն հաճելի պահերն էին կէսօրէ վերջ ժամը 4-8 երկարող սերտողութեան յատկացուած պահերը:

Այդ միջոցին, օրուան պարտականութիւնները աւարտելէ վերջ, ազահօրէն կը կարդայի հայ հեղինակներու դասական եւ ժամանակակից գործերը, զորս ինծի կը հայթայթէր իմ դասարանս գտնուող երկու հոգինոց գրասեղանին վրայ քովս նստող հայ դասընկերս, իրենց ընտանեկան ճոխ գրադարանէն:

Յաջորդ տարեշրջանէն սկսեալ դուրս եկայ գիշերօթիկի կարգավիճակէն եւ ուսումս շարունակեցի միւս աշակերտներուն նման մինակս հանրային փոխադրամիջոցներ գործածելով, քանի որ տարիքս այլեւս կը թոյլատրէր նման քայլի մը դիմելու:

Խօսելով Մարոնիթ Հայրերու Վարժարանը յաճախող հայ աշակերտներուն մասին, պէտք է ըսել որ երկրորդական բաժնի հինգ դասարաններէն իւրաքանչիւրին մէջ 3 կամ 4 հայ աշակերտներ կային, որոնք ակնբախօրէն յաջողակ ըլլալով՝ ամէն տարի կ'անցնէին յաջորդ դասարանը:

Զբօսանքի պահերուն ամբողջ տեսողութեան հայ աշակերտները հայերէն խօսելով, քով-քովի կու գային եւ կը մնային, ինչ որ հայկական հաստատութեան մը մէջ գտնուելու խաբկանքը կու տար մեզի:

Հետեւաբար, զուտ հայկական վարժարանէ մը խմբովին գալով՝ զուտ օտար աշակերտներ ունեցող վարժարան մը, օտար շրջանակի մէջ գտնուելու զգացումը չունէինք:

ՅԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ - Գ.

Այնպէս կը թուի թէ ամէն վարժարան որ յաճախած եմ, հաճելի երեւոյթներու կողքին ականատես եղած եմ ցաւալի երեւոյթի մը, որ գամուած կը մնայ յիշողութեանս մէջ:

Գալուստեան Մանկապարտէզի եւ Մխիթարեան Վարժարանի մէջ ներկայացող ցաւալի երկու երեւոյթներուն կողքին, Մարոնիթ Հայրերու Վարժարանին մէջ այլ ցաւալի երրորդ երեւոյթի մը կը հանդիպէի, որ ինծի համար անակնկալ էր, բայց հարցին տեղեակ մարդիկ պատահածը անսովոր երեւոյթ չէին նկատեր:

Մարոնիթ Հայրերու Վարժարանին մուտքը այնպէս մը շինուած էր որ բակ տանող դուռի մուտքին երկու կողմերը մէկական սենեակ կառուցած էին՝ նրբանցք մը ստեղծելով:

Այդ սենեակներէն մին կը գործածուէր դռնապանին կողմէ որպէս բնակարան, իսկ հանդիպակաց սենեակը կը գործածուէր որպէս գրասենեակ:

Օր մը, երբ վարժարանէն ներս կը մտնէի, անակնկալ տեսարանի մը առջեւ գտնուեցայ:

Դռնապանը իր բնակարանին մէջ, նստած տեղը, չուանի մը մէկ ծայրը կապած էր ոտքին բթամատին, իսկ չուանին միւս ծայրը ամրացուցած էր իր բերնին մէջ փտած ատամին, եւ ոտքին թափ տալով կը փորձէր իր բերնին մէջ գտնուող ատամը հանել:

Այս գործողութեան ընթացքին իր ձեռքը ունէր թիթեղէ փոքրիկ տուփ մը, զոր կը գործածէր բերնէն հոսող լորձունքը եւ արհւնը անոր մէջ թքնելու:

Չեմ գիտեր թէ ուրիշներ ինչ կը մտածեն պարզուող պժգալի այդ երեւոյթին մասին:

Դարմանումի ձեւը, հոգ չէ թէ ենթական ինք զատած էր, շատ նախնական էր, կարելի է նոյնիսկ ըսել՝ անմարդկային:

Այսպիսի երեւոյթի մը պարագային ի՞նչ է պատասխանատուն, որուն հետ հարկ է հաշուի նստիլ:

Այս երեւոյթին մէջ այնքան քննարկելի տարրեր գոյութիւն ունին որ անոնց պարզ թուումը զայն ինքնաբերաբար կը դասէ ցաւալի երեւոյթներու շարքին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Երկրորդական ուսումիս ասարտին, կեանքիս հորիզոնին վրայ կային երեք այլընտրանքներ, որոնցմէ մին պէտք է ընտրէի.

1. Համալսարանական ուսումնաշարունակել:

2. Հօրս հետ աշխատելով դերձակութեան ասպարէզը ընտրել:

3. Այլ բնոյթի գործի ասպարէզի մէջ իմ ճամբաս գտնել: Ինծի համար շատ կարեւոր էր նիւթապէս անկախ ըլլալը, որպէսզի ազատ ըլլայի որեւէ ուղղութեամբ շարժելու: Այլընտրանքներու առաջին եւ երկրորդ տարբերակները չէին համապատասխաներ հետապնդուած նպատակին: Համալսարան ընդունուած էի, հաշուակալութեան բաժինը, սակայն, հարկ եղած դիմումնագիրը եւ ուզուած այլ պաշտօնաթուղթերը չէի ներկայացուցած, մտածելով որ նուազագոյնը չորս տարի եկամուտ պիտի չունենայի:

Հօրս երազն էր որ երեսնամեակ մը առաջ իր հիմնած հաստատութիւնը գոյատեւէ եւ անլի զարգանայ:

Սակայն, ինչ որ ինչ չիրականացաւ, որովհետեւ, սկսելու համար, ես անձնապէս խանդավառ չէի դերձակութեան ասպարէզով, իսկ անլի կարեւորը՝ շատ փոքր տարիքիս (4-5 տարեկան) աչքերէս մէկը վնասուած էր եւ այդ տարիքէն սկսեալ ակնոց կը գործածէի: Տեսողական այս վիճակը բնականօրէն չէր թոյլատրեր դերձակութեամբ զբաղիլ:

Կը մնար երրորդ այլընտրանքը՝ գործի ասպարէզին մէջ պաշտօն մը գտնել:

Քանի մը տեղ ժամանակաւոր գործեր ստանձնելէ յետոյ, պաշտօնի կոչուեցայ փոքր դրամատան մը մէջ, քրոջս աշխատած օտար ընկերութեան մը տնօրէնին միջնորդութեամբ եւ անշուշտ նշանակումէն առաջ հարկ եղած

քննութիւնները յաջողութեամբ անցնելէ վերջ:

Թուականը Մայիս 1957 էր:

Դրամատունը փոքր ըլլալուն՝ առիթը ունեցայ անոր բոլոր բաժիններուն մէջ աշխատելու եւ երեք տարի յետոյ, ձեռք բերած նախնական փորձառութեանս համար, դրամատան կողմէ հինծի երկրորդ կարգի ստորագրութեան իրաւունք³ տրուեցաւ:

Այս եղելութիւնը տեղի կ'ունենար մօտաւորապէս Օգոստոս 1960-ին:

1961-ի Յուլիս 20-ին յատուկ օրէնքով կ'ազգայնացուէին երկրին մէջ գործող բոլոր դրամատուները եւ բոլոր ոլորտներուն մէջ աշխատող մեծ եւ միջակ հաստատութիւնները:

Կացութիւնը, բնականաբար, մեր դրամատան մէջ եւս փոխուեցաւ:

Արդարեւ, ան ազգայնացուելէ քիչ ժամանակ անց, միացուեցաւ այլ ազգայնացուած դրամատան մը, որ իր կարգին միացուեցաւ ուրիշ պետական դրամատան մը եւ ձուլուեցաւ անոր մէջ:

Աշխատանքի պայմանները փոխուեցան:

Կառավարութիւնը թոշակներու նոր դրութիւն մը որդեգրեց, զուգահեռ պետական պաշտօնեաներու թոշակային դրութեան, ուր իւրաքանչիւր աշխատատեղի թոշակը կապուած է իր վկայականին եւ աշխատանքի տարիներուն, առանց նկատի առնելու աշխատանքին տարողութիւնը կամ անոր որակը:

Այլեւս բացարձակապէս տեղ չկար անձնական նախաձեռնութեան:

³ Դրամատունը իր պաշտօնեաներուն, ըստ իրենց փորձառութեան, առաջին կամ երկրորդ կարգի ստորագրութեան իրաւունք կու տայ: Այսպէս, դրամատունը կը պարտաւորուի երկու առաջին կարգի կամ մէկ առաջին եւ մէկ երկրորդ կարգի ստորագրութիւններով: Երկու երկրորդ կարգի ստորագրութիւններ չեն պարտաւորեցներ հաստատութեանը:

Այս փակուղիէն դուրս գալու համար, նոյն ժամանակ քանի մը միջոցներու դիմեցի, որոնցմէ առաջինը եղաւ Էյն Շամս Համալսարանի Համագործակցական Հիմնարկի Վարչագիտական բաժնի երկամեայ դասընթացքին հետեւիլը, զոր աւարտեցի 1964-ին:

Այդ տարիներուն եգիպտական համալսարանական դրութիւնը այնպիսին էր, որ եթէ տարի մը համալսարան մտնելու ձեր իրաւունքը չգործածէիք, յաջորդ տարի չէիք կրնար անով համալսարան մտնել:

Հետեւաբար, մտածեցի Գահիրէի Ամերիկեան Համալսարան դիմել եւ ունեցած վկայականս իբր սանդխամատ գործածել՝ հետեւելու համալսարանին դասընթացքներուն:

Համալսարանի դիւանապետին (ռէճիսթար) հետ կարճառօտ հանդիպումէ մը ետք, ան համաձայն գտնուեցաւ զիս համալսարան ընդունելու, տնտեսագիտութեան հետեւելու համար, մասնակի ժամանակով աշակերտի կարգավիճակով, քանի որ պաշտօնեայ էի եւ չէի կրնար ամբողջական ժամանակով ներկայ գտնուիլ դասընթացքներուն:

Հակառակ ինծի տրուած այս բացառիկ առիթին, կարելի չեղաւ անկէ լիովին օգտուիլ:

Մասնակի ժամանակով աշակերտի իմ ներկայութեան ժամերուն տրուող պահերը թիով սակաւ էին եւ անոնցմէ ընտրուելիք նիւթերը սահմանափակ, ինչ որ կը խափանէր յարմար ժամանակամիջոցի մը ընթացքին բաւարար վարկանիշ ձեռք բերելու կարելիութիւնը:

Դասընթացքներուն հետեւեցայ 1965 եւ 1966 տարիներուն (չորս կիսամեայ) եւ 1966-ին, երբ հրաժարեցայ դրամատան պաշտօնէս ու ստանձնեցի շուկայի գործ, զգացի որ դժուար պիտի ըլլայ ուսման ժամերս համադրել շուկայի աշխատանքային ժամերուն հետ:

Հետեւաբար, ստիպուած եւ ականայ հրաժարեցայ համալսարանական ուսումնա շարունակելէ, յոյսս դնելով ընթերցման եւ ընդհանուր զարգացման վրայ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՂԻՍԱԿԱՆ

Շարունակելէ առաջ, կը թուի թէ կարիքը կայ փակագիծ մը բանալու, լուսաբանելու համար տպարանատէր ըլլալու պարագաները:

Արդարեւ, շատեր առանց գիտնալու ներքին մղումիս պատճառները, զարմանքով ինծի հարց տուած են, թէ ինչպէ՞ս գիրի եւ գրականութեան մօտ ըլլալով եւ շուրջ տասը տարի դրամատան մը մէջ աշխատելէ վերջ, յանկարծ յայտնուած եմ տպագրական ասպարէզին մէջ:

Ճիշդ է որ գիրի եւ գրականութեան մօտ եղած եմ, բայց անիկա չէ պատճառը տպագրական ասպարէզի ողիսականիս, որուն պատմութիւնը հետեւեալն է:

Օր մը, բարեկամ մը, որ գիտէր թէ անձնական գործ մը ունենալու հետամուտ եմ, տեղեկութիւն տուաւ թէ հայ տպարանատէր մը, որ յառաջացեալ տարիք մը ունէր, կը փափաքէր գործէն քաշուիլ՝ տպարանը ծախելով գնորդի մը, որ պահէր հաստատութիւնը:

Անմիջապէս հետաքրքրուեցայ այդ հարցով, եւ նկատեցի որ տպարանը ծախելու համար նշանակուած գինը տրամաբանական էր, բայց իմ կարելիութիւններէս վեր:

Ես ալ իմ կարգիս այս հարցին մասին տեղեկացուցի մօտիկ բարեկամի մը, որ դրամատան մը մէջ պաշտօնեայ էր եւ ինծի պէս կը տառապէր «փակուղիի կաշկանդումներէն»:

Ի միջի այլոց տեղեկացայ, թէ այդ տպարանը իր ետին ունէր շուրջ յիսուն տարուան պատմութիւն մը եւ հայերէն գիրերու ճոխ հաւաքածոյ:

Խնդրոյ առարկայ տպարանը, որ ւսանդական տպագրական դրութեամբ (գրաշար տպագրութիւն) կը գործէր, երկուքով գնեցինք եւ գործընկերս իր պաշտօնէն հրաժարեցաւ, որպէսզի կարենայ հետեւիլ տպարանին գործունէութեան:

Մօտ տարի մը փորձել էտք, երկուքով այն եզրակացութեան եկանք որ այդ տպարանին եկամուտը, տիրող տնտեսական ոչ բարենպաստ պայմաններուն բերումով, մէկ անձի համար բաւարար էր, սակայն անոր եկամուտը երկու անձի նիւթական տարրական պահանջները չէր բաւարարեր:

Այս եզրակացութենէն մեկնելով, ընկերոջս հետ որոշեցինք տպարան մը եւս գնել:

Նման որոշում մը, ի չգոյէ բաւարար հնչուն դրամի, վտանգ կը սպառնար մեր առաջին տպարանին: Երկրորդ տպարանը, զոր գնեցինք հայ տպարանատէրէ մը, որ Գանատա պիտի գաղթէր, փոքրիկ տպարան մըն էր, որ դարձատիպ դրութեամբ (օֆսէթ) գործող մեքենայ մը ունէր, որուն կողքին կար գունաբաժանումի սարքաւորում:

Ես եւս պարտէի հրաժարիլ դրամատան պաշտօնէս, հետեւելու համար նոր տպարանին գործունէութեան: Այդպէս ալ եղաւ:

Անձնապէս ես յոյս դրած էի Ընկերային Ապահովագրութեան Հիմնարկէն, ըստ օրինի, դրամատան մէջ աշխատած տարիներուս փոխարէն գանձելի փոխհատուցումի մը գումարին վրայ:

Վիճակը նոյնն էր գործընկերոջս պարագային, որ իր կարգին աշխատանքի աւարտին գանձելի փոխհատուցումին կը սպասէր:

Պատահեցաւ անսպասելին:

Աշխատանքի Նախարարը, որուն ենթակայ էր Ընկերային Ապահովագրութեան Հիմնարկը, գործող օրէնքին ներհակ եւ քննադատորոշող մը հրապարակեց, ըստ որուն աշխատանքի վերջաւորութեան փոխհատուցումներու վճարումը կը դադրեցուէր:

Այս ապօրինի որոշումին դէմ երկու տարիէն աւելի տեսող դատէ մը վերջ, կարելի եղաւ մեր իրաւունքը վերականգնել եւ փոխհատուցումներու գումարները գանձել:

Բնականաբար հնչուն դրամի չգոյութիւնը իր ժխտական դերը ունէր մեր գործունէութեան վրայ:

Ասոր կողքին հարկ է նշել որ առաջին տպարանը, զոր գնած էինք, մնայուն յաճախորդութիւն ունէր, ինչ որ պարագան չէր երկրորդ տպարանին:

Այդ բերումով, առաջին տպարանը ամէն շաբաթ կը փակէր երկրորդին բացերը, ինչ որ կարճ ժամանակի մէջ պատճառ դարձաւ երկրորդ տպարանը նիւթական դժուարութեան մատնելու:

Այս վիճակը խոստմնալից ապագայ մը չէր նախատեսեր այդ հաստատութեան:

Այնպէս պատահեցաւ որ օր մը յաճախորդ մը դժուար գործ մը բերաւ երկրորդ տպարանին եւ զայն ստացաւ շատ բարձր մակարդակով:

Աշխատանքի ընթացքին, իր բոլոր դժուար պահանջներուն ընդառաջ երթալով, տեսակ մը բարեկամութիւն ստեղծուեցաւ երկու կողմերուն միջեւ:

Յաճախորդը օր մը հարց տուաւ թէ՛ ինչու չեմ ընդարձակեր տպարանը: Բացատրեցի թէ՛ այդ քայլը կարելոր գումարներու կը կարօտի, ինչ որ մատչելի չէ ներկայիս:

Շատ արագ ընկալելով կացութիւնը, ըսաւ թէ՛ ինք առանց ակնկալութեան, պատրաստ է հարկ եղած գումարը տրամադրել այդ ծրագրին:

Երբ մեր բարեկամին բացատրեցի թէ՛ տպարանը սեփականութիւնն է երկու բաժնետէրերու, թոյլ չտուաւ խօսքս շարունակել, ըսելով թէ՛ ինք կ'ուզէ միայն մէկ հոգիի հետ գործ ունենալ: Կը ստեղծուէր անյարմար կացութիւն մը, որուն մասին գաղափար մը տուի ընկերօջս:

Այդ կացութիւնը երկուքով քննելով, տեսանք որ մեր կամքէն անկախ պատճառներով, կրնանք հարկադրաբար բաժնուիլ իրարմէ, մանաւանդ երբ նկատի առնենք մեր երկրորդ տպարանին նիւթական անբաղձալի վիճակը:

Չեմ գիտեր թէ զուգադիպութիւն էր կամ այլ բան, որ նոյն

միջոցին, հայ տպարանատեր մը կ'ուզէր վաճառել իր տպարանը, երկրէն վերջնականապէս մեկնելու եւ արտասահման գաղթած զաւակին միանալու:

Խնդրոյ առարկայ այս երրորդ տպարանը հետաքրքրական էր, որովհետեւ դարձեալ դարձատիպ դրութեամբ գործող տպագրական մեքենայ մը ունէր, յար եւ նման երկրորդ տպարանին մէջ գտնուող մեքենային եւ անոր տպագրական չափին:

Ծախու դրուած երրորդ տպարանին տիրոջ հետ համաձայնելէ եւ մեր բարեկամին տրամադրած գումարը ու զայն վերադարձնելու եղանակը ճշդելէ վերջ, նոր տպարանը գնելու կարելիութիւնը ստեղծուեցաւ:

Այս նոր իրադրութեան ընդառաջ, գործընկերս եւ ես հարկադրուեցանք իրարմէ բաժնուիլ՝ մեր հաշիւները կարգաւորելէ վերջ:

Յաջորդ քայլը եղաւ երրորդ տպարանին գնումը:

Բաւական ժամանակ առին նոր տպարանին ներքին բաժանումները կարգաւորելը, երկրորդ տպարանին լուծարքը եւ գործիքներուն փոխադրութիւնը նոր տպարան:

Այս բոլորը տեղի կ'ունենար մօտաւորապէս 1969-ի Մայիսին:

Բաւական մեծ ճիգով կարելի եղաւ նոր տպարանը աշխատցնել եւ դանդաղօրէն ընդարձակել:

Նոր տպարանը կոչուեցաւ AFRICAN PRESS եւ մասնագիտացած է գլխաւորաբար դարձատիպ տպագրութեամբ տուփերու եւ պիտակներու արտադրութեան մէջ:

Հաստատութիւնը, տարիներու ընթացքին զարգանալով, 1996-ին վերածուեցաւ եգիպտական անանուն բաժնետիրական ընկերութեան մը՝ AFRICAN PRESS S.A.E. անունով, որուն Վարչական Խորհուրդին նախագահն եմ սկիզբէն մինչեւ այսօր:

«ԱՐԵՒ»Ի ԱՆԴԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ⁴

1957-ի կէսերուն անդամակցած եմ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան (ՀԳՄ), ուր քանի մը ամիս յետոյ մասնակցած եմ վիճաբանական երեկոյի մը: Անոր հետեւած է, 1958-ին, նշանակումս որպէս միութեան վարչութեան օժանդակ: Նոյն ատեն մաս կազմած եմ միութեան երիտասարդաց յանձնախումբին, անոր ատենապետը դառնալով 1963-ին:

Այս յանձնախումբը կազմակերպած է տարեկան երիտասարդական մշակութային մրցանքներ:

Նոյն յանձնախումբը 1965-ին, Մեծ Եղեռնի յիսնամեակին առիթով, կազմակերպած է դասախօսութիւններ, հարցամրցումներ եւ վիճաբանական երեկոներ:

Այս ձեռնարկներուն իրագործումին համար, յանձնախումբը վայելած է աջակցութիւնը Երուանդ Ազատեանի (Է. Կոտալազեան) եւ Ալիս Տեփոյեանի:

1960-ական թուականներու սկիզբները, քանի մը տարի, մասնակցած եմ 1959-ին սկսած ՀԳՄ-ի ամէնամեայ երիտասարդական փառատօններու կազմակերպութեան: Տարբեր առիթներով ելոյթներ ունեցած եմ դասախօսութիւններով եւ հանդիսավարութիւններով:

1960-ականներու կէսերուն յիշարժան են երկու բացառիկ հանդիսութիւններ: Առաջինը՝ 1964-ին, «Արեւ»ի շրջանակին կողմէ կազմակերպուած Ալեքսանտր Սարուխանի 40-ամեայ գործունէութեան յրբեւեանին նշումն էր: Երկրորդը՝ 1965-ին, «Արեւ»ի հիմնադրութեան յիսնամեակին նշումը: Օտար պաշտօնական հիւրերու ներկայութեան կայացած նշեալ հանդիսութիւններուն մասնակից եղած եմ անոնց երկլեզու հանդիսավարութեամբ:

⁴ Արտատպուած, փոքր յապաւումով, հեղինակին նոյն խորագրով յօդուածէն, լոյս տեսած ««ԱՐԵՒ»-ի Արարերէն Ամսօրեայ Յանդիսութիւն» գիրքին մէջ: Գահիրէ 2014, էջ 122-129:

Այդ երկու հանդիսություններուն մղիչ ուժը եւ գլխաւոր կազմակերպիչն էր Երուանդ Ազատեանը, որ այդ շրջանին ձեռնհասօրէն կը վարէր «Արեւ»ի խմբագրութիւնը:

Հայ Գեղարուեստասիրաց Միութեան վարչութեան անդամ եղած եմ 1960-ին, 1972-ին եւ 1974-ին (վերջինին մէջ որպէս փոխ ատենապետ): Այդ շրջանին, վարչութեան մաս կազմած տարիներուս եւս, օժանդակութիւնս բերած եմ միութեան իրերայաջորդ վարչութիւններուն:

1960-ական թուականներուն, ՀԳՄ-ի կազմակերպած երիտասարդական մրցանքներու մրցանակաբաշխութեան հանդիսութեան, կը հրաւիրուէին ազգային զոյգ վարժարաններու տնօրէններ Տիգրան Պապիկեանը եւ Իսկուհի Տատրեանը: Նախագահական ամպիոնին վրայ անոնց կը միանային Համբարձում Գարայեանը եւ Վահագն Տեփոյեանը՝ համապատասխանաբար Կոկանեան Սրահի եւ ՀԳՄ-ի ատենապետերը:

Տարեկան այդ հանդիսություններուն, որպէս ՀԳՄ-ի երիտասարդացի ատենապետ, բացման խօսքով ելոյթ կ'ունենայի եւ կը վարէի հանդիսութիւնը:

Համբարձում Գարայեան, Կոկանեան Սրահի ատենապետն ըլլալու կողքին, այդ շրջանին ՌԱԿ-ի Եգիպտոսի առաջին դէմքն էր: Ան ոգեշնչող բեմբասաց մըն էր, գնահատուած կուսակցական ղեկավար մը, որ իր խոնարհ վեհութեամբ յարգանք կը ներշնչէր շրջապատին:

Իր հետ շատ քիչ շփում ունեցած եմ: Ինք Հելիոպոլսոյ արուարձանին մէջ գտնուող Կոկանեան Սրահը կը յաճախէր, իսկ ես քաղաքին կեդրոնը գտնուող ՀԳՄ-ի ակումբը գրեթէ ամէնօրեայ յաճախող մըն էի: Սակայն, այնպէս կը թուի, թէ ան ղեկավարի բնորոշ ուշադրութեամբ կը դիտէր քայլերս:

Առիթով մը, երբ առանձին էինք, աշխատեցաւ համոզել զիս որ աշխատակցիմ «Արեւ»ին: Ես երբեք համոզուած չէի որ կրնամ գրող մը ըլլալ եւ փորձեցի բացատրել թէ՛ այդ ուղղութեամբ յարմարութիւն չունիմ:

Գարայեան 1967-ին Գահիրէի Քաղաքական Ժողովին

փոխ ատենապետն էր (կուսակցականները այդ ժամանակ ատենապետ չէին ըլլար): Ան առաջարկեց որ Ուսումնական Խորհուրդին անդամ ըլլամ:

Առաջարկուածը ինձի համար բոլորովին անակնկալ էր եւ ես յաւակնութիւնը չունէի որ կրնամ օգտակար ըլլալ: Այսուհանդերձ, եղած առաջարկն ընդունեցի՝ Ուսումնական Խորհուրդին գործերը «սորվելու» մտադրութեամբ:

Այդ քայլին յաջորդեց իր նոր առաջարկը, որ մաս կազմեմ Հայ Ազգային Հիմնադրամի վարչութեան, որուն ատենապետն էր:

Այս առաջարկը եւս զարմանալի էր, նկատի ունենալով որ ՀԱՀ-ը կուսակցութեան Եգիպտոսի տնտեսական հիմնախարիսխն էր եւ անոր վարչութեան անդամները կ'ընտրուէին վեթերան կուսակցականներէ կամ կուսակցութեան համար շատ վստահելի տարրերէ:

Երիտասարդ սերնդակիցներուս մէջ առաջինն էի որ այդ ժողովին մաս կազմելու կը հրաւիրուէի: Բոլոր վարչակիցներս տարիքով ինձմէ 20 կամ 30 տարիով աւելի տարեց էին:

1968-ին Գարայեան անժամանակ կերպով 61 տարեկանին կը մահանար՝ խոր պարապ մը ձգելով իր ետին: ՀԱՀ-ի ատենապետի պաշտօնին մէջ զինք կը փոխարինէր վարչութեան փոխ ատենապետ Մեսրոպ Գոյումճեանը, որ երեք տարի պաշտօնավարելէ յետոյ վարչութենէն կը քաշուէր: Իր ատենապետութեան շրջանին «Արեւ» օրաթերթը կը փոխանցուէր ՀԱՀ-ին:

Մեսրոպ Գոյումճեանի քաշուելէն վերջ, 1971-1972 տարեշրջանին ՀԱՀ-ի վարչութեան դիւանը կազմելու ժամանակ, անակնկալօրէն տողերս գրողին «պարտադրեցին» ատենապետութիւնը:

Սիրով կատարեցի ինձի վստահուած պարտականութիւնը. սակայն ներքնապէս ունէի այն համոզումը, որ «Արեւ»ի պատասխանատու մարմնին ատենապետը պարտէր կուսակցական ըլլալ: Երկու տարեշրջան ատենապետ մնալէ յետոյ, 1973-1974 տարեշրջանէն սկսեալ քաշուեցայ այդ

պաշտօնէն, շարունակելով անդամ մնալ ՀԱՀ-ի վարչութեան մինչեւ 1977, որմէ յետոյ այլ պարտականութիւններով ծանրաբեռնուած ըլլալով, քաշուեցայ վարչութենէն, սակայն միշտ մօտիկ մնալով անոր:

1975-ին, որպէս «Արեւ»ի շրջանակի համակիր, անդամ ընտրուեցայ Գահիրէի Թեմական Ժողովին: Այդ բերումով, յաճախ կը մասնակցէի ՌԱԿ-ի ղեկավար մարմնի՝ Շրջանային Վարչութեան խորհրդակցութիւններուն: Այդ մասնակցութիւնը սովորութեան վերածուեցաւ յաջորդ շուրջ 15 տարիներուն: Հարկ է ճշդել, թէ նշեալ մարմնի նիստերուն կը մասնակցէի Շրջանային Վարչութեան ատենի ատենապետ Վահագն Տեփոյեանի հրաւերով:

Այժմ, «Արեւ» օրաթերթի աշխատակցութեան անցնելով, նշեմ թէ 1950-ականներու վերջերէն սկսեալ, շուրջ երկու տարի, օրաթերթին էջերուն մէջ օրական երկու սիւնակով թարգմանաբար ներկայացուցած եմ եգիպտական արաբալեզու երեք գլխաւոր օրաթերթերու ընդհանուր ուղղութիւնը ցուցնող առաջնորդող յօդուածները:

Ատկէ յետոյ, շուրջ 16 տարուան ընթացքին գրած հատու կենտ յօդուածներէս վերջ, 1976-ի Դեկտեմբերին վերսկսած եմ աշխատակցիլ «Արեւ»ին, եգիպտահայ թեմի առաջնորդական ընտրութեան առիթով գրելով 14 յաջորդական յօդուածներու շարք մը: Ապա շարունակած եմ անկանոն հերթականութեամբ գրել մինչեւ 1979:

1984-էն 1987 յօդուածներ ստորագրած եմ «Լուսանցքի Վրայ» խորագրով շաբաթօրեայ սիւնակին մէջ: Այդ յօդուածներուն մեծամասնութիւնը 2010-ին լոյս տեսած է «Յետադարձ Անդրադարձ» խորագրեալ հատորով:

1985-ին, Արմենական Կուսակցութեան 100-ամեակին առիթով կազմակերպուած հանդիսութեան, խումբ մը երիտասարդներ մղած եմ որ Արմենական Կուսակցութեան սկիզբէն մինչեւ ՌԱԿ-ի հիմնադրութիւնը երկարող հանգրուաններուն պատմութիւնը ցուցադրեն լուսաբանական գունաւոր տախտակներով (այդ ժամանակ համակարգչային դիւրութիւնները դեռ տարածուած չէին):

Այդ միջոցառումէն յետոյ, տողերս գրողին առաջարկով եւ կուսակցութեան ղեկավարութեան հաւանութեամբ, կազմուեցաւ Արմենական Շարժում անունով երիտասարդական մարմին մը, որուն նպատակն էր երիտասարդ սերունդին մօտ ազգային գիտակցութիւնը զարգացնել:

Այդ շարժումին անդամներուն միջոցով, ժամանակակից Թուրքիոյ գաւառներու հայութեան տխուր վիճակը ներկայացնող Հոլանտական հեռատեսիլին պատրաստած «Բաբելոնի Աշտարակ» անունով տեսերիզը հայերէնի թարգմանուեցաւ եւ ցուցադրուեցաւ:

Շարժումին մասնակիցներուն շաբաթական հանդիպումներով տեղեկութիւններ կը փորձէի փոխանցել՝ հիմնուելով հայ մամուլին մէջ արժարժուած հայութեան վերաբերեալ այժմէական նիւթերու վրայ:

Այդ ընթացքին քննարկուող նիւթերուն առընչուած տուեալներու մասին տեղեկութիւններ կը տրուէին (խորհրդածողովներ, միջազգային դաշնագրեր, վկայութիւններ, ջարդեր եւ ցեղասպանութիւն, ինքնապաշտպանութեան մարտեր, կուսակցութիւններու հիմնադրութեան պարագաներ եւ ուղղութիւններ, նուիրապետական աթոռներու մասին տեղեկութիւններ, Տեղասպանութեան ճանաչման համար տարուած աշխատանքներ եւայլն):

Այդ շարժումին անդամները նոյնպէս կազմակերպեցին քանի մը հրապարակային հարցամրցումներ ազգային-պատմական տարբեր հարցերու մասին: Նման ձեռնարկներու բարձրակէտը հանդիսացաւ 1988-ին ՀԳՄ-ի մէջ Ղարաբաղի հիմնահարցին մասին կազմակերպուած հրապարակային ասուլիսը, երբ Ղարաբաղի խնդիրը տակաւին անձանօթ էր հասարակութեան:

Այդ ասուլիսին ընթացքին, տողերս գրողին ղեկավարութեամբ եւ ատենավարութեամբ, Արմենական շարժումէն երիտասարդներ ներկայացուցին Ղարաբաղի հարցին էութիւնը, մեծադիր պաստառի վրայ ցուցադրելով այդ առիթով հաւաքուած պատմական տուեալներ, քարտէսներ եւ վիճակագրական ցուցակներ: Նոյնպէս, մանրամասն

տեղեկություններ տրուեցան հարցին քաղաքական զարգացումներուն մասին:

Արմենական շարժումին նպատակն ըլլալով երիտասարդներուն մօտ ազգային գիտակցութիւնը զարգացնել, այդ հանգրուանէն անցնող երիտասարդը, եթէ ներքին համոզումով եւ նուիրումի ոգիով փափաքէր կուսակցական դառնալ, ազգային տարրական գիտելիքներով զինուած պիտի ըլլար: Իսկ եթէ չփափաքէր կուսակցական դառնալ, գոնէ գիտակից ազգային մը պիտի ըլլար:

Տեղին պիտի ըլլար նշել, թէ «Արեւ»ի շրջանակին մէջ առաջինը չէի որ նման աշխատանք կը տանէի:

Իմ տեղեկութիւններու սահմանին մէջ, նախապէս, 1960-ական թուականներուն սկիզբը, նման աշխատանք տարած է Աւետիս Եսփուճեանը՝ ՀԳՄ-ի պատանեկան շարժումին հետ: Իսկ աւելի ուշ, 1970-ականներուն, այդպիսի աշխատանք տարած են Վահագն եւ Ալիս Տեփոյեանները:

* * *

Տողերս գրողը վերը նշուած գործունէութիւնը սիրով եւ համոզումով տարած է, մեկնելով զուտ ազգային մտահոգութիւններէ, առանց կուսակցական համակարգին մէջ աթոռ, դիրք կամ իշխանութիւն ունենալու որևէ ակնկալութեան: Իր խառնուածքով եւ աշխարհահայեացքով կուսակցական համակարգին յատուկ կարգապահական պարտադրութիւններու ենթարկուելու յարմարութիւն չունենալով, նախընտրած է պահպանել ազատ եւ անկաշկանդ արտայայտութեան իր իրաւունքը:

Կուսակցական չըլլալով հանդերձ, «Արեւ»ական մը եղած է, եթէ կարելի է նման եզր մը գործածել, մաս կազմելով անկուսակցական այն զանգուածին, որ տասնամեակներ շարունակ հաւատարմօրէն հետեւած է «Արեւ»ի որդեգրած առողջ ազգային ուղեգիծին:

Այդ զանգուածը գնահատած է հայրենիքի եւ հայ եկեղեցիին հանդէպ մեր ժողովուրդին սէրը արծարծ պահելու «Արեւ»ին մնայուն դերակատարութիւնը:

Նոյնպէս, այդ զանգուածը խորապէս գնահատած է մեր ժողովուրդը արկածախնդրութիւններէ հեռու պահելու «Արեւ»ին զգօն եւ շրջահայեաց մօտեցումները:

* * *

Հարկ է, սակայն, նշել թէ «Արեւ»ի մէջ լոյս տեսած որոշ յօդուածներու առիթով երբեմն «անհասկացողութիւններ» ունեցած են թերթին ատենի պատասխանատու մարմնին կարգ մը անդամներուն հետ:

Մասնաւորաբար, 1984-1987 տարիներուն «Արեւ»ի մէջ լոյս տեսած յօդուածներու պարագային, յաճախ զանոնք ցոյց տուած են կուսակցութեան Եգիպտոսի ատենի առաջին դէմքին՝ Վահագն Տեփոյեանին, որպէսզի զանոնք կարդայ՝ նախքան անոնց լոյս ընծայումը:

Վահագն Տեփոյեանը համայնագիտական ուղեղով, փայլուն մտաւորական մըն էր, որ իր գերազանց մտաւոր կարողութիւններուն կողքին, բարձրօգի, առողջ մտածելակերպի տէր, լայնախոհ կուսակցական ղեկավար մըն էր, որուն քով ազգային գետնի վրայ ընդհանրականը հատուածականէն առաջ կու գար:

«Արեւ»ի մէջ գրած յօդուածներու մասին իր հետ որեւէ տարակարծութիւն չեմ ունեցած: Դժբախտաբար, սակայն, «Արեւ»ի պատասխանատու մարմնին մէջ բոլորը չէ որ նոյն մօտեցումը ունէին:

Օրինակ, երբ յօդուած գրած են եգիպտահայ համայնքին մէջ հայերէն լեզուի ուսուցման անբաղձալի վիճակին մասին, ոմանց մօտ դժգոհութիւն յառաջացած է: «Արեւ»ի պատասխանատու մարմնի անդամ մը, որ նոյն ատեն ՌԱԿ-ի շրջանակի ակումբներէն մէկուն ատենապետն էր (այժմ ողբացեալ), այդ առիթով իր կարծիքը կը յայտնէր, ըսելով. «Հոգս չէ որ առաջնորդարանը կամ դպրոցը այրին. կարելորը մեր ակումբն է. պէտք չէ մարդ նեղացնել»:

Այլ պատասխանատու մը, դժգոհ՝ համայնքին մէջ անընդունելի նորամուտ աւանդութեան մը որդեգրումին դէմ գրուած քննադատական մէկ յօդուածէս, կը պնդէր թէ նման յօդուածներ պէտք չէ գրել՝ մարդ չնեղացնելու համար:

Երբ դիտել կու տայի թէ մամուլը պարտականութիւն ունի հանրային կարծիքին ճիշդ ուղղութիւն տալու, սխալ երեւոյթները քննադատելով եւ անոնց արմատաւորումին դէմ պայքարելով, կը պատասխանէր, թէ քննադատութիւնը որեւէ օգուտ չունի. «Այսպէս եկած է, այսպէս ալ պիտի երթայ, եւ գրելով ոչինչ կարելի է փոխել»: Ճակատագրի դառն հեգնանքն այն էր, որ դերերը շրջուած էին: Ոչ կուսակցական մը կը փորձէր մամուլի դերին կարեւորութեան մասին համոզել թերթին պատասխանատու կուսակցական ղեկավարը, որ ենթադրուած է բարոյական ժառանգորդն ըլլալ Թէքէեանին եւ անոր գաղափարակից յաջորդներուն...:

Ամէն անգամ որ կը լսեմ «մարդ չնեղացնելու» յանկերգը, անմիջապէս կը յիշեմ ստորեւ ներկայացուող Թէքէեանի պատգամը:

...Չենք յարգեր յետոյ այն հայերը, ինչ դիրքի եւ մտքի տէր ալ ըլլան, որոնք զուրկ են ազնւութեան, զոհողութեան եւ ժողովրդասիրութեան ոգիէ: Կ'ատենք մանաւանդ վատութիւնը, նկարագրի տկարութիւնը, եւ կը պաշտենք յանդուզն ու քիչ մըն ալ խիզախ բնաւորութիւնները, որոնք իրենց գաղափարին պաշտպանութեան համար ամէն նկատում ոտքի տակ կ'առնեն, իրենց բարեկամները վշտացնելու չեն վախնար եւ անժողովրդական ըլլալը հոգերնին չեն ըներ: Ազգ մը, որ այսպիսի անհատականութիւններ շատ չի հաշուեր իր ծոցին մէջ, դժբախտ ազգ մըն է, եւ մեր ազգը այս տեսակէտով ալ քիչ մը շատ դժբախտ է:

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Մէջբերում «Արեւ»ի առաջին թիւին մէջ լոյս տեսած «Մեր Առաջին Խօսքը» խորագրեալ առաջնորդող յօդուածէն:

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ (Հ Գ Մ)

(ՄԵՐ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՍԻՐԱՅԸ)

Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնը, որ հիմնուած էր Գահիրէի մէջ 1920-ին, Եգիպտոսի համազօրներէն էր Թէքէեան Մշակութային Միութեան, որ հիմնուած է Պէյրութի մէջ 1947-ին:

ՀԳՄ-ի հիմնադրութեան նախաձեռնողը եղած է Կայծակ Պօզաճեանը: Հնագոյն անդամներէն էին Սահակ Թիրապեանը, Էօժէն Բաբազեանը, Վարդգէս Գարտաշեանը, Ալեքսանդր Սարուխանը եւ Երուանդ Սիմոնօֆը:

ՀԳՄ-ը իր երկու եգիպտահայ քոյր միութիւններուն հետ՝ Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւն, Ալեքսանդրիա, հիմնուած 1902-ին եւ ՀԱՀ Կոկանեան Սրահ, Հելիոպոլիս, հիմնուած 1949-ին, ունէր կուսակցական (ՌԱԿ), համակիր եւ չէզոք անդամներ, որոնք միասնաբար կը ներկայացնէին ՌԱԿ-ի Եգիպտոսի արտաքին ճակատը:

ՀԳՄ-ը, քանի մը տեղերու մէջ գործելէ վերջ, 1955-ին կը հաստատուէր Գահիրէի կեդրոնը գտնուող Տուպրէ փողոցին (այժմ Սոլիման Էլ Հալապի) Հայ Տուն Բաժնետիրական Ընկերութեան սեփականութիւնը եղող եօթը յարկանի շէնքին մէջ, որուն մակերեսը կը հաւասարէր ամէն յարկի վրայ գտնուող չորս ընդարձակ յարկաբաժիններու միացեալ տարածութեան:

Հոս կ'արժէ յիշել, թէ շէնքին կառուցման ժամանակ, ՀԱՀ-ը (Հայ Ազգային Հիմնադրամ), Հայ Տուն Ընկերութեան մեծագոյն բաժնետէրերէն էր եւ իր կեդրոնը կը գտնուէր շէնքին մուտքին, վերելակներուն կողքին գտնուող յարկաբաժինի մը մէջ, ուր կը տպուէր «Արեւ» օրաթերթը, իր սեփական տպարանին մէջ:

Գեղարուեստասիրացը կ'ունենար շէնքին եօթներորդ

յարկին ամբողջութիւնը, ինչպէս նաեւ ութերորդ յարկի տանհիքին լման տարածութիւնը:

Ձմեռնային գործունէութիւնը տեղի կ'ունենար եօթներորդ յարկին վրայ, իսկ ամառնայինը՝ ութերորդին: Այս գործունէութեան կը հետեւէր հանրաձանօթ ամէնօրեայ թեթեւ ճաշի սպասարկութիւնը:

Եօթներորդ յարկին ամբողջութիւնը բաժնուած էր գրեթէ երկու հաւասար կէսերու:

Առաջին կէսը կը պարփակէր մայր սրահէն աւելի փոքր քովնտի սրահ մը, որ նուիրատուին անունով կը կոչուէր Մերճանեան Սրահ, եւ կը գործածուէր աւելի փոքր ձեռնարկներու համար, հայկական ոճով շինուած գեղեցիկ գրադարան մը, քարտուղարութեան սենեակը, մթերանոցը, խոհանոցը եւ բաղնիքները:

Միւս կէսը կը պարփակէր մայր սրահը, որուն անունն էր Թէքէեան Սրահ, փոքր շքամուտք մը, ինչպէս նաեւ 3-4 հոգիի սպասարկելու նախատեսուած փոքրիկ *սյան* մը:

Այս սրահին առաստաղը ճարտարապետական գեղեցիկ եւ գործնական լուծումով մը բարձրացուած էր շուրջ 1,5 մետրով, ինչ որ թէ՛ մթնոլորտի մաքրութեան կը սատարէր եւ թէ՛ փոքր տարածութեամբ սրահ մը աւելի մեծ ցոյց կու տար:

Եօթներորդ յարկի այդ 1,5 մետր բարձրութիւնը, ութերորդ յարկին վրայ կու տար երկու հարթակ, մէկը Թէքէեան Սրահին տարածութեամբ, աւելի բարձր եւ մեկուսի, միւսը՝ մնացեալ ամբողջ տանհիքին բնական բարձրութեամբ:

Պէտք է ըսել, թէ տանհիքը շրջապատուած էր 2 մետրէն աւելի բարձրութեամբ փայտէ ձողերով ցանկապատով մը, որուն վրայ փորուած կիրառական արուեստի զանազան նմոյշները գեղեցիկ տեսք մը կու տային տանհիքին, որ ի միջի այլոց կը կոչուէր «ՀԱՅ ՏԱՆԻՔ»:

«ՀԱՅ ՏԱՆԻՔ»ը ընդհանուրին մէջ ամառնային

գործունեության իտէալ վայրն էր:

Եգիպտահայ բոլոր սրահներն ալ ներկայանալի են, սակայն պէտք է ըսել թէ, միջակ տարողութեամբ այս սրահը (250 հոգի), իր պարզ եւ զուսպ վայելչութեամբ, կը համարուէր եգիպտահայ սրահներէն ամենէն սիրունը, ձեռով մը «հաւասարներու մէջ նախամեծար»ը:

Ձեւին մասին խօսելէ յետոյ, կարելի է նաեւ խօսիլ բովանդակութեան մասին:

Արդարեւ, ՀԳՄ-ը մշակոյթի աշխոյժ փեթակ մըն էր, որ բնաւ չէր հանդարտեր եւ իրեն կը քաշէր թէ՛ մտաւորականութիւնը եւ թէ՛ լայն հասարակութիւնը:

Անոր գործունեութեան անգիր ժամանակացոյցը կը պարփակէր, ըստ կարելիութեան եւ յարմարութեան, շաբաթը վեց կամ եօթը օր:

Այսպէս, Երկուշաբթի օրերը տեղի կ'ունենար միութեան տիկիներու հաւաքը, ուր շատ հինէն եկող աւանդութեան մը համաձայն, սուրճ եւ թէյ խմելով, կ'աշխատէին լուծել վարչութեան կարգ մը տաղտկալի գործերը: Հետաքրքրականը այն էր որ տիկիներու այս խմբաւորումը իր սպառած սուրճին եւ թէյին արժէքը կը փոխանցէր փոքր յաւելումով մը յատուկ սնտուկի մը, այսպէս գոյացնելով համեստ դրամագլուխ մը, որ կրնար երբեմն գործածուիլ միութեան անմիջական փոքր պահանջներուն համար: Տիկիներու այս խումբը նոյն ատեն տոկուն ողնայարն էր միութեան բազմաթիւ ձեռնարկներուն, կազմակերպուած շքասեղաններուն:

Երեքշաբթի օրերը կը գումարուէին մայր վարչութեան ժողովները եւ այդ ժողովներն էին որ կը ղեկավարէին միութեան բոլոր յանձնախումբերուն գործունեութիւնները:

Չորեքշաբթի օրերը յատկացուած էին մշակութային ելոյթներու: Ընդհանրապէս ելոյթ կ'ունենային համայնքին մէջ գտնուող մտաւորականներ, երբեմն ալ Սփիւռքէն կամ հայրենիքէն ժամանած անձնաւորութիւններ:

Հինգշաբթի օրերը ձեռնարկներու յատկացուած էին, ըստ առիթի եւ յարմարութեան:

Ուրբաթ օրերը, միութեան երիտասարդաց յանձնախումբը իր ժողովները կը գումարէր երիտասարդներու յատուկ յայտագիրներ պատրաստելու համար: 60-ական թուականներուն այդ յանձնախումբին մաս կը կազմէին հետեւեալները՝ Սուրէն Աճէմեան, Եդուարդ Զարդարեան, Պերճ Թէրզեան, Աւետիս Եափուճեան, Նորայր Տէօվլէթեան եւ Լորիս Գայսէրլեան:

Այդ օրերուն նաեւ կը կազմակերպուէին փոքրիկներու հաւաքոյթները՝ Սիրվարդ Թոգաթլեանի հսկողութեան ներքեւ:

Շաբաթ օրերը յատկացուած էին պատանիներուն, որոնց կը ջամբուէին ազգային գիտելիքներ: Մեծ արձագանգ գտած «Պատանեկան Շարժում»ը հիմնուեցաւ 23 Յուլիս 1957-ին: Կը կազմակերպուէին գրական, գիտական, մարզական բովանդակութեամբ երեկոյթներ: Կը հրատարակուէր «Պատանիին Ձայնը» ձեռագիր պատի թերթը: «Շարժում»ը, հետագային ընդարձակուելով, 1959-ին վերածուեցաւ «Ուսանողական Մարմն»ի, որ նպատակադրեց ունենալ նաեւ տպագիր գրական հարթակ: Գաղութի մտաւորականութեան կողմէ եղան քաջալերողներ՝ յանձինս Տիկին Վիքթորիա Արշարունիի («Երիտասարդ Մտաւորականներու Ձայնը» յօդուածը տպագրուեցաւ «Արեւ» օրաթերթին մէջ 1959 Մարտի 18-ին), Մեթր Ստեփան Շահպագի («Երիտասարդ Գրողներու Ուշադրութեան» յօդուածը «Արեւ»ի մէջ լոյս տեսաւ 1960 Յունուարի 30-ին) եւ «Արեւ»ի խմբագիր Էտմոն Կոտալազեանի, որ «Երիտասարդ Ձայներ» խորագրով ամսական մէկ էջ տրամադրեց օրաթերթին մէջ նոր սերունդի ներկայացուցիչներուն:

Որոշ ժամանակ անց, գրական հակում ունեցող պատանիները որոշեցին հրատարակել «Շարժում»

խորագրով իրենց սեփական խմորատիպ պարբերականը: Լոյս ընծայուեցաւ երկու թիւ (1960-ի Մարտին եւ Ապրիլին), որոնց մէջ իրենց գրական փորձերով հանդէս եկան Վահան Անտոնեանը (պատասխանատու գրական մարմնի), Հերմինէ Պասմաճեանը, Օշին Էմճեանը, Անդրէաս Պալըզճեանը, Յովհաննէս Տէր-Պետրոսեանը: Աշխատանքներուն կը հետեւէին Աւետիս Եափուճեանը եւ Պերճ Թէրզեանը:

Այս սովորական զբաղումներուն կողքին, սրահին անդամ երիտասարդները կը մասնակցէին միութեան «Զանգեզուր» պարախումբի փորձերուն, որոնք կը ղեկավարուէին հայրենի պարուստյցներու կողմէ:

Իսկ տարբեր հակումներ ունեցողները կը մասնակցէին թատերական փորձերուն: 60-ական թուականներուն Թատերական յանձնախումբին մաս կը կազմէին հետեւեալները՝ Վահէ և Այծեմնիկ Պոյաճեաններ, Աղասի Իփէքեան, Գրիգոր Փարթամեան:

Ասոնցմէ զատ, Մերճանեան Սրահին մէջ յարմարութիւններ գոյութիւն ունէին բինկ-բոնկի եւ պիլիարտոյի համար:

Մեր յիշած այս անձերը սովորական «յաճախորդ»ներն էին սրահին:

Ասոնց կողքին, «մտաւորական խրախճանք»ի յաճախակի առիթներ կը ստեղծուէին՝ ընդունելով հայրենիքէն մտաւորականներու խումբեր կամ յատուկ հրաւերով եկած անհատ մտաւորականներ, որոնք ելոյթ կ'ունենային սրահին մէջ:

Այսպէս, ՀԳՄ-ի կամ «Արեւ»ի հրատարակիչ ՀԱՀ-ի (Հայ Ազգային Հիմնադրամ) հրաւերով, առիթ եղած է ընդունելու հայրենի մշակոյթի գործիչներ, ինչպէս՝ Սիլվա Կապուտիկեան, Ռուբէն Զարեան, Լեւոն Հախվերդեան, Սերօ Իսանզադեան, եւ շատ ուրիշներ, որոնց բոլորին անունները դժուար է վերյիշել չորս տասնամեակ վերջ:

Սովորական երեւոյթ էր երկու երեք ամիսը անգամ մը զանազան տեսակի ձեռնարկներ կազմակերպել, ինչպէս ընտանեկան պարահանդէսներ, նկարչական ցուցահանդէսներ, Վարդանանցի տօնակատարութիւն, Տիկնանց պազար, Մայրերու Օր, երիտասարդական մրցանքներ եւ ամէնամեայ երիտասարդական փառատօն:

Ընտանեկան պարահանդէսներու ընթացքին շրջան մը շատ ժողովրդականութիւն ունէր բասօ տօպլէ պարը:

Օրինակ, երբ ներկաները կը սկսէին յոգնութեան նշաններ ցոյց տալ, տիրող խանդավառ մթնոլորտը վերաշխուժացնելու համար, յանկարծ մէջտեղ կու գար «պարավար» մը, որ հրահանգներ կու տար պարահարթակին վրայի զոյգերուն:

Առաջին ազդանշանին ներկաները, բասօ տօպլէի եղանակներով պարելու համար, իրերայաջորդ զոյգերով երկար պոչ մը կը կազմէին եւ պարասրահին դռնէն բասօ տօպլէի քայլերով դուրս կու գային, յաջորդ հանգրուանին ուրիշ դռնէ մը սահուն կերպով դարձեալ պարահարթակ վերադառնալու համար: «Պարավար»ը դարձեալ գործի վրայ կ'ըլլար նոր հրահանգներ տալով պարողներուն, որոնք ըստ հրահանգի, պարի ընթացքին ձախ կամ աջ կողմի պարողներուն շարքը, երկու երեք քայլ ետ կ'երթային. այսպիսով, ինքնաբերաբար, պարող զոյգերուն միջեւ փոփոխութիւն կ'ըլլար, ինչ որ նոր ծանօթութիւն կը ստեղծէր, եթէ արդէն իրարու ծանօթ չէին:

Հաւաքական ձեռնարկներու մէջ ժողովրդականութիւն ունէր Վարդանանց տօնակատարութիւնը, որ ամէն տարի կը նշուէր, միշտ անխուսափելի «քեշկէկ»ին ընկերակցութեամբ, որ կարծես թէ օրուան խորհուրդին առընթեր իր հաստատուն տեղը ունէր:

Հաւաքական ձեռնարկներու շարքին, բնականաբար, կը տօնուէր «Մայրերու Օր»ը, ինչպէս նաեւ կը կազմակերպուէին պատանիներու համար արտասանութեան,

շարադրութեան եւ երաժշտական կտորներու կատարման մրցանքներ:

Նոյնպէս, ժողովրդական երեւոյթներէն էին միութեան տիկիներուն կազմակերպած ճոխ պազարները, որոնք միշտ յաջողութեամբ կը պսակուէին: Այդ յաջողութիւններուն մէջ մեծ սատար ունէին հետեւեալ տիկիները՝ Շաքէ Երզնկացեան, Հերմինէ Սիմոնօֆ, Ալիս Տեփոյեան եւ Նուարդ Աւագեան:

Նկարչական ցուցահանդէսները կու գային հանդարտ թափով, սակայն արուեստագէտներուն գործերը կը դրսեւորուէին տպաւորիչ գոյներով եւ իւրայատուկ տաղանդներով: Տարիներու թաւալումով, արուեստագէտներու ցուցադրած զանազան գործերէն նմոյշներ կը զարդարէին սրահին պատերը: Այս ցուցոններուն բարձրակէտը կը հանդիսանար եգիպտահայ ծանօթ արուեստագէտ Աշոտ Զօրեանին 60-ականներուն նկարած «Հայ Պարուհիներ» մեծադիր նկարը (175 սմ x 397,5 սմ), որ տեղադրուած էր Թեքէեան Սրահին աջ պատին ամբողջ երկայնքին:

Իսկ ամէնամեայ երիտասարդական փառատօնը աւանդականօրէն տեղի կ'ունենար Ս. Ծնունդի օրը՝ կէսօրէ վերջ:

Սոյն ձեռնարկին մասնակցելու կը հրաւիրուէին Եգիպտոսի բոլոր հայկական մշակութային եւ երբեմն ալ մարզական միութիւններու երիտասարդները: Մասնակցող կազմակերպութիւններէն իւրաքանչիւրը իր լաւագոյնը ներկայացնելու ճիգով, ձեռնարկը գեղարուեստական բարձրորակ միջոցառումի կը վերածուէր: Յաճախ այդ ձեռնարկին արտասահմանէն կամ հայրենիքէն կը հրաւիրուէր ծանօթ մտաւորական մը, որ օրուան պատգամը կը փոխանցէր ներկաներուն:

Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնը, իր շուրջ հարիւրամեայ յաղթական, նպատակասլաց եւ լուրջ մշակութային երթով, բացառիկ տեղ եւ դեր ունեցած է

Գահիրեի հայ համայնքէն ներս:

Ան, իր կոչումը շարունակելու համար, ամէն կարելիութիւն եւ յարմարութիւն ունէր: Սակայն, դառն ճակատագիրը այլ բան տնօրինած էր իրեն:

Կ'ըսուի թէ Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէն 19-րդ դարու վերջը եւ 20-րդ դարու սկիզբը նախագծուած էր ընդունելու մինչեւ երկու միլիոն բնակիչ, սակայն դէպքերու գահավէժ զարգացումը այնպէս մը եղաւ որ 20-րդ դարու վերջաւորութեան Գահիրեի բնակչութիւնը կը գնահատուէր ցերեկը՝ քսանմէկ միլիոն, իսկ գիշերը՝ տասնութ միլիոն, նկատի ունենալով ամէն առաւօտ Գահիրէ եկողները եւ ամէն երեկոյ Գահիրէէն մեկնողները:

Բնակչութեան այս անզուսպ աճը յառաջ բերաւ դժուար լուծելի խնդիրներ:

Գեղարուեստասիրաց Միութեան պարագային, քանի մը ժխտական ազդակներ իրենց դերը ունեցան սրահին ականայ շիջումին մէջ:

Արդարեւ, վերջին 60-70 տարիներուն, Գահիրէ բնակող հայ համայնքին անդամներուն ձգտումն էր քաղաքի խճողեալ կեդրոնէն փոխադրուիլ աւելի հանդարտ արուարձան համարուող Հելիոպոլսոյ շրջանը, կամ աւելի հեռու տեղեր:

Ասոր անմիջական արդիւնքը եղաւ ոտքով սրահ յաճախողներուն թիւին նուազումը:

Միւս կողմէ, քաղաքին մէջ ամէն տեղ խճողումը մղեց շրջուն վաճառորդները համախմբուելու մայրերուն վրայ եւ անոնցմէ վար փողոցներուն կեդրոնը, ինչ որ արգելք կը հանդիսանար ինքնաշարժները բնականոն կերպով վարելու, կամ զանոնք շէնքերուն առջեւ շարելու:

Ասոր հետեւանքով, սրահին Հելիոպոլիս փոխադրուած անդամները, որոնք իրենց ինքնաշարժներով սրահ կու գային, ստիպուեցան ականայ հրաժարիլ իրենց փափաքէն:

Այս պայմաններուն տակ, սրահ յաճախողներուն թիւը կարճ ժամանակի ընթացքին սուր կերպով պակսեցաւ, ինչ որ առաջնորդեց սրահին անդամալուծման եւ 2018 Մայիսի միութեան ընդհանուր ժողովին որոշումով՝ փակման: Գեղարուեստասիրացի հին անդամները կը յաճախեն անոր քոյր միութիւնը՝ Հելիոպոլսոյ ՀԱՀ Կոկանեան Սրահը:

Յ.Գ. -Ներկայ յօդուածին լոյս ընծայումին առիթով, անուններու եւ թուականներու բազմաթիւ տուեալներ տրամադրուած են նախկին եգիպտահայ եւ այժմ հայրենաբնակ Պր. Յակոբ Ծուլիկեանէ, որ նախքան 1963-ին հայրենիք ներգաղթելը, ՀԳՄ-ի պատանեկան շարժումին աշխոյժ ղեկավարներէն էր: Խորին շնորհակալութիւն, մեզի ընծայած իր թանկագին օժանդակութեան համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԻՏԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԵՒ ԿՈՐՄՈՒԱԾ ԱՌԻԹ ՄԸ

1986 Դեկտեմբերի վերջերուն, ընդառաջելով «Արեւ»ի հրատարակիչ Հայ Ազգային Հիմնադրամի հրաւերին, Եգիպտոս այցելեց մեծանուն հայրենի գրող Սերո Խանզադեան, որպէսզի կարգ մը դասախօսութիւններ տայ հայկական մշակութային միութիւններու մէջ եւ շրջի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ տեսարժան վայրերը:

Հայրենի գրողը, այս այցելութեան ընթացքին, փափաք յայտնեց որ հանդիպում մը կազմակերպուի կարգ մը եգիպտացի գրողներու հետ:

Այս հանդիպումը կազմակերպուեցաւ իր եւ երկու մեծ գրողներու միջեւ, յանձինս Նակիպ Մահֆուզի եւ Թաուֆիգ Էլ Հաքիմի, վերջինիս «Ալ Ահրամ» հաստատութեան մէջ գտնուող գրասենեակը:

Որոշուած էր որ ես ընկերանայի մեծանուն գրողին, որպէսզի այս հանդիպումին ընթացքին կատարեմ թարգմանութիւնը արաբերէնէ հայերէնի եւ հակառակը:

Այսօրուան պէս կը յիշեմ, թէ ինչպէս կը պատրաստուէի արձանագրելու այս պատմական հանդիպումը, որ տեղի պիտի ունենար Հայաստանէն անուանի գրողի մը եւ արաբական գրականութեան Եգիպտոսի երկու հսկաներուն միջեւ:

Հանդիպումը տեղի ունեցաւ որոշեալ օրը եւ ժամուն:

Երեք գրողները կ'ունենային համապարփակ, իւրայատուկ եւ հաճելի զրոյց մը:

Ես տարուած էի թարգմանութեան գործողութեամբ, փորձելով փոխանցել միտքերը եւ իմաստները կարելի ճշգրտութեամբ, ընդմէջ արաբերէն եւ հայերէն լեզուներուն:

Միաժամանակ ամբողջ զրոյցը կ'արձանագրէի հետս

տարած ձայնագրիչ սարքին վրայ, որպեսզի ւաւելի վերջը վերականգնեմ այս կարեւոր հանդիպումին մանրամասնութիւնները:

Հանդիպումը սկսելէն վերջ, Թաուֆիգ Էլ Հաքիմ ներկայացուց Նակիպ Մահֆուզը որպէս մէկը, որ արաբական պատմուածքի մարզին մէջ բարձրաբերձ շէնք մը կառուցած է, իսկ ինք՝ Թաուֆիգ Էլ Հաքիմը իր գործը կը նկատէ արաբական պատմուածքի մարզին մէջ որպէս փոքր խանութ մը, այդ հսկայ շէնքին կողքին: Նակիպ Մահֆուզ չընդունեց Թաուֆիգ Էլ Հաքիմին համետութիւնը եւ զինք ներկայացուց որպէս մեր դարու արաբ մեծագոյն գրողներէն մին:

Յետոյ, զրոյցը դարձաւ արաբերէն եւ հայերէն լեզուներու արմատներուն շուրջ:

Նակիպ Մահֆուզ հարց կու տար թէ՛ հայերէն լեզուն ՚ր լեզուին կը նմանի: Հայրենի գրող Սերօ Խանզադեանի պատասխանն էր թէ՛ հայերէնը առանձին ճիւղ մըն է հնդեւրոպական լեզուներու ընտանիքին մէջ եւ չի նմանիր որեւէ այլ լեզուի:

Հայերէնի այբուբենը կը բաղկանայ 36 տառերէ եւ մշակուած է հայ լեզուի ոսկեդարը համարուող հինգերորդ դարու սկիզբը: Տասներկրորդ դարուն այբուբենին վրայ ւաւելցուեցան երկու այլ տառեր, այսպիսով հայերէն լեզուի տառերուն թիւը հասաւ 38-ի: Սերօ Խանզադեան ընդգծեց թէ՛ հայերէն լեզուն, հակառակ որ արձանագրուած է հինգերորդ դարու սկիզբէն, սակայն եւ այնպէս այդ շրջանէն մեզի հասած լեզուին կառոյցը կը հաստատէ, թէ գոյութիւն ունէր զարգացած լեզու մը, հինգերորդ դարը նախորդող շրջանին:

Սերօ Խանզադեան ւաւելցուց նաեւ, թէ՛ թարգմանական մեծ շարժում մը կար հինգերորդ դարուն, որուն ընթացքին հայերէնի թարգմանուեցան մինչ այդ գոյութիւն ունեցող գլխաւոր մատեանները: Այդ մատեաններուն բնագիրներէն

մաս մը կորսուեցաւ եւ մարդկային մշակոյթը ճանջցաւ անոնց բովանդակութիւնը միայն հայերէնի թարգմանութիւններուն միջոցաւ, որոնք մինչեւ այսօր պահպանուած են:

Յետոյ, Թաուֆիզ Էլ Հաքիմ ներկայացուց իր կարծիքը արաբական գրականութեան եւ անոր զարգացումին վրայ «Գորան»ի ունեցած ազդեցութեան մասին:

Ան նոյնպէս ներկայացուց յունական դիցաբանութեան եւ յունական առասպելներուն ազդեցութիւնը եւրոպական գրականութեան վրայ:

Ապա, բաղդատութիւն մը ըրաւ արաբական եւ եւրոպական մտաւոր զարգացումներուն միջեւ, նշելով իւրաքանչիւրին զարգացումի պարագաներուն տարբերութիւնը:

Խօսուեցաւ նաեւ հայ գրականութեան մասին եւ Սերօ Խանզադեան անդրադարձաւ այն պարագաներուն, որոնցմէ անցաւ հայոց լեզուն՝ ըստ հայ ժողովուրդի պատմական ուղիին: Յիշեց նաեւ թէ՛ շատ արաբական բառեր մտած են հայերէնին մէջ եւ մինչեւ հիմա կը գործածուին որպէս հայերէն բառեր:

19-րդ դարուն եւ 20-րդ դարու սկիզբը սկսաւ հայերէն լեզուի նոր զարթօնք մը՝ Արեւմտեան Հայաստանի (Օսմանեան տիրապետութեան շրջան) եւ Արեւելեան Հայաստանի (Ռուսական տիրապետութեան շրջան) մէջ:

Հայ գրականութիւնը Արեւմտեան Հայաստանէն Սփիւռք փոխադրուեցաւ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին գործադրուած ջարդերէն վերջ: Հակառակ անոր որ սկզբնական շրջանին հոյակապ գործեր լոյս տեսան, սակայն ներկայիս Սփիւռքի գրական արտադրութիւնը նախկին ուժականութիւնը չունի:

Գալով Արեւելեան Հայաստանին, ան Սովետ Միութեան հանրապետութիւններէն մին դառնալէն յետոյ, գրականութիւնը հոն ծաղկեցաւ եւ բարձունքի հասաւ:

Այս զրոյցին ընթացքին, Նակիպ Մահֆուզ հարց տուաւ

թէ ինչ քանակով կը տպուին Սերօ Խանզադեանի գործերը Հայաստանի մէջ: Խանզադեան պատասխանեց թէ՛ իր գիրքերը տասէն քսան հազար տպաքանակով կը տպուին: Աւելցուց նաեւ, թէ Հայաստանի մէջ գիրքերու յատուկ սեւ շուկայ գոյութիւն ունի, որովհետեւ պահանջը մատուցումէն աւելի է:

Նակիպ Մահֆուզ զարմացաւ, ըսելով թէ՛ իր բոլոր գիրքերը կը տպուին միայն հինգէն տասը հազար օրինակով:

Թաուֆիգ էլ Հաքիմ տարօրինակ գտաւ, թէ ինչպէ՛ս պետութիւն մը, որուն բնակչութեան թիւը երեք միլիոնը չ'անցնիր, իր գրողներուն գիրքերը կրնայ տպել տասէն քսան հազար օրինակով, որոնք կը սպառին, մինչդեռ պատմուածքի ամենէն հոշակաւոր արաբ գրողին՝ Նակիպ Մահֆուզի գիրքերը կը տպուին միայն տասը հազար տպաքանակով, ժողովուրդներու խմբաւորումի մը մէջ, որ Ծոցէն մինչեւ Ովկիանոս հարիւր միլիոն եւ աւելի արաբերէն ընթերցող կը հաշուէ:

Թաուֆիգ էլ Հաքիմ վերլուծեց կացութիւնը, հիմնուելով այն իրողութեան վրայ որ արաբական երկիրներու մէջ անգրագիտութեան բարձր տոկոս մը գոյութիւն ունի, ասոր վրայ պէտք է աւելցնել թէ գրականութեան, մանաւանդ պատմուածքին հանդէպ հետաքրքրութիւնը մեծ չէ: Նակիպ Մահֆուզ ըսաւ թէ՛ ժամանակակից ընթերցողները կը հետաքրքրուին քաղաքական յուշերու եւ կրօնական գիրքերու ընթերցումով եւ շատ չեն հետաքրքրուիր պատմուածքով, առանց հաշուելու Եգիպտոսէն դուրս, արաբական երկիրներու մէջ յաջող գիրքերու խարդախումը:

* * *

Պէտք չէ մեզմէ վրիպի, թէ այն ժամանակաշրջանը, որուն մասին խօսեցաւ Սերօ Խանզադեան, Հայաստանի մէջ հսկայ եւ ամբողջական պետական օժանդակութիւն կար գրողներուն: Արդարեւ, մշակոյթն ու գրականութիւնը

Սովետ Միության հետաքրքրություններուն գազաթնա-
կէտին կը գտնուէին:

Ի տարբերութիւն անցեալին, այժմ, Հայաստանի
անկախութենէն ասդին, կացութիւնը բոլորովին ուրիշ է:
Տիրող ազատ տնտեսութեան մթնոլորտը չի թոյլատրեր
գրողներու քաջալերանքը:

Աւելի քան մէկուկէս ժամ տետող այս սիրալիր հանդիպու-
մին ամարտին, Սերո Խանգադեանին ընկերացայ, զինք
առաջնորդելու իր կեցութեան վայրը:

Ապա, արագօրէն վերադարձայ տունս, որպէսզի
սկիզբէն ունկնդրեմ գրոյցը՝ մտքի բացարձակ հանդար-
տութեան մէջ: Հազիւ թէ աշխատացուցի արձանագրիչ
գործիքը, յայտնաբերեցի որ ամբողջ գրոյցը արձա-
նագրուած է շատ ցած ձայնով եւ կարելի չէ զայն ունկնդրել:
Անդրադարձայ որ գործիքին բարդերը վնասուած էին:

Այդ պահուն կը զգայի, թէ մէկը կոնակէս կը
դանակահարէր զիս: Այս կորսուած առիթին համար
անօգուտ կերպով զղջացի եւ մինչեւ այսօր ալ կը զղջամ,
որովհետեւ որեւէ առիթ չկայ եղածը սրբագրելու:

Չղջումս անելցաւ, երբ Թաուֆիգ Էլ Հաքիմ մահացաւ
1987-ին: Յետոյ, երբ 1988-ին Նակիպ Մահֆուզ գրակա-
նութեան Նոպէլեան մրցանակը ստացաւ եւ տեղեկացայ
Սերո Խանգադեանի մահուան, այդ առիթին կորուստը
դարձեալ յիշեցի:

Կեանքի մէջ հազուագիւտ առիթներ կան, որոնց կը
հանդիպինք եւ եթէ կորսնցնենք զանոնք, կը շարունակենք
զղջալ մեր ամբողջ կեանքին ընթացքին:

Որպէսզի պատկերը ամբողջանայ, թերեւս յարմար
պիտի ըլլար արաբ ընթերցողին ներկայացնել Սերո
Խանգադեանի կարգ մը անձնական յատկանիշները:

Սերո Խանգադեան ծնած է 1915-ին: 1934-ին շրջանա-
ւարտ եղած է Հայաստանի հարաւը գտնուող Գորիս
քաղաքի ուսուցչական հիմնարկէն, որմէ յետոյ սկսած է

դասաւանդել հայերէն լեզու լեռնային Հայաստանի գիւղերէն մէկուն մէջ:

1936-ին, Ստալինի կողմէ ձեռնարկուած մաքրագործումներու ընթացքին, ան փնտռուած էր իր «ազգայնական հակում»ներուն համար:

Ան ստիպուեր է փախուստ տալ Թիւրքմէնիստանի մայրաքաղաք Աշխապատ, ուր գաղտնի կերպով աշխատած է իբրեւ բեռնակիր, օրապահիկը շահելու համար:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի սկիզբներուն, Խանզադեան կրցած է հայրենիք վերադառնալ եւ մաս կազմել Սովետական բանակին ու անոր մղած պատերազմին:

Սերօ Խանզադեան կը նկատուի ժամանակակից գրողներու ամենէն հռչակաւորներէն, որոնք հայերէն վէպեր գրած են:

Ստացած է բազմաթիւ պետական մրցանակներ եւ շքանշաններ, գրական գործունէութեան համար:

Սովետական տիրապետութեան միջոցին Խանզադեան համակամ էր Ղարաբաղի ժողովուրդին հետ՝ իրենց մարզին Հայաստանի միանալու փափաքին:

1977-ին Սովետական նոր սահմանադրութեան պատրաստութեան առիթով, ան գրաւի դրաւ իր դիրքն ու ակնառու կացութիւնը եւ համարձակեցաւ Սովետ Միութեան առաջին քարտուղար Լէոնիտ Պրեժնեւէն, որ սոյն յանձնախումբին կը նախագահէր, անկախաբար վերին իշխանութեան մէջ իր վարած այլ վարչական պատասխանատու պաշտօններէն, պահանջել Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին:

* * *

1986-ի աւարտին, երբ Սերօ Խանզադեան Եգիպտոս այցելեց եւ առիթով մը ներկայ եղաւ Եգիպտահայ երիտասարդներու կողմէ կազմակերպուած երգահանդէսի

մը, ուր կատարուեցան հայկական ժողովրդական երգեր, անկախաբար այդ երգահանդեսին մատուցուած արաբական երգերէն, ան ձեռնարկէն դուրս եկաւ խոժոռ դէմքով եւ յուզուած երեւոյթով:

Այդ օր եւս ես կ'ընկերակցէի իրեն վերադարձին: Գրպանէն հանեց ծաւալուն թաշկինակ մը, որպէսզի ծածկէ երեսը եւ պոռթկաց լալով, իբր արդիւնք սուր յուզումի:

Ամենայն պարզութեամբ իրեն հարցուցի թէ՛ ինչ բան կը նեղէր զինք:

Լացէն խեղդուած ձայնով մը պատասխանեց.

-Դուք Եգիպտոսի մէջ Սփիւռք կը համարուիք, բայց բացարձակ ազատութիւն ունիք հայերէն երգեր երգելու, թոյլատու եւ բարի ժողովուրդի մը ծոցին մէջ, մինչդեռ Ղարաբաղի եղբայրներս զրկուած են հայկական երգեր կատարելէ՝ իրենց նախնիներուն հողին վրայ, ՈՒՐ Կ'ԱՊՐԻՆ ԱԻԵԼԻ ՔԱՆ ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ, - եւ շարունակեց դառնօրէն լալ:

Այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար 1988 Փետրուարին, Ղարաբաղի հարցին բռնկումէն մօտաւորապէս տարի մը առաջ:

Ծ.Խ. «Հանդիպում Տիտաններու Հետ» խորագրով ամբողջ հատուածը առնուած է «ԱՐԵԻ»ի արաբերէն ամսօրեայ յաւելուածէն, թիւ 13, Յունուար 1999, Բ. Տարի: Առաջնորդող Յօդուածին արաբերէն բնօրինակի հեղինակ եւ հայերէնի վերածող՝ Պերճ Թէրզեան:

ՌՌԻԲԷՆ ԶԱՐԵԱՆ

Անցեալ դարու ութսունական թուականներուն «Արեւ»-ի շրջանակի միութիւններէն, նոյնինքն «Արեւ»-ի հրատարակիչ Հայ Ազգային Հիմնադրամի եւ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան վարչութիւններուն հրաւերով, ամէն տարի փոխնիփոխ՝ միամսեայ կեցութեամբ Եգիպտոս կու գային հայրենի ծանօթ եւ վաստակաշատ մտաւորականներ, որպէսզի տեղւոյն հայ համայնքին զաւակներուն հետ շփումներ ունենալով, անոնց հայրենասիրական զգացումները արծարծ պահուէին:

Այս դրութեամբ, նշեալ տարիներուն հայրենիքէն մօտ ութէն-տասը մտաւորականներ հրաւիրուած են, որոնք իրենց կեցութեան ընթացքին «մտաւորական խրախճանքներ» սարքած են, խանդավառելով եգիպտահայ հասարակութիւնը:

Քառասուն տարուան հեռաւորութենէն, այժմ չեմ կրնար ճշգրիտ տեղեկութիւններ տալ եկող հիւրերուն մասին, բայց կրնամ անոնցմէ առանձնացնել երեք հոգի՝ յանձին Սերօ Խանգաղեանի, որուն մասին անդրադարձած եմ նախորդ էջերու յօդուածով, ինչպէս նաեւ երկու այլ մտաւորականներու՝ Ռուբէն Զարեանի եւ Լեւոն Հախվերդեանի, որոնց հետ մօտէն շփում ունեցած եմ:

Ուրեմն, նախ սկսինք Ռուբէն Զարեանով:

Ան կարելոր պաշտօններ վարած էր եւ ակադեմական խոր պատրաստութիւն ունէր: Ծանօթ գրականագէտ մըն էր, թատերագէտ եւ խմբագիր:

Արուեստի Վաստակաւոր Գործիչ, Արուեստագիտութեան Դոկտոր Փրոֆէսօր:

1936-ին աւարտած էր Երեւանի Պետական Համալսարանը եւ իր երկար ասպարէզի ընթացքին, վարած էր բազմաթիւ կարելոր պաշտօններ, եւ ակադեմական ծիրէն ներս ստացած էր բազմաթիւ գիտական աստիճաններ: Ան արուեստագիտութեան ասպարէզէն

ներս հանրաձանօթ գազաթ մըն էր:

Իր բազմաթիւ պատասխանատու պաշտօններուն ընթացքին, 1987-ին, եղած է ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտի հիմնադիր-տնօրէն: 1984-ին ստեղծած է Շէյքսպիրագիտութեան Գրադարան, որ հետագային (1994 թ.) կոչուած է Զարեանի անունով:

Ան հեղինակ էր շուրջ տասներկու գիրքերու, որոնք, ընդհանրապէս, առընչուած էին թատերագիտական եւ գրականագիտական ոլորտներու մէջ գործող հոչակաւոր դէմքերու՝ (Պետրոս Ադամեան, Սիրանոյշ, Վահրամ Փափազեան, Գաբրիէլ Սունդուկեան եւ Աբովեան): Ինչպէս նաեւ պատրաստած է «Կենսամատենագիտութիւն» հատորը (ներածականը եւ խմբագրութիւնը՝ Լեւոն Հախվերդեանի), հրատարակուած՝ 1993-ին:

Գալով Եգիպտոսի մէջ ունեցած իր ելոյթներուն, հարկ է խոստովանիլ, որ ան բացառիկ կարողութիւն ունէր իր ունկնդիրները առինքնելու հայկական թատրոնի մասին տուած դասախօսութիւններով, եւ ներկաները կը փոխադրէր Թիֆլիս, որ 19-րդ դարուն հայ մշակոյթի կեդրոն մըն էր, եւ հոն դասական գործերով ելոյթ կ'ունենային մեր մեծ դերասանները, յանձինս՝ Պետրոս Ադամեանի, Սիրանոյշի եւ բազմաթիւ այլ տաղանդաւոր արուեստագէտներու:

Իր դասախօսութիւններէն մէկուն ընթացքին սորվեցանք «եռանդասպառ» բառը, զոր ինք գործածեց երկար դասախօսութենէ մը վերջ, իր յոգնած վիճակին մասին արտայայտուելով: Սակայն, այդ վիճակը արգելք չեղաւ որ կարճ դադարէ մը վերջ, շարունակէ իր դասախօսութիւնը՝ առաւել եռանդով:

Իր Եգիպտոս այցելութեան ընթացքին, ան բացատրեց թէ իր ստեղծած Շէյքսպիրագիտութեան Գրադարանին մէջ Շէյքսպիրի գործերէն բազմաթիւ լեզուներով թարգմանութիւններ գոյութիւն ունին, եւ փափաք յայտնեց որ իր հետ բերած Շէյքսպիրեան գործի մը արաբերէն թարգմանութիւնը հրատարակուի եգիպտացի ծանօթ

մտաւորականի մը յառաջաբանով:

Այս պարտականութիւնը Ռուբէն Զարեան յանձնեց ինծի, եւ ես խոստացայ գլուխ հանել ուզուածը:

Հարկ է հաստատել, թէ իր հետ խօսակցիլը մտաւոր հաճոյք էր, եւ մանաւանդ, Շէյքսպիրեան գործին առիթով մեր ունեցած նամակագրութիւնը սերտ բարեկամութիւն մը ստեղծեց մեր միջեւ: Իրմէ յիշատակ ունինք «Մայրամուտից Առաջ» իր հատորը (1988 թ.)՝ հետեւեալ մակագրութեամբ. «Տեր եւ Տիկին Թերզյաններին՝ անկեղծ ու անդավաճան բարեկամությամբ»:

Այդ ժամանակ Եգիպտոսի մէջ գոյութիւն ունէր Թատրոնի Պետական Հիմնարկ մը, որ գերագոյն մարմինն էր երկրին մէջ գործող պետական թատրոններուն համացանցին:

Հետեւաբար, յարմար դատուեցաւ որ դիմում կատարուի Թատրոնի Պետական Հիմնարկի ատենի ընդհանուր տնօրէնին, ինքն ալ իր կարգին թատերագէտ մը, որ գործին ծանօթանալէ յետոյ, գրէ անոր յառաջաբանը:

Բաւական ժամանակ վերջ, Հիմնարկին տնօրէնը, առանց բացատրութիւն տալու, վերադարձուց տուեալ գործը՝ առանց անոր յառաջաբանը գրելու:

Այդ կացութեան առջեւ, դիմուեցաւ Եգիպտոսի Արտաքին Գործոց Նախարարին քրոջ, որ դասախօսուիի մըն էր Գահիրէի Համալսարանին մէջ, եւ 1969-ին Հայաստան այցելած էր հայրենի պետութեան պաշտօնական հրաւերով՝ մասնակցելու Կոմիտասի 100-ամեակի տօնակատարութիւններուն:

Դժբախտաբար, այս անձն ալ յանձն չառաւ յառաջաբանը գրել:

Ատկէ վերջ եղած մէկ-երկու փորձերը եւս ձախող արդիւնք տուին:

Այս ձեւով չկրցայ Ռուբէն Զարեանի հանդէպ ունեցած պարտաւորութիւնս իրագործել:

* * *

Ռուբէն Զարեան մահացաւ 1994-ին եւ իր ձգած Շէյքսպիրեան գործին արաբերէն թարգմանութիւնը մնաց քովս:

Այդ գործը պարտաւոր էի վերադարձնել ՀՀ ԳԱ Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտ, ինչ որ պատահեցաւ ասկէ վեց-եօթը տարի առաջ, երբ առիթով մը հայրենիք այցելեցի:

Գործը տարի յանձնելու Արուեստի Ինստիտուտի աստենի տնօրէնին, փորձելով բացատրել այդ գրութեան երկար ատեն քովս պահելու պատճառները:

Տնօրէնը, յայտնի դժգոհութեամբ, թոյլ չտուաւ որ խօսքս ամբողջացնեմ, եւ յայտարարեց թէ զինք չեն հետաքրքրեր ո՛չ Ռուբէն Զարեանը, եւ ո՛չ ալ Շէյքսպիրեան Գրադարանը:

Այս խօսքերը լախտի հարուածի մը պէս գլխուս իջան եւ զիս շշմեցուցին:

Անմիջապէս դուրս գալով տնօրէնին սենեակէն, դիմեցի ասելի ստորադաս պաշտօնեայի մը, որ առանց խնդրի ստացաւ գրութիւնը:

* * *

Այս բոլորէն ետք կը մնար յայտնաբերել, թէ ինչո՞ւ եգիպտացի մտաւորականները չէին գրած իրենցմէ խնդրուած յառաջաբանը:

Օր մը, երբ հրատարակչական գործերով զբաղող եգիպտացի բարեկամի մը այս մասին կը պատմէի, դիտել տուաւ, թէ Սովէտ Միութեան մէջ շատ տարածուած սովորութիւն մը կար որ ամէն հրատարակուած գիրքին մուտքին Վլատիմիր Իլյիչ Լենինին «իմաստուն խօսքերէն» մէջբերում մը կ'ըլլար, նոյնիսկ եթէ մէջբերումը որեւէ կապ չունէր հրատարակելի գործին բովանդակութեան հետ:

Այդ պահուն միայն թնճուկը լուսաբանուեցաւ, երբ անդրադարձայ թէ եգիպտացի մտաւորականները ինչո՞ւ չէին ընդառաջած նիւթի յառաջաբանը գրելու խնդրանքին:

Բայց այլեւս շատ ուշ էր:

ԼԵՒՈՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Այս շարքին երրորդ անձը, որուն ծանօթացած եմ եւ յարաբերութիւն ունեցած՝ Լեւոն Հախվերդեանն է, որ ծնած է 1924-ին, Ղարաքիլիսա եւ մահացած՝ 2003-ին, Երեւան:

Գրականագէտ, թատերագէտ, թարգմանիչ եւ խմբագիր: Բանասիրական Գիտութիւններու Դոկտոր (1967), փրոֆէսոր (1987):

Արուեստի Վաստակաւոր Գործիչ (1972): ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (1996): Աւարտած է Երեւանի Թատերական Ինստիտուտը (1949): Պատասխանատու պաշտօններ վարած է գրական եւ արուեստագիտական մարզերէն ներս: ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի տնօրէն (1987):

Հեղինակած է շուրջ 15 հատոր, թարգմանած է հետեւեալ հեղինակներու գործերէն՝ Ն. Կուն, Ա. Չեխով, Յվայգ, Յ. Ուսկովսկի եւ այլ հեղինակներու երկերէն: Գրած է «Թատերագիտական Բառարան» աշխատութիւնը (1986):

Ստացած է ՀՀ-ի պետական մրցանակ (1983) եւ Հայ Գրողներու Միութեան Մ. Նալպանտեանի անուան մրցանակ (1988):

Հախվերդեան, հակառակ իր բազմակողմանի գիտութեան, շատ հաղորդական էր եւ իր հետ խօսակցութիւններուն ընթացքին յաճախ արեւելահայերէնի մէջ գործածուած օտար բառերու մասին կը խօսուէր: Այնպէս հասկցած էինք որ ինք հակառակ չէ օտար բառեր գործածելու, բայց կը նախընտրէ որ այդ գործածութիւնը ըլլայ սահմանափակ:

Ան, թատերագէտ ըլլալով եւ միաժամանակ Թումանեանագէտ, սքանչելի դասախօսութիւններ տուաւ այդ զոյգ մարզերուն մէջ:

Առիթով մը Թումանեանի գործին մասին խօսելով, ներկաներուն բացատրութիւններ տուաւ Թումանեանի ստեղծագործութիւններէն «Մի Կաթիլ Մեղր» քերթուածին

մասին:

Մեծ բանաստեղծին քերթուածը կը սկսի հետեւեալ ձեւով.

Մի գիւղացի իրենց գիւղում
Խանութ սարքել, բան էր ծախում:
Օրուան մի օր մօտիկ գիւղից,
Մահակն ուսին, շունն ետեւից,
Ներս է մտնում մի զրո չոպան...

Հախվերդեան ներկաներուն տուաւ մօտաւորապէս հետեւեալ բացատրութիւնը. ըսաւ թէ Թումանեան, անշուշտ թէ, տեղեակ էր հովիւ բառի գոյութենէն, սակայն այդ մարդասպան հովիւին կերպարը, որ կը ներկայանար որպէս կոշտ կոպիտ եւ անտաշ աժդահայ մը, կարելի էր կոչել «զրո չոպան», որ հարազատօրէն կը ներկայացնէր տուեալ հովիւին պարագան, մինչդեռ բարեհունչ եւ մեղմ «հովիւ» բառը չէր կրնար կատարել այդ դերը:

Հախվերդեանի հետ աւելի պատեհութիւններ եղած են՝ իրեն հանդիպելու եւ, մասնաւորաբար, լեզուական նիւթերու մասին խօսելու, ինչ որ որոշ մտերմութիւն ստեղծած էր մեր միջեւ:

Հախվերդեան ստորագրեալիս իր գիրքերէն մակագրած է հետեւեալները՝ «Պարոյրը» (1981), «Զրոյցներ Լեզուի Մասին» (1982), «Մտորումներ» (1984), որոնցմէ հոս կը մէջբերեմ միայն մէկ մակագրութիւն. «Պերճ Թերզյանին՝ խորին համակրանքով, անսպասելի գտնված անկորնչելի բարեկամությամբ»:

Հայրենի մտաւորականը առիթ ունեցաւ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայ համայնքներուն մօտէն ծանօթանալու, այցելելով Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ առաջնորդարանները, ինչպէս նաեւ մշակութային ու մարզական ակումբները:

Հայ Ազգային Հիմնադրամը, որուն հիւրն էր Լեւոն Հախվերդեանը, անոր այցելութեան աւարտին, Հայ Գեղարուեստասիրաց Միութեան սրահին մէջ կազ-

մակերպած էր ողջերթի ընդունելութիւն մը:

Ներկայ բազմաթիւ հիւրերուն մէջ կար նաեւ հանրաձանօթ գործարար Օննիկ Ալեքսանեանը, որ նոյն օրը պատահամաբ ծանօթացած էր Պարոն Կոնստանդին Օրբելեանին, որուն առաջարկած էր ընկերանալ իրեն՝ ողջերթի ընդունելութեան:

Պարոն Կոնստանդին Օրբելեան եղբօրորդին է հռչակաւոր խմբավար Կոնստանդին Օրբելեանին:

Կրտսեր Օրբելեանը մասնակցած էր Բ. Համաշխարհային Պատերազմին, որուն աւարտին, փոխանակ ետ Սովետ Միութիւն վերադառնալու՝ մեկնած էր Միացեալ Նահանգներու Ֆրէզնօ քաղաքը, հոն իր նոր կեանքը սկսած էր որպէս աւելածու ոսկերիչի խանութի մը մէջ եւ ժամանակ մը վերջ՝ դարձած անոր տէրը:

Իր բացառիկ կարողութիւններուն շնորհիւ, ժամանակի ընթացքին կը հասնի Ֆրէզնօ քաղաքի Առեւտրական Գրասենեակի նախագահութեան դիրքին: Ան, խումբ մը գործակիցներու ընկերակցութեամբ, Եգիպտոս կու գար Ֆրէզնօ քաղաքին Առեւտրական Գրասենեակի նախագահի հանգամանքով եւ առեւտրական բանակցութիւններ կը վարէր եգիպտական կառավարութեան հետ: Ճիշդ այդ շրջանին է որ կը ծանօթանայ Օննիկ Ալեքսանեանին եւ որուն հետ կու գայ Լեւոն Հախվերդեանին ի պատիւ կազմակերպուած ողջերթի ընդունելութեան:

Օրուան հիւրասիրողները յարմար կը դատեն պատուոյ սեղանին վրայ՝ Լեւոն Հախվերդեանի կողքին իբրեւ ականաւոր հիւր նստելու հրաւիրել Կոնստանդին Օրբելեանը:

Ընդունելութեան ընթացքին, Հախվերդեան եւ Օրբելեան, իրարու հետ խօսակցելով կը յայտնաբերեն, թէ երկուքն ալ բնակած են նոյն բակին նայող տուներու մէջ:

Երկուքին միջեւ կը սկսի սերտ յարաբերութիւն մը:

Ողջերթի երեկոն շատ յաջող անցաւ՝ իրար յաջորդող բաժակաճառերով եւ կէս գիշերէն վերջ աւարտեցաւ:

Իմ պարտականութիւնս էր Հախվերդեանը պանդոկ

վերադարձնել: Հախվերդեան ինք եկաւ եւ պահանջեց որ զինք իր նոր բարեկամին պանդոկը առաջնորդեմ: Բացատրեցի իրեն, թէ նոր բարեկամին պանդոկը քաղաքի կեդրոնէն քիչ մը դուրս է եւ հոն երթալը եւ կրկին իր պանդոկը վերադառնալը կրնայ երկուքէն-երեք ժամ տեւել:

Հախվերդեան իր պահանջին վրայ պնդեց եւ ստիպուած՝ տիկնոջս, իրեն եւ հիւրին հետ գացինք վերջինիս պանդոկը: Չորսս մէկ տեղաւորուեցանք պանդոկի շքամուտքին մէջ սեղանի մը շուրջ եւ անմիջապէս հիւրը ապսպրեց չորս բաժակ վոտքա՝ երեկոյթը սկսելու համար: Տիկինս եւ ես հրաժարեցանք խմելէ եւ դիտել տուինք որ ժամանակը շատ ուշ է:

Հախվերդեան մեզի թելադրեց մեկնիլ եւ ինք որոշեց գիշերը բարեկամին հետ մինչեւ լոյս անցընել:

Երբ որ առարկեցի, թէ երկրին բնիկ լեզուին անձանօթը լլալուն, առաւօտուն կրնայ դժուարութիւններ ունենալ իր պանդոկը վերադառնալու, պատասխանեց թէ ձեռով մը կը կարգադրուի վերադարձը: Մեզի կը մնար բաժնուիլ իրենցմէ եւ տուն վերադառնալ:

Յաջորդ առաւօտ կանուխ, երբ Հախվերդեանին պանդոկը գացի ողջերթի համար, իր սենեակը ելլելով՝ հազիւ սենեակին դուռը բացաւ, գարեջուրի բարկ հոտ մը կը տիրէր ամէն կողմ: Հախվերդեան բացատրեց, թէ ինք եւ բարեկամը մինչեւ առաւօտ չեն քնացած եւ ամբողջ գիշերը՝ վոտքա խմելով լացած են եւ անիծած բոլոր այն մարդիկը, որոնց խժոժութիւններուն ենթարկուած են: Այժմ, պանդոկ վերադառնալէն վերջ, գարեջուրով կ'աշխատի մարել ամբողջ գիշերուան վոտքային արդիւնքը:

Հախվերդեանի համար այդ գիշերը իր կեանքին բաւական խոր ցաւ պատճառող օրերէն մէկը պիտի մնայ՝ լեցուն անցեալի դառն յուշերով:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՆ ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ

Լեւոն Հախվերդեան

Ամիսներ առաջ Եգիպտոս մեկնեցի՝ նրա հայ համայնքի մասին տուեալներով զինուած, շնորհիւ Երուանդ Օտեանի «Տասներկու Տարի Պոլսէն Դուրս» գրքի, Օ. Թօփուզեանի «Եգիպտահայ Գաղութի Պատմութիւն» շահեկան ուսումնասիրութեան, Գ. Ստեփանեանի «Դէպի Կեանք» յուշագրութեան, որ պատմում է Գահիրէի մասին: Այսպէս, լինելով Գահիրէում եւ Ալեքսանդրիայում, ես տեսայ գրքերից առաձ տուեալների մարմնաւորումը իրականութեան մէջ՝ դասական գաղութի բոլոր յատկանիշներով, մեծահարուստ անցեալի լուռ վկայութիւններով: Այսպէս ասելիս ես աչքի առաջ ունեմ Արփիար Արփիարեանի, Սիրանոյշի, Երուանդ Օտեանի, Վահան Թէքէեանի, հոգեւոր եւ նիւթական մեծ արժէքներ ստեղծած ուրիշ երեսելի գործիչների շիրիմները, Գահիրէի եւ Ալեքսանդրիայի Ազգային Գերեզմանատնում: Սպիտակ քարի մէջ գրի առաձ մեծահարուստ այնպիսի պատմութիւն, որ յարուցում է ակնածանք: Նոյնպիսի պատկառանք են յարուցում գործող ազգային հաստատութիւնները, Գրիգոր Լուսաւորիչ փառահեղ տաճարը, Հայ Տունը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան յարկաբաժինը, մշակութային օճախներն ու դպրոցները, որոնք, ինչպէս պարզ երեւում է, հիմնուել են մեծ գաղութի չափանիշներով: Նահանջը նահանջ է, երգով՝ թէ առանց երգի: Ի հարկէ, մշակութային մեծ աւանդներ ունեցող գաղութից կարող էին սերուել Գոհար Գասպարեանը, Միհրան Երկաթը, Պերճ Զէյթունցեանը, Յակոբ Յակոբեանը եւ ուրիշներ:

Գաղութի նօսրացման իրողութիւնն ամէնից ակներեւ նկատում է դպրոցներում՝ Գահիրէի Գալուստեան եւ Նուպարեան, Ալեքսանդրիայի Պօղոսեան վարժարան-

ներում. մեծ դպրոցներ՝ փոքրաթիւ, շուրջ հարիւրական աշակերտներով: Դա ճիշդ է, բայց ճիշդ է եւ այն, որ գաղութի վիճակն այլեւս կայունացել է, աշակերտութեան թիւն աճում է, ինչպէս ասում էր մանկավարժներից մէկը՝ «գաղութը նոր ծիլեր է տալիս»: Դպրոցներն ունեն ուսուցիչներ, որոնց համար մայրենի լեզուն եւ հայրենասիրութիւն ուսուցանելը նոյն գործն է, նոյն գերագոյն նպատակը: Ամէն մի դպրոցական հանդէս այլ բան չէ, քան հաւատարմութեան երդում մայր հայրենիքին եւ մայրենի լեզուին:

Եւ, առհասարակ, ինչքան որ կարողացայ նկատել, եգիպտահայ գաղութն ապրում է հոգեւոր, կրթական, մշակութային լեցուն ու լիարժէք կեանքով: Լոյս տեսնող երեք թերթերին եւ մշակութային հաստատութիւններին նայելով, չես էլ կարող ասել, թէ գործ ունես նօսրացած գաղութի հետ: Հայ Գեղարուեստասիրաց Ակումբ, Կոկանեան Սրահ, Ալեքսանդրիայի Տիգրան Երկաթ Ակումբ, եւ այլն, գործում են փեթակի պէս՝ շնորհիւ այն մեծաթիւ ատենապետների, փոխ ատենապետների, ատենադպիրների, որոնք անձնուիրաբար անում են այն, ինչ մենք կոչում ենք «հասարակական աշխատանք»: Եւ եթէ նրանց անունները չեմ տալիս, ապա պատճառն այն է, որ բոլորին թուել անհնար է, իսկ մէկի անունը տալ, միւսինը ոչ՝ անյարմար:

Գաղութի մշակութային կեանքի մասին խօսելիս, չի կարելի զանց առնել Գահիրէի Հայկական ամէնօրեայ ռատիոժամը: Այս հաղորդումները, որոնցից մի քանիսը լսել եմ Վարուժան Գազանճեանի եւ տիկիններ Տէօվլէթեանի ու Պայրամեանի մատուցմամբ, կրում են մասնագիտական իմացութեան եւ լաւ ճաշակի կնիքը:

Երեւի հասկանալի պէտք է լինի այն գոհունակութիւնը, որ ապրում էր «հայրենի հիւրը», տեսնելով թէ գաղութի կրթական եւ մշակութային կեանքում ինչ ակներեւ դեր են խաղում Երեւանում մասնագիտական կրթութիւն առած

երիտասարդները: Ուզում եմ մտաբերել Երեւանի Համալսարանի շրջանաւարտներ Մանուկ Գալիփակճեանին (Ալեքսանդրիայի Պօղոսեան Վարժարանի տնօրէն, լեզուի եւ գրականութեան ուսուցիչ), Տիգրան Գէորգեանին (Նուպարեան Ազգային Վարժարանի լեզուի եւ գրականութեան ուսուցիչ), Երեւանի Կոնսերվատորիայի շրջանաւարտ Հայկ Սարգիսեանին՝ շնորհաշատ մի խմբավարի՝ «Կռունկ» ախորժալուր երգչախմբով, Պոլիտեխնիկականի շրջանաւարտ՝ ճարտարապետ եւ բանաստեղծ Յակոբ Գոյումճեանին, որ եկել էր Պէյրութից եւ Կոկանեան սրահում մի ամբողջ երեկոյ գերեց իր գեղեցիկ ասմունքով, Գեղարուեստաթատերականի շրջանաւարտ՝ Ժիրայր Փափագեանին՝ բեմադրիչ եւ դերասան, որ իր կնոջ, շնորհալի դերասանուհի Նորա Էքսերճեանի հետ եկել էր Լոս Անճելէսից՝ զարդարելու համար Միջքաղաքային Երիտասարդական Փառատօնը (այն իրօք, փառաւոր տօնը, որ կայացաւ Գահիրէի Ամերիկեան Համալսարանի վիթխարի դահլիճում), դրա միւս մեծ շեշտերն էին «Կռունկ» երգչախումբը, Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» Մշակութային Միութեան պարախումբը՝ Յօլինէ Փալանճեանի պատրաստութեամբ: Երբ խօսում էի այդ երիտասարդների հետ, երբեմն այնպէս էր թում, թէ նրանք Սփիւռք գործուղուած երեւանցիներ են, որ Երեւանը յիշում են անհուն կարօտով: Նրանց խօսուածքն անգամ կրում է ինչ որ անորսալի երեւանեան կնիք:

Ինչպէս հայ Սփիւռքում առհասարակ, այստեղ եւս հրաւիրեալի կեցութեան «ծրագրումը» ոչ թէ հիւրը, այլ իմ հիւրընկալներն են տնօրինում՝ Սփիւռքում ընդունուած «հիւրը տանտիրոջ գառն է» սկզբունքով: Նրանք՝ Վահագն Տէփոյեան, Պերճ Թէրզեան, Աւետիս Եափուճեան, Նորայր Տէօվլէթեան, Ժիրայր Թովմասեան եւ ուրիշներ, վերին աստիճանի ճշդապահ, պարտաճանաչ, պատրաստակամ մարդիկ, այնպէս արեցին, որ հնարաւոր դարձաւ գլուխ

բերել բառականաչափ ընդարձակ մի ծրագիր, մէկ ամսուայ գրեթէ ամէն մի օրը ենթարկելով որեւէ նպատակի: Նրանք էին որոշում, թէ որ բանախօսութիւնը որտե՞ղ պիտի կարդալ՝ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Թէքէեան Սրահում, թէ՛ Հայկական Ընթերցարանում, Հելիոպոլիս Կոկանեան Սրահում, թէ՛ այլուր: Այս դահլիճներում հանդէս եմ եկել մեր դասական գրողներին, արեւմտահայ եւ արեւելահայ լեզուներին, հայ բեմական արուեստի անցած ուղուն, հայ ժամանակակից մշակոյթին վերաբերող բանախօսութիւններով: Ալեքսանդրիայի Տիգրան Երկաթ հիանալի ակումբում խօսել եմ մայր հայրենիքի այսօրուայ նուաճումների, գալիք տարի Երեւանում կայանալիք Սփիւռքահայ Գեղարուեստական Ինքնագործունէութեան Փառատօնի, այն մասին, թէ որն է սփիւռքահայ երիտասարդի տեղն ու դերը ժամանակակից անհանգիստ աշխարհում, դպրոցներում՝ մայրենի լեզուի, գրականութեան, ուսուցիչների անձնուէր աշխատանքի մասին:

Բարեբախտաբար, իմ հիւրընկալները յուշում էին նաեւ, թէ ինչպէս պէտք է խօսել՝ ըստ հնարաւորին պարզ, դանդաղ, դադարներով: «Իմացիր,-ասում էր ամէնիմաց Վ. Տէփոյեանը,-սա Երեւանը չէ, ոչ ալ Պէյրութը: Երբ ասում ես «մի մարդ», քո ունկնդիրը պէտք է ժամանակ ունենայ դա իր մտքում «մարդ մը» դարձնելու համար»: Ինձ, անուղղելի արագախօսիս, նրա խորհուրդները շատ պէտք եկան: Միւս խորհուրդը, որ արդէն տրուում էր չորս կողմից, յատկապէս լեզուի նուրբ զգացողութեան տէր մտաւորական Պ. Թէրզեանից, վերաբերում էր օտար բառերի գործածութեանը: Ես օտարաբանութիւնների սիրահար չեմ, բայց էլի աչքս վախենում էր լսարաններից՝ այնպէս չլինի, որ յետոյ հարցնեն՝ այսինչ բառն ի՞նչ է նշանակում: Օ՛, Սփիւռքում պէտք է հեռու կենալ օտար բառերից: Մարդիկ վստահ են, որ ամէն բառի հայերէնը կայ, կամ կարելի է ստեղծել: Մենք այդպէս չենք կարծում:

Էջեր կարելի է գրել այս կնճռոտ խնդրի շուրջը՝ մեր ունեցած վէճերի մասին: Ինձ թուում է, որ այստեղ ո՛չ նրանք են անվերապահորէն իրաւացի, ո՛չ էլ մանաւանդ, մենք...

Մի կենցաղային մանրամասնութիւն. բանախօսութիւնները սկսում էին ուշ, երեկոյեան 9-ից ոչ շուտ: Տպաւորութիւնս այն է, որ ցերեկը շտապող, բազմազբաղ մարդիկ այդ ժամից յետոյ ոչ մի տեղ չեն շտապում: Բացի ինձնից՝ դէպի տուն, «Օդէոն» հիւրանոց, որ հիւրընկալներիս բառարանում «պանդոկ» էր կոչւում: Բանախօսութիւններից յետոյ էլ՝ զրոյցներ ընթրիքի սեղանի շուրջը, այնպէս որ, ես էլ, գահիրէահայութեան հետ միասին, դարձայ գիշերաբնակ:

Դատելով ունկնդիրներիս նրբանկատ վերաբերմունքից եւ մամուլի անյապաղ արձագանգներից, բանախօսութիւնները լաւ ընդունելութիւն էին գտնում, մի բան, որ ունի իր բացատրութիւնը. գաղութը վաղուց է, ինչ նման առաքելութեամբ իրեն այցելած «հայրենի մտաւորական» չէր տեսել, մարդիկ կարօտ են ո՛չ միայն երգիչների ու երաժիշտների, բանախօսներ էլ պէտք են: Առիթը որ եկաւ, ասեմ նաեւ, կարօտ են նաեւ գրքերի («Արեւ»-ի մեղուաջան խմբագիր Ա. Եափուճեանի խնդիրքը), գրական եւ արուեստաբանական հանդէսների (սա էլ Պ. Թէրզեանի խնդիրքը):

Թող տարօրինակ չթուայ, եթէ ասեմ, որ «ծանրակշիռ» բանախօսութիւններից աւելի դժուարութեամբ ինձ յաջողում էին, աւելի ճիշդ՝ չէին յաջողում իմ ելոյթները դպրոցներում, դպրոցական հանդէսներին: Չկարծէք թէ հեշտ բան է բազմամիլիոն արաբախօս քաղաքներում ծուարած հայկական վարժարաններում խօսել նրանց սաների, երբեմն շատ փոքրիկների սրտառուչ երգերն ու արտասանութիւնները լսելուց յետոյ: Սիրտ է պէտք, որ դիմանայ....

* * *

Երկիր տեսնելը, ճանաչելն է Սփիւռք գործուղուած ամէն

մէկի, այսպէս ասած, յաւելեալ շահը: Քիչ բան չէ՝ յայտնուել եգիպտոսում (որ իրենք՝ արաբները Մասր են կոչում), երկիր, որի առասպելը քեզ ուղեկցում է մանկութիւնից՝ դպրոցական դասագրքերում զետեղուած փարաւոնական ժամանակների ուղղաձիգ կերպարներից ու խորհրդաւոր բուրգերից: Երկիր, որ ամէն ինչով տարբեր է մեր երկրից. ծմեռուայ կէսին 20-25 աստիճան տաքութիւն, համատարած հարթավայր, Նեղոսի սքանչելի աւազանը՝ կանաչ դաշտերով (տարեկան երեք բերք է հաւաքում): Մի ահռելի Գահիրէ (ասում էին հասել է 14 միլիոնի), անպատմելիօրէն խճողուած քաղաք, ճարտարապետական այն ոճով, որ կոչում է «գաղութային», երկրորդ յարկ կազմող աւտոճանապարհներով, չգիտես դէպի որ կողմը հոսող կաւագոյն Նեղոսով, մեքենաներով տրաքւելու չափ լեցուն մայրուղիներով (այդ պայմաններում, յիրաւի, զարմանք յարուցող ճշդապահութեամբ), երկրորդական փողոցների այնպիսի լաբիրինթոսով, որից ինքնուրոյնաբար դուրս գալը, միանգամայն անյոյս գործ է (փորձով իմացայ): Բնակչութիւն՝ անսահմանօրէն բարի, բարեացական, համբերատար: Այս վերջինը՝ գլխաւոր յատկանիշ: – Ասա՛, խնդրե՛մ, – մի անգամ ասաց Վ. Տէփոյեանը վարորդին դառնալով,– ինչ է մեր վարորդի անունը՝ Սաբրա Ղալի: Նշանակում է համբերութիւն թանկագին...

Այսպէս, երեւի, բոլոր եգիպտացիները կարող են կոչուել, նաեւ նրանք, որ հայ թերթերի գրաշարներն են:

Եգիպտական բուրգերը, Սֆինքսը, անթիւ-անհամար յուշարձանները: Դէ՛, դրանց մասին այնքան շատ ու այնքան լաւ են գրուել, որ վերստին փորձել անխոհեմ բան կը լինէր, մանաւանդ որ ես չեմ եղել Լուքսորում, եգիպտական ամենանշանաւոր յուշարձանավայրում (ասում էին՝ Լուքսորը չես տեսել՝ հին Եգիպտոսը չես տեսել): Դա շատ հեռու է Գահիրէից, մեկնելու եւ վերադառնալու համար պէտք էր առնուագն չորս օր, որ

այնպէս էլ չգտնուեց: Իսկ բուրգերն ու Սֆինքսը՝ հազիւ 20 քիլոմէթր, տեսել եմ մի քանի անգամ: Նորութիւն չպիտի ասեմ՝ մեծ տպաւորութիւն են թողնում, գիշերը՝ յատկապէս: Ինչ որ մի խորհուրդ, մտքի համար անհասանելի բան կայ նետի պէս երկինք մխրճուող, դէպի բարձրերը միտող այդ յաւերժական կառոյցների մէջ: Ասուած է՝ «Ամէն ինչ վախենում է ժամանակից, ժամանակը վախենում է բուրգերից»: Ճիշդ չէ, ժամանակից բուրգերն էլ վախենում են՝ ակներեւօրէն հողմահարուած են... Աշխարհ տեսած Ալ. Շիրվանզադէն գրել է, թէ միայն երկու բան գերազանցել են իր նախապէս կազմած պատկերացումները՝ եգիպտական բուրգերը եւ Նիակարայի Ջրվէժը: Ինձ վիճակուել է տեսնելու երկուսն էլ եւ համաձայնելու գրողի հետ (ինչ մեծ պատիւ նրա համար): Թող թոյլ տրուի ինձ համաձայն լինելու Երուանդ Օտեանի մի տպաւորութեան կէսի հետ: Նա անթեղ է համարել եւ Սֆինքսը եւ բուրգերը: Սֆինքսը իր փշրուած-աղաւաղուած դէմքով իմ մէջ եւս համակրանք չյարուցեց, մանաւանդ որ իրեն մի քանի հարց տուի աշխարհիս կնճռոտ հանգամանքների, ազգային անորոշ ճակատագրերի մասին, եւ մնացի անպատասխան... Իրաւունք ունէր՝ ինչո՞ւ են մարդիկ իր դէմքն այդպէս ջարդել ու աղճատել: Ասում են քիթը (թէ՛ մօրուքը) պահում է Բրիտանական Թանգարանում, եւ անգլիացիները «մեծահոգաբար» համաձայնել են վերադարձնել... Այն անգլիացիները, որոնց թանգարանում աւելի շատ եգիպտական (եւ ինչո՞ւ միայն եգիպտական) կողոպտուած հնութիւններ կան, քան բուն երկրների թանգարաններում միասին առնուած:

Կեանքում ինչ կայ աւելի գրաւիչ, քան շփումը մտքով ու զգացմունքով հարուստ մարդկանց հետ: Պարտքս եմ համարում ասելու, որ եգիպտահայ գաղութն այսօր էլ ունի մտաւորական գործիչներ, որոնց հետ զրուցելը հոգեկան բարձր հաճոյք է: Ինձ, իբրեւ «հայրենի մտաւորական»,

ընդունեցին գրկաբաց եւ ընծայեցին բոլոր դիրութիւնները՝ ճանաչելու ոչ միայն գաղութի, այլեւ եգիպտական ժողովրդի այսօրուայ կեանքը, բարքերը, մշակոյթը: Չեմ կարող երախտագիտութեամբ չմտաբերել եգիպտահայութեան Հոգեւոր Առաջնորդ Զաւէն Չինչինեանին, Վահագն եւ Ալիս Տէփոյեաններին, Ժիրայր Թովմասեանին, Աւետիս եւ Անժէլ Եափուճեաններին, Պերճ եւ Սեդա Թէրզեաններին, Նորայր եւ Արաքսի Տէօվլէթեաններին, Վահան եւ Սիպիլ Ալեքսանեաններին, մանկավարժ Նշան Վարդեանին, գրող Ստեփան Շահպազին, խմբավար Էդուարդ Յակոբեանին, Օննիկ Ալեքսանեանին, Կարպիս Եազըճեանին, թատերագիր Սարգիս Փափագեանին եւ էլի ուրիշների (կ'ուզենայի, որ այդ «ուրիշները» ներողամիտ լինէին իրենց անունները չտալու համար. նրանց հետ աւելի քիչ շփումներ եմ ունեցել, բացի այդ՝ շատերն էլ երիտասարդ են, կարող են համբերել): Եւս մի բացատրութիւն. ամուսինների անունները միասին տալն իմ կողմից պարզ քաղաքավարութիւն չէ: Ինչպէս սփիւռքահայութեան մէջ ամէնուրեք, եգիպտահայ գաղութում եւս ականատես եղայ այն գեղեցիկ երեւոյթին, որ կանայք «հասարակական աշխատանքում» իրենց ամուսինների աջակիցն են ու լծակիցը, գործի մասնակիցը, երբեմն ոչ պակաս չափով (այլապէս, - մտածում էի,- նրանք ինչպէ՞ս պիտի հանդուրժէին ամուսինների տեւական բացակայութիւնը սեփական տնից):

Մի խօսքով, իմ հիւրընկալները մեծապէս նպաստեցին, որ ես իմ անելիքն անեմ հնարաւորի առաւելագոյն չափով: Եւ եթէ ինձ գէթ մի որոշ չափով յաջողւեց ի կատար ածել իմ առաքելութեան նպատակը, որ Մայր Հայրենիք-Սփիւռք կապերի ամրապնդումն էր, ապա դա պայմանաւորուած էր իմ հիւրընկալների սրտագին վերաբերմունքով:

13 Օգոստոս, 1985

ԹԷ ԻՆՉՊԷՍ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՐՁԱՅ

5 Ապրիլ 1964-ին պիտի տօնուէր նախապէս յիշատակուած Ալ. Սարուխանի յորելեանը: Հրաւիրուած էին օտար հիւրեր, որոնցմէ մէկն էր օրուան մշակոյթի նախարար Ապտէլ Քատէր Հաթէմը: Ինծի պարտականութիւն տրուած էր արաբերէնով բացման խօսքը արտասանելու: Շատ տագնապած էի, նախ՝ որովհետեւ հանդիսութիւնը հայկական միջավայրէն դուրս սրահի մը մէջ պիտի կայանար: Եւ երկրորդ՝ առաջին անգամ էր որ օտար սրահի մէջ արաբերէնով հանդիսավարութիւն պիտի ընէի:

«Կորսուած» բառը լաւագոյնս պիտի նկարագրէ այդ օրուան վիճակս:

Ամէն կողմէ յիսուն տեսակ գործ փաթեթեր էին գլխուս, որոնցմէ կրցեր էի օձիքս քաղաքավարութեամբ ազատել:

Վերջին «փորձանքը» այն էր, որ յորելենական հանդիսութենէն ետք, առաջարկեր էին ինծի որ Եգիպտոսի Բարեգործականի Շրջանակային Յանձնաժողովին անդամ ըլլամ:

Մարդուժի մեծ պակաս կար այդ օրերուն: Զանազան պատճառներով, շրջանակս ալ քաջալերեր էր զիս որ ընդունիմ այդ առաջարկը:

Վերջապէս, անունս այլ անուններու հետ Ամերիկա դրկուեր եւ այնտեղէն համաձայնութիւն ստացեր էին:

Պաշտօնական նամակով մը տեղեկացուցին, թէ Երկուշաբթի՝ 15 Յունիս 1964-ին, առաջին ժողովը պիտի գումարուի:

Բացատրեր էի, որ համալսարանի քննութիւններ ունիմ եւ չեմ կրնար ներկայ ըլլալ:

Ըսեր էին, թէ ասիկա անդրանիկ նիստն է եւ նոր դիւան պիտի ընտրուի:

Չէի կրնար չերթալ, առաջին օրէն բացակայիլը տգեղ պիտի ըլլար:

Ի վերջոյ գացի առաջին ժողովին ներկայ ըլլալու:

Ժողովականները զիս անգամ մը վերէն վար չափեցին, կարծես ըսել ուզէին՝ «Ո՞վ է այս մանչը, որ մեզի հետ ժողովական ըլլալու եկեր է...»: Բոլոր ժողովականները 45-50 տարեկան մարդիկ էին, իսկ ես՝ միայն 26 տարեկան, անոնց հետ պէտք էր խօսք գտնել:

Այդ առաջին ժողովէն ետք, 60 տարիներ շարունակ, ծառայեցի Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքին, Եգիպտոսի շրջանակին մէջ:

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԽՕՍՔԸ⁽⁵⁾

Գերաշնորհ Սրբազան Հայր,
Օրուան Պատուոյ Հիւր ազնուափայլ Տիկին ՀՀ-ի
Եգիպտոսի դեսպանի մեծարգոյ ներկայացուցիչ,

95 տարիներ կը բաժնեն մեզ պատմական բարեբաստիկ այն օրէն, երբ եգիպտահայ առաջաւոր դէմքերու հոյլ մը, թիւով 10 հոգի, գլխաւորութեամբ Պօղոս Նուպար Փաշայի, 15 Ապրիլ 1906-ին, Ս. Զատիկի օրը հիմը դրին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ կարճ ժամանակէն պիտի դառնար բազմակողմանի գործունէութիւն ունեցող համագաղութային մեծ կազմակերպութիւն մը, որուն պիտի վիճակուէր նախախնամական դեր մը 20-րդ դարու հայոց պատմութեան մէջ եւ որուն պիտի յառէին հայ ժողովուրդի զաւակներուն նայուածքները, ամէն անգամ որ համագաղային տարո-

⁵ Ելոյթ ունեցողը ՀԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակին մէջ տասնամեակներու ընթացքին տարբեր հանգամանքներով ունեցած է բազմաթիւ ելոյթներ, որոնցմէ այս հատորին մէջ կը ներկայացուի 2001-ին Միութեան 95-ամեակին առիթով իր ելոյթը, որ յատկանշական է իր համապարփակ բովանդակութեամբ:

Թերեւս ոմանք այս ելոյթը ծանրաբեռնուած գտնեն պատմական տուեալներով:

Այս տեսակէտին պատասխանը այն պիտի ըլլար, որ եթէ ելոյթին նպատակը անկիւնադարձային պահու մը, 95-ամեակ, Միութիւնը ներկայացնելն է, ելոյթ ունեցողը պարտաւոր է Միութեան անցեալի եւ ներկայի գործունէութիւնը ներկայացնել համահայկական եւ տեղական մակարդակներով, առանց շրջանցելու պատմական տուեալները, որոնք վաւերականութիւն կու տան խօսքին:

ղութին եւ նշանակութիւն ունեցող կարելոր ձեռնարկ մը գլուխ հանելու հարցը ներկայանար:

Ինչո՞ւ Բարեգործականը, առաջին իսկ օրէն, յաջողեցաւ իր առաջադրութիւններուն մէջ եւ ինչո՞ւ հակառակ 95 տարիներու թաւալումին, ան կրցաւ պահել իր կենսունակութիւնը եւ յարաճուն վերելքը:

Այս «ինչու»ներուն իբրեւ պատասխան, կարելի է թուել բազմաթիւ պատճառներ, որոնցմէ կարելորագոյններն են Բարեգործականի բոլոր ժամանակներու ղեկավարներուն խոր սէրն ու նուիրումը՝ հանդէպ մեր ժողովուրդին եւ հայրենիքին, անոնց խոհեմ եւ իրատես մօտեցումը՝ մեր ազգային հարցերուն, անոնց մտքի ճկունութիւնը՝ պատշաճելու ժամանակի հոլովոյթով յառաջ եկած նոր իրավիճակներու, անոնց խղճամիտ յանձանձումը՝ Միութեան դրամագլուխին եւ անոնց սկզբունքային դիրքորոշումը՝ ճակատաբաց կերպով հաշուետու ըլլալու մեր ժողովուրդին:

Բարեգործականի ղեկավարութեան մօտ նկատուող այս ընդհանուր յատկանիշները, սկսելով Միութեան հիմնադիր նախագահ Պօղոս Նուպարէն, Գալուստ Կիւլպէնկեանէն, Զարեհ Նուպարէն, Արշակ Գարակէօզեանէն մինչեւ Ալեք Մանուկեան եւ Լուիզ Մանուկեան Սիմոն, Միութեան համար կերտեցին վստահութեան ապառաժեայ վարկ մը, որ անհատնում գանձ մըն է, բոլոր չափանիշներով:

Այս իրողութեան անհերքելի փաստերն են, 95 տարիներու տարածքին Միութեան եղած մեծագումար նուիրատուութիւնները՝ բարեյիշատակ եւ օրհնեալ հարիւրաւոր բարերարներու կողմէ:

Յաճախ կը խօսուի Բարեգործականի նիւթական կարելիութիւններուն մասին:

Օրինակ, 1999-ին Միութեան Կեդրոնական Վարչութեան յանձանձած ընդհանուր դրամագլուխը հասած է 227 միլիոն տոլարի: Իսկ կրթական, մշակութային, բարեսի-

րական եւ մարզական նպատակներու համար նոյն տարին կատարուած յատկացումները հասած են 28 միլիոն տոլարի:

Հայաստանի անկախացումէն յետոյ, վերջին տասը տարիներուն ընթացքին, Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին միջոցներով, հայրենի տարբեր ծրագիրներու համար տրամադրուած է 40 միլիոն տոլար:

Այս բոլորը՝ անկախաբար աշխարհատարած Միութեան շրջանային կամ տեղական կառոյցներուն ունեցած գործունէութենէն եւ յատկացումներէն:

Սակայն, արդեօք Բարեգործականը գնահատելի է միայն իր նիւթական կարելիութիւններուն համար:

Այդպէս կրնան երեւակայել մարդիկ, որոնք կը հաւատան միայն նիւթական արժէքներու:

Բարեգործականի ունեցած նիւթական կարելիութիւնները արդիւնք են ժողովուրդին ունեցած վստահութեան՝ Բարեգործականի տեսլականին եւ գործունէութեան հանդէպ:

Բարեգործականին մօտ նիւթականէն առաջ եւ նիւթականէն աւելի, բարոյական ուժը եւ արժէքն է որ գերադաս է:

Միութեան ունեցած բարոյական այդ ուժն է, որ առաջին օրէն մղում տուաւ անոր մարդասիրական եւ ազգաշինական գործունէութեան եւ որուն շնորհիւ կարելի եղաւ օգնութեան ձեռք կարկառել Արեւմտահայաստանի թշուառ եւ ճնշուած գիւղացիին, անոր տրամադրելով սերմնացու, երկրագործական գործիքներ եւ լծկան կենդանիներ, որպէսզի ան չլքէ իր պապենական հողը եւ Արեւմտահայաստանը հետզհետէ չպարպուի իր բնիկ տարրէն՝ հայութենէն:

Իր հիմնադրութենէն անմիջապէս յետոյ, Բարեգործականը օգնութիւն հասցուց Կովկասի հայ թաթարական կոիւնտերու աղէտեալներուն:

Նոյնը ըրաւ 1909-ին, Ատանայի կոտորածին հետեւան-

քով անպաշտպան մնացած հազարաւոր որբերուն եւ այրիներուն:

Իսկ մինչեւ 1913, այսինքն իր հիմնադրութենէն միայն 7 տարիներ յետոյ, Արեւմտահայաստանի ներքին գաւառներուն մէջ, Միութիւնը արդէն հիմնած էր 38 վարժարաններ, թրքախօս եւ քրտախօս հայերու համար:

Սակայն, պատմութիւնը այլ կերպ տնօրինած էր հայ ժողովուրդին ճակատագիրը:

Շուտով վրայ հասաւ Մեծ Եղեռնը եւ Միութեան ծրագիրները պարտադրաբար փոխուեցան՝ նոր պայմաններու հրամայականին տակ:

Միութիւնը Եղեռնէն մազապուրծ ճողոպրած բազմա-հազար կարիքաւորներուն մեծ քանակութեամբ դեղորայք, սննդեղէն եւ հագուստեղէն հասցուց:

Մուսա լերան հերոսամարտով փրկուած հայորդիներու համար, Փոր Սայիտ քաղաքին մօտ ստեղծուած հայկական վրանաքաղաքին մէջ, հիմնեց Սիսուան վարժարանը:

Առաջին Համաշխարհային Պատերազմի ամարտէն յետոյ, Դամասկոսի, Մուսուլի, Պաղտատի, Եդեսիոյ, Չորք Մարզուանի, Մերսինի, Սուէտիոյ Հաճընի, Տարսոնի եւ Քիլիսի մէջ հաստատեց որբանոցներ, պատսպարաններ եւ հիւանդանոցներ:

Կիլիկիոյ պարպումէն ետք, Սուրիա եւ Լիբանան ասպատանած հայութեան, ինչպէս նաեւ 1922-ի Իզմիրի աղէտէն ետք, Յունաստան ասպատանած հայութեան համար, դարձեալ հիմնեց բարեսիրական հիմնարկներ եւ անոնց հասցուց սնունդ, դեղորայք եւ հագուստ:

1926-ին, նորահաստատ Մելգոնեան Հիմնադրամի միջոցներով, Բարեգործականը հիմնեց Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը եւ նոյն հիմնադրամին միջոցաւ կատարեց հրատարակչական լայնատարած գործ:

1918-ին, հայկական պետականութեան վերականգումէն

յետոյ, Բարեգործականը օգնութիւն փութացուց թշուառութեան եւ սովի մատնուած հայրենի ժողովուրդին:

- 1920-ին Յունաստան ապաստանած հայերուն միջոցներ ստեղծեց ներգաղթելու Հայաստան: Նոյնպէս, Երուսաղէմի իր որբանոցներուն 250 որբերը Հայաստան փոխադրեց:

- 1923-ին Հայաստանի մէջ հաստատեց Նոր Եւդոկիա ամառը:

- 1926-ին Շիրակի մեծ երկրաշարժին աղէտեալներուն համար կազմակերպեց ընդհանուր հանգանակութիւն:

- Երեւանի մէջ կառուցեց՝

- Դարուի Յակոբեան մայրանոցը:

- Մարի Նուպար ակնաբուժարանը:

- Աւետ Սարգիս հոգեբուժական հիւանդանոցը:

- Մտաւորականներու շէնքը:

Նոյնպէս, ան օժանդակեց Երեւանի Պետական Համալսարանին, ինչպէս նաեւ կառուցեց Նուպարաշէն ամառը:

Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ, 1923-էն սկսեալ, Բարեգործականը սփիւռքահայ առաջին կազմակերպութիւնն էր, որուն թոյլատրուեցաւ գործել Հայաստանի մէջ:

Այդ գործունէութիւնը շարունակուեցաւ մինչեւ 1937, երբ հետզհետէ ճնշիչ դարձող սթալինեան վարչակարգը վերջ տուաւ անոր: Բարեգործականի հաստատած բոլոր հիմնարկներուն անունները ջնջուեցան: Նուպարաշէնը վերածուեցաւ Սովետաշէնի, բայց Բարեգործականի ղեկավարութիւնը հայրենիքին հանդէպ ո՛ր չկապեց, քինախնդրութիւն չբարոզեց, այլ ընդհակառակը, հետագային առաջին իսկ առիթին, երբ կարելիութիւն ստեղծուեցաւ հայրենիքին կրկին օժանդակելու, Բարեգործականը դարձեալ պատնէշին վրայ էր, դարձեալ առաջին գծի վրայ, մեր հայրենիքին եւ մեր ժողովուրդին շահերը գերիվեր համարելով ամէն այլ նկատումէ:

Ժամանակի թափալումին հետ, յետեղեռնեան մատուցելու Երիտասարդ սերունդներուն համար բնականոն պայմաններ ստեղծելու իր ճիգին մէջ, Բարեգործականը օժանդակութիւն հասցուց գոյութիւն ունեցող հայկական վարժարաններուն եւ սկսաւ բանալ սեփական նոր վարժարաններ:

Նոյնպէս, ան սատար կանգնեցաւ Երիտասարդական կազմակերպութիւններու եւ հիմնեց մարզարաններ ու Երիտասարդական կեդրոններ:

Ան, 1933-ին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ստանձնեց Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան հովանաւորութիւնը: Այդ ընկերակցութիւնը, որ այս տարի արդէն իսկ կը տօնէ իր հիմնադրութեան 70-րդ տարեդարձը, ունեցաւ հիմնական դեր Միջին Արեւելքի գաղութներու մարզական եւ մշակութային կեանքին մէջ:

Բարեգործականը Գահիրէի մէջ 1933-ին հիմնեց Նուպար մարզարանը, որուն 1948-ին եկաւ միանալու Եգիպտոսի մէջ մինչ այդ 20-ական թիւերու կէսէն սկսեալ գործող, զուտ մարզական եւ ապաքաղաքական ուղղութիւն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ը:

Այս երկուքին միացումով, միշտ Բարեգործականին հովանիին տակ, ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐը, որ Եգիպտահայ գաղութի ամենէն մեծ եւ ժողովրդականութիւն վայելող մարզական կազմակերպութիւններէն է:

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.ին քոյր հանդիսացող Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.ը եւս 50-ական թուականներու վերջերուն վայելեց Բարեգործականի հովանաւորութիւնը եւ, ի նշան պատկանելիութեան եւ երախտագիտութեան, իր անունին վրայ աւելցուց ՆՈՒՊԱՐ անունը եւ Գահիրէի իր քոյր միութեան պէս վերակոչուեցաւ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ:

Դժուար պիտի ըլլայ մանրամասնօրէն անդրադառնալ Բարեգործականի համահայկական գործունէութեան՝ Աւստրալիայէն Եւրոպա, Հիւսիսային եւ Հարաւային Ամե-

րիկաներէն Միջին Արեւելք եւ Հայաստան:

Բարեսիրական, կրթական, մշակութային եւ մարզական բազմաբնոյթ գործունէութիւն ունեցող այս Միութիւնը, իր ուրոյն տեղը ունի սփիւռքահայութեան իրերայաջորդ սերունդներու սրտին մէջ: Ան Սփիւռքի 22 երկիրներու մէջ գործելէ զատ, 1988-ի Սպիտակի ահաւոր երկրաշարժէն եւ մանաւանդ Հայաստանի անկախացումէն ասդին, հայրենիքի մէջ եւս կը ծաւալէ լայն գործունէութիւն:

Այսօրուան հանդիսութեան առթիւ պատրաստուած յայտագրի գրքոյկներուն մէջ, այս մասին տրուած են որոշ մանրամասնութիւններ:

Մեր այսօրուան խօսքին մէջ առաւելաբար ծանրացանք Բարեգործականի առաջին տասնամեակներու գործունէութեան վրայ, որովհետեւ այդ մասին շատ չի խօսուիր:

Բարեգործականի այժմու համագաղութային եւ հայրենական գործունէութեան մասին լայն տեղեկութիւններ կան Բարեգործականի մամուլին մէջ:

Այսպէս, գոյութիւն ունի Բարեգործականի Կեդրոնական Վարչութեան հայերէն լեզուով «Յուշարար-Միութիւն» պաշտօնաթերթը, որ լոյս կը տեսնէ Ամերիկայի մէջ:

Նոյնպէս, գոյութիւն ունին անգլերէն AGBU-ն, ֆրանսերէն UGAB-ը եւ սպաներէն GENERACION 3 (թրէս)-ը, որոնք լոյս կը տեսնեն Ամերիկայի, Ֆրանսայի եւ Արժանթինի մէջ:

Այս վերջին երեք հրատարակութիւնները կը բաժնուին 100,000-է աւելի տուներու, հաստատութիւններու եւ պետական հիմնարկներու, ինչ որ զանոնք կը դարձնեն սփիւռքահայ պատմութեան մէջ ամենալայն ծաւալում ունեցող պարբերականները:

Բարեգործականի 95-ամեակին առիթով ելոյթ ունեցողի մը խօսքը, կարգ մը յաւուր պատշաճի այլ յաւելումներով, կրնար այսքանով վերջանալ, եթէ այդ ելոյթը տեղի չունենար Գահիրէի մէջ եւ Գահիրէի Հայկական Բարե-

գործական Ընդհանուր Միության կազմակերպած 95-ամեակի հանդիսության ընթացքին:

Այդ բերումով, այս հանդիսության յարմար առիթն է կ'օգտուինք պատշաճօրէն ներկայացնելու նաեւ Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամի գործունէութիւնը:

Գիտէք թէ, բարեյիշատակ բարերարուհի Սաթենիկ Չագըր, իր կեանքի վերջալոյսին, ասկէ մօտ 25 տարիներ առաջ՝ 1976-ին, Գահիրէի Բարեգործականին նուիրեց Զամալէքի մէջ գտնուող իր մենատունը եւ անոր շրջակայ ընդարձակ տարածութեամբ հողը:

Այդ նուիրատուութիւնը իր ժամանակին բաւական աղմուկ յառաջացուց ու այլեւայլ կարծիքներ յայտնուեցան այդ մասին: Նոյնիսկ, առաջարկներ եղան որ բարերարուհին յետս կոչէ իր նուիրատուութիւնը եւ զայն փոխանցէ Բարեգործականէն տարբեր այլ հաստատութեան մը կամ հաստատութիւններու:

Հարկ եղաւ բաւական շունչ եւ ժամանակ վատնել՝ բացատրելու եւ համոզելու, թէ բարերարուհին գիտակցաբար եւ իր ազատ կամքով կը կատարէր այս նուիրատուութիւնը, քանի որ ան կը սերէր Բարեգործականի առաքելութեան հաւատաւոր բարերարներու ընտանիքէ մը, եւ ասելին, իր ամուսինը՝ Ճանիկ Չագըրը տասնամեակներ շարունակ գործուն եւ ղեկավար դեր ունեցած է Բարեգործականի Եգիպտոսի շրջանակին մէջ, երկար տարիներ վարելով Բարեգործականի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի ատենապետութիւնը, երբ այդ Յանձնաժողովին իրաւասութեան տակ կ'իյնային Եգիպտոսէն զատ Պաղեստինը, Լիբանանը եւ Սուրիան:

Պէտք չէ մոռնալ որ Գահիրէի Բարեգործականը, որ հիմնուած է 1911-ին եւ որուն 90-ամեակն է այս տարի, մինչեւ 1975 ունեցած է իր ուրոյն գործունէութիւնը, որ սակայն չի բաղդատուիր յետ Չագըրեան իր գործու-

նէութեան հետ:

Բարերարուհի Սաթենիկ Չագըրի նուիրատուութիւնը կու գար Գահիրէի Բարեգործականին առջեւ բանալու բազմաբնոյթ մշակութային եւ բարեսիրական գործունէութեան նոր եւ ընդարձակ դաշտ մը, եւ անոր ուսերուն կը բարձէր եգիպտահայ գաղութին մէջ պատասխանատու դերակատարութիւն մը:

1982-ին բարերարուհի Սաթենիկ Չագըրի շիջումով, Գահիրէի Բարեգործականի օրուան վարչութիւնը ինքզինք կը գտնէր վարչական եւ օրինական բարդութիւններու առջեւ, իբր հետեւանք բարեյիշատակ բարերարուհիին կողմէ իր կատարած նուիրատուութենէն յետոյ առնուած կարգ մը չհաշուուած քայլերու, որոնք դուռ կը բանային կալուածական ոտնձգութիւններու:

Իրերայաջորդ վարչութիւններ, օրինական երկարատեւ հետապնդումներով եւ ճիգ չխնայելով, յաջողեցան գոյութիւն ունեցող բոլոր ոտնձգութիւնները բառնալ, բացի մէկ ոտնձգութենէ, որուն դէմ բացուած դատը մինչեւ օրս կը շարունակուի:

Սակայն, այս ոտնձգութիւններուն հետեւանքով նուիրատուութեան իրագործումին ուշացումը, ամբողջ 14 տարիներ՝ մինչեւ 1996, կարծէք նախախնամական տնօրինութեամբ է որ կը պատահէր:

1991-ին մեր հայրենիքը կ'անկախանար:

Շուտով Հայաստան դիւանագիտական կապեր կը հաստատէր Եգիպտոսի հետ, որմէ անմիջապէս վերջ մէջտեղ կը դրուէր ՀՀ-ի Եգիպտոսի մէջ բացուելիք դեսպանութեան համար յարմար նստավայրի մը հարցը:

Ապագայի պատմագիրը օր մը պիտի գրէ Հայաստանի դեսպանութեան ստեղծումին պատմութիւնը, որ խիստ հետաքրքրական պատմութիւն մըն է, իր լուսաւոր եւ ստուերոտ էջերով:

Բարեգործականի այդ շրջանի վարչութեան անդամները

օրը օրին մասնակից եղան հայկական դեսպանատան ստեղծումի քայլերուն:

Հարկ է հոս կարելութեամբ շեշտել, թէ ի տարբերութիւն գաղութին մէջ գործող այլ կառոյցներու, Բարեգործականը որեւէ յանձնառութիւն չունէր դեսպանութեան համար նստավայր տրամադրելու:

Հակառակ այս հաստատ իրողութեան, ըստ սովորականին, բոլորին նայուածքները դարձեալ ուղղուեցան Բարեգործականին եւ անոր նուիրուած Սաթենիկ Չագըր կալուածին:

Այս առթիւ եղան բազմաթիւ չնաշխարհիկ, բարեմիտ եւ երբեմն նաեւ չարամիտ առաջարկներ, որոնց անսալու պարագային, Սաթենիկ Չագըր նուիրատուութիւնը կրնար անվերադարձ կերպով վտանգուիլ եւ այդ նուիրատութեամբ Բարեգործականի առած օրինական եւ բարոյական յանձնառութիւնը արմատական խախտումի ենթարկուիլ:

Հակառակ այս բոլորին, Բարեգործականի վարչութեան անդամները չընկրկեցան, չտատամսեցան եւ շուկայիկ սակարկութիւններ չըրին, այլ ընդհակառակը, Բարեգործականի հայրենասիրական հարուստ աւանդին ոգիով, անկարելին կարելիի վերածեցին, գիտակցաբար յանձն առնելով ծանր պատասխանատուութիւններ:

Արդարեւ, Բարեգործականի վարչութիւնը, առանց տարուելու իր վրայ փորձուող տարբեր կարգի ճնշումներէն, կացութիւնը լրջօրէն եւ բազմակողմանիօրէն քննարկելէ յետոյ, գտաւ լուծման գործնական եւ օրինական յարմարագոյն ելքը:

Այսպէս, Սաթենիկ Չագըր մենատան քովի պարապ տարածութիւնը, թաղապետական արտօնութեամբ մենատունէն անջատուելէ յետոյ, աճուրդով վաճառուեցաւ, որուն հետեւանքով գոյացած կարելոր դրամագլուխին եկամուտները ցարդ կը բաւարարեն Միութեան Սաթենիկ

Չազրր Հիմնադրամին բազմաբնոյթ գործունէութեան բոլոր պահանջները:

Իսկ, մենատունը իր շրջակայ պարտէզով, պարապ հողատարածքէն անջատելէ յետոյ, վարձուեցաւ ՀՀ-ի դեսպանութեան եւ այդ վարձքն ալ, որ նախատեսուած էր հոգացուիլ Բարեգործականէն տարբեր կառոյցներու կողմէ, դարձեալ կը հոգայ Բարեգործականը, այս անգամ Ամերիկայի Կեդրոնին միջոցաւ, քանի որ Գահիրէի Բարեգործականը օրինապէս նման քայլ մը առնելու իրաւունք չունի:

Արդար ըլլալու համար, տեղին է յիշել, թէ դեսպանութեան շէնքին վերանորոգման եւ կահաւորման պիտճէին մասնակցեցան եգիպտահայ գաղութի բոլոր կառոյցները եւ գաղութին շատ անդամներ: Այս հանգրուանին եւս Բարեգործականը բերաւ իր կարեւոր մասնակցութիւնը:

Մեր յիշած զոյգ քայլերով, շնորհիւ բարերարուհի Սաթենիկ Չազրրին եւ շնորհիւ Գահիրէի Բարեգործականի վարչութեան նախաձեռնութեան ու պատասխանատու կեցուածքին, ՀՀ-ի դեսպանութիւնը Եգիպտոսի մէջ կ'ունենար պատշաճ նստավայր մը, որ իր ճակատին ծածանող հայրենի պետութեան եռագոյն դրօշով, հպարտութեամբ կ'ունեցնէ բոլորիս կուրծքերը:

Նոյն ատեն կը ստեղծուէր Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Չազրր Հիմնադրամը, որ ընդփոյթ՝ 1996-ի Ապրիլէն սկսեալ կը ձեռնարկէր իր գործունէութեան:

Ինչ տուաւ այս հիմնադրամը եգիպտահայ գաղութին:

Դարձեալ պիտի հրաւիրեմ Ձեզի կարդալու այսօրուան յայտագրի գրքոյկին վերջին էջին վրայ երեւցող հիմնադրամի հնգամեայ յատկացումներուն ցուցակը (տեսնել էջ 89):

Այդ ցուցակէն կը հետեւի, թէ հիմնադրամին նպատակներուն համար, անցեալ հինգ տարիներուն ընթացքին ծախսուած է 3,250,000 ոսկի, որուն աւելի քան մէկ

միլիոնը միայն 2000 թուականի ընթացքին:

Այս ընդհանուր գումարէն, մէկ միլիոն 380 հազարը կը ներկայացնէ դարմանումի, կրթաթոշակի եւ առողջապահական հոգատարութեան ծրագրի վերաբերեալ եգիպտահայ անհատներու եղած յատկացումները:

Իսկ 3 միլոնին մնացեալ 1 միլոն 870 հազարը կը ներկայացնէ հաւաքականութեան ծառայող նպատակներու, այսինքն՝ մշակութային պետական եւ համաեգիպտական ծրագիրներու, ինչպէս նաեւ հայկական վարժարաններու եղած յատկացումները:

Գահիրէի Բարեգործականի վարչութիւնը, որ աւանդապահն է Միութեան Սաթենիկ Չագըր Հիմնադրամին, զայն կը յանձանձէ Բարեգործականի սկզբունքներով, որոնք յիշուած են իր կանոնագրին մէջ եւ որոնք կը նշեն, թէ Միութիւնը ապաքաղաքական եւ ոչ յարանուանական կազմակերպութիւն մըն է:

Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամի անցեալ 5 տարիներու գործունէութիւնը եւ կիրարկած յատկացումներու քաղաքականութիւնը անժխտելի փաստերն են այդ իրականութեան:

Իր յատկացումները կատարած ատեն, Բարեգործականը երբեք ենթակային հարց չէ տուած, թէ ան ինչ յարանուանութեան կը պատկանի կամ ինչ գաղափարի կը ծառայէ: Բարեգործականը ռեւէ մէկուն չէ պարտադրած որ իր ստացած յատկացումներուն փոխարէն, այս կամ այն ակումբը յաճախէ:

Կը բաւէ որ դիմորդը հայ է եւ վերջ:

Սաթենիկ Չագըր Հիմնադրամի միջոցներով բազմաթիւ ուսանողներ, մեծագումար կրթաթոշակներ պահանջող իրենց ուսումը, կրցած են շարունակել բարձրագոյն ուսումնական հիմնարկներու մէջ:

Ընկերային օժանդակութեան դարմանի կամ ապրուստի յատկացումներուն համար բոլոր դիմորդներն ալ ունեցած

են իրենց համապատասխան յատկացումները, ցորքան լրացուցած են Միութեան կողմէ բոլորին համար նախասահմանուած պայմանները:

Հայ իրականութեան մէջ, իր նախադէպը չունեցող իրագործում մըն է Միութեան Սաթենիկ Չագըր Հիմնադրամի առողջապահական հոգատարութեան ծրագիրը, որուն բարիքներէն կ'օգտուին գաղութին զաւակներէն հարիւրաւորներ:

Այժմ անցնինք Բարեգործականի անցնող հինգ տարիներու հաւաքական նպատակներու յատկացումներու բաժնին:

Մշակութային գործունէութեան ծիրին մէջ հրապարակուած են բազմաթիւ գիրքեր եւ պրակներ, որոնց մէջ կան կոթողական հրատարակութիւններ, ինչպէս՝ Արշակ Բ. Օփերան (26 հատոր, աւելի քան 2600 էջ), Մատենագիտութիւն Հայ Մանրանկարիչներու, արաբերէն լեզուով «Հայ Բանաստեղծութեան Ծաղկաքաղ», ինչպէս նաեւ՝ Տիգրան Չուհաճեանի, Քրիստափոր Կարա Մուրզայի, Եկմալեանի, Ալեքսանդր Սպենդիարեանի եւ Արքատի Քուկելի երաժշտական գործերուն մասին առանձին հատորներով լոյս տեսած ուսումնասիրութիւններ:

Կերպարուեստի մարզին մէջ նշելի են Երուանդ Տէմիրճեանի կեանքին եւ գործին նուիրուած գիրքը, Սարուխանի ծննդեան 100-ամեակին նուիրուած արաբերէն լեզուով ալպոմը, ինչպէս նաեւ «Սարեանը եւ Եգիպտոսը» հատորը՝ հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով:

Նոյնպէս, Բարեգործականը կարեւոր տոկոսով կ'օժանդակէ չորրորդ տարին ըլլալով լոյս տեսնող արաբերէն լեզուով «Արեւ»ի ամսօրեայ յաւելուածին հրատարակութեան, որ կոչուած է կարեւոր բաց մը գոցելու հայութիւնը եւ հայկական տեսակէտները արաբ ընթերցողին ներկայացնելու գործին մէջ:

Հրատարակչական գործին մաս կը կազմէ նաեւ

Միութեան «Տեղեկատու» պարբերաթերթին եռամսեայ դրութեամբ լոյս ընծայումը:

Երգարուեստի եւ երաժշտական մարզին մէջ, հրաւիրուած են Հայաստանի Փոքրիկ Երգիչները, Երեւանի Օփերայի մեներգչուհիներ Էմմա Պապիկեանը, Յասմիկ Հացագործեանը եւ Անահիտ Մխիթարեանը:

Նոյնպէս, հրաւիրուած է մեծատաղանդ դաշնակահար Վարդան Մամիկոնեանը, ինչպէս նաեւ հայրենի երգչուհի Աննա Մայիլեանը:

Դասախօսութիւններու համար տարբեր առիթներով հրաւիրուած են Փոլ Գալինեանը, Բարսեղ Թուղլաճեանը եւ արուեստաբան Շահէն Խաչատուրեանը:

Ամառնային չորս ճամբարներու մասնակցելու համար, հիմնադրամին միջոցներով՝ հայրենիք թէ Սուրիա ղրկուած են բազմաթիւ պատանիներ եւ երիտասարդներ:

Մանրաժապաւէնի վրայ կատարուած է եգիպտահայ մամուլէն ներկայիս լոյս տեսնող երեք օրկաններուն՝ «Արեւի»ի, «Յուսաբեր»ի եւ «Ջահակիր»ի հաւաքածոներուն պատճէնահանումը:

Ուսումնասիրական պարապմունքի համար յատկացումներ կատարուած են երկու հեղինակներու:

Հայաստան գործուղման ղրկուած է եգիպտահայ մեծատաղանդ նկարիչ մը:

Ստեղծագործական պարապմունքի համար յատկացում կը կատարուի եգիպտահայ արուեստագէտի մը:

Դարձեալ, եգիպտական կառավարութեան կողմէ պետական մրցանակի արժանացած տաղանդաշատ եգիպտահայ արուեստագէտի մը, արտասահման գործուղման առթիւ, կատարուած է քաջալերական յատկացում մը:

Ասոնցմէ դուրս, յատկացումներ կատարուած են պետական եւ համաեգիպտական ծրագիրներու, ինչպէս՝ համալսարաններու կարօտեալ ուսանողներու ֆոնտին, Եգիպտոսի առաջին տիկին Սիւզան Մուպարաքի

ընկերային եւ բարեսիրական ծրագիրներուն եւ Գահիրէի համալսարանի հայագիտական ուսմանց ծրագրի ֆոնտին:

Արաբերէն լեզուի եւ գրականութեան դասական գործերու բազմաթիւ հատորներ գնուած են Երեւանի համալսարանի Արեւելագիտութեան հիմնարկին արաբական ամպիոնին համար:

Այս հպանցիկ թումէն յետոյ, կ'ուզենք շեշտել թէ ամէն անգամ որ Բարեգործականը դասախօս մը հրաւիրած է, զայն չէ իրացուցած, այլ ընդհակառակը աշխատած է որ հրաւիրեալ դասախօսը ելոյթ ունենայ Գահիրէի թէ Աղեքսանդրիոյ բոլոր մշակութային միութիւններուն մէջ անխտիր:

Գիրքերու հրատարակութեան պարագային, նկատի առնուած է որ իրաքանչիւր գիրք նորութիւն մը աւելցնէ մեր մշակութային ժառանգութեան վրայ եւ շօշափէ հատուածականէ հեռու, հաւաքական հետաքրքրութեան նիւթեր:

Երգարուեստի եւ երաժշտութեան վերաբերեալ ձեռնարկներու պարագային, երբ որ կարելիութիւն եղած է, հայ արուեստը կամ արուեստագէտը ներկայացուած է նաեւ եգիպտացի ժողովուրդին: Այս ուղղութեամբ յաճախ վայելած ենք Հայաստանի դեսպանութեան զօրավիգը, որուն համար մեր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնենք:

Այս առիթով կ'ուզենք նշել, թէ Բարեգործականը իր մշակութային գործունէութեան մէջ կ'աշխատի հեռու մնալ եգիպտահայ այլ մշակութային միութիւններու գործունէութեան դաշտերէն եւ չխաչաձեւել զանոնք:

Մեր միութիւնը, անկախաբար իր ունեցած հրատարակչական գործունէութենէն, հետամուտ է եգիպտահայ մշակութային կեանքը հարստացնելու հայրենիքէն թէ Սփիւռքէն հրաւիրուած բարձրորակ մտաւորականներու եւ արուեստագէտներու ելոյթներով, ինչ որ կը համարէ գաղութին մէջ գործող այլ մշակութային միութիւններու

գործունեութիւնը:

Հաւանաբար մտածողներ ըլլան, թէ քանի որ նիւթական միջոցներ գոյութիւն ունին, կարելի է մեր յիշած բարեսիրական եւ մշակութային բոլոր ձեռնարկները դիւրութեամբ գլուխ հանել:

Այո՛, ճիշդ է որ նիւթականը կարելոր է, սակայն այդ նիւթականին եթէ միացած չըլլան ազգային մտահոգութիւնը, ծրագրուած աշխատանքը եւ անսակարկ նուիրումը, այդ նիւթականը չի կրնար վերածուիլ ոգեկան արժէքի եւ կը մնայ աննպատակ եւ անպտուղ հարստութիւն:

Դարձեալ պիտի անդրադառնամ մեր այսօրուան յայտագրի գրքոյկներուն մէջ ամփոփուած Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի նպատակներուն: Բարերարուհի Սաթենիկ Չագըրի նուիրատուութեան մէջ յիշուած են միայն ընդհանուր գիծեր կամ սկզբունքներ:

Գահիրէի Բարեգործականի վարչութիւնը, անցնող հինգ տարիներուն ընթացքին, յաջորդական բացառիկ անդամական Ընդհանուր Ժողովներու բովէն անցնելով, բարեփոխեց Միութեան կանոնագիրը եւ Միութեան նպատակները ընդլայնելով, ընդգրկեց յիշեալ 20 գլուխներուն տակ նշուած մարզերը, բոլորն ալ ուղղուած մասնաւորապէս յօգուտ եգիպտահայ գաղութին զաւակներուն եւ ընդհանրապէս հայ մշակոյթին (տեսնել էջ 90):

Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամի հնգամեայ իրագործումներուն եւ գործելակերպին մասին տրուած այս ամփոփ պատկերէն յետոյ, հանգիստ խղճով եւ արդար հպարտութեամբ կրնանք հաստատել, թէ բարեյիշատակ բարերարուհին, 25 տարի առաջ իր նուիրատուութիւնը Բարեգործականին վստահելով, ամենէն ճիշդ ընտրութիւնը կատարած էր եւ վստահ ենք որ իր հոգին կը խայտայ, ի տես իր նուիրատուութեամբ եւ Բարեգործականի միջոցով իրագործուած բոլոր ազգաշէն ծրագիրներուն:

Սակայն, այնպես կը թուի թէ մեր համայնքին մէջ կան բացառութիւններ, որոնք հոգեկան գոհունակութիւն չեն զգար Բարեգործականի գործունէութենէն եւ, իրենք իրենց անպայման դեր մը վերագրելու անզօր ճիգով, իրականութիւնները կը խեղաթիւրեն:

Անձնապէս, այս մասին վերահասու եղայ անցեալ Հոկտեմբերին, Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոսի Եգիպտոս տուած անդրանիկ եւ շնորհաբեր այցելութեան առիթով:

Շարունակելէ առաջ, պէտք է նշել, թէ Բարեգործականը օրինուած Միութիւն մըն է: Ան իր գոյութեան առաջին իսկ օրէն եւ իր գոյութեան ամբողջ ընթացքին, վայելած է Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր նուիրապետական աթոռներու գահակալներուն օրհնութիւնն ու զօրավիգը, սկսելով Հայոց Հայրիկ Մկրտիչ Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Խապայեան Կաթողիկոսէն, Կոստանդնուպոլսոյ Պատրիարք մեծանուն Մաղաքիա Արք. Օրմանեանէն եւ Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Արք. Դուրեանէն ու նուիրապետական այս չորս աթոռներուն վրայ բազմած բոլոր իրերայաջորդ գահակալներէն:

Պարագան նոյնն է Հայ Կաթողիկէ նուիրապետութեան աթոռին վրայ բազմած գահակալներուն, սկսելով Պօղոս-Պետրոս 13-րդ Թէրզեան հայ կաթողիկէ Կաթողիկոս Պատրիարքէն:

Տարբեր չէ եղած նաեւ վերաբերումը հայ Աւետարանական Եկեղեցւոյ ազգապետներուն:

Գալով եգիպտահայութեան, անոր նախկին առաջնորդներէն եւ հետագային Երուսաղէմի Պատրիարք Երջանկալիշատակ Թորգոմ Արք. Գուշակեան իր ժամանակին ըսած է.

«Եթէ Բարեգործականը պատերազմէն առաջուան իր ութամեայ գոյութեան միջոցին ոչինչ ըրած ըլլար յօգուտ Ազգին, միայն պատերազմէն վերջ Եգիպտոսի մէջ իր

կազմակերպած Սիսուանով, Որբանոցով, Այրիանոցով, Արհեստանոցով եւ Հանդերձարանով, արժանի պիտի ըլլար արդէն Ազգին երախտագիտութեան»:

Եգիպտահայոց նախորդ առաջնորդ, հոգելոյս Մամբրէ Արք. Սիրունեան եւս բարձրօրէն գնահատած է Միութեան գործունէութիւնը եւ շրջան մը նախագահած է Հ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի նիստերուն:

Իսկ եգիպտահայոց ներկայ բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արք. Չինչինեանը 1958-էն՝ Եգիպտոսի հողին վրայ ոտք դնելու առաջին իսկ օրէն, աւելի քան 43 տարիներէ ի վեր, անդամ է Բարեգործականին, նախ Աղեքսանդրիոյ ապա Գահիրէի մէջ ջերմ ջատագով մըն է մեր Միութեան գործունէութեան:

Այս բոլորէն զատ, Գահիրէի Բարեգործականը առաւելութիւն մը ունի Բարեգործականի աշխարհատարած բոլոր մասնաճիւղերուն վրայ:

Արդարեւ, 1956 Փետրուարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը երբ Եգիպտոս կ'այցելէր, ներկայ գտնուելով Բարեգործականի յիսնամեակի տօնակատարութեան եւ գնահատելով Միութեան ազգաշէն գործունէութիւնը, իբր գնահատանքի արտայայտութիւն, իր անդամակցութիւնը կը շնորհէր Բարեգործականի Գահիրէի մասնաճիւղին (տեսնել էջ 91):

Գալով մեր այժմու Վեհափառ Հայրապետին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ին, ան ալ իր կարգին ջատագովը եղած է Բարեգործականի գործունէութեան եւ իր կաթողիկոսանալէն առաջ, երբ Արարատեան Հայրապետական Թեմի փոխ-առաջնորդն էր, երկար տարիներ Բարեգործականի հետ գործակցաբար հայրենիքի մէջ իրագործած է բազմաթիւ բարեսիրական եւ կրթական ծրագիրներ:

Հետագային, Ան անդամ ընտրուած է Բարեգործականի Կեդրոնական Վարչական Ժողովին, իսկ իր Կաթողիկո-

սական ընտրութենէն յետոյ, Կեդրոնական Վարչական Ժողովի պատուոյ անդամ հռչակուած է եւ իր անունը որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս կը յիշուի Բարեգործականի նախագահին անունէն առաջ:

Այս բոլորը կը թուենք պարզապէս, որպէսզի մեր նոր սերունդը, ինչու չէ, նաեւ մեր երէց սերունդի անգիտակները, տեղեկանան թէ Բարեգործականը միայն բարիք սփռող եզակի Միութիւն մըն է եւ կը մաղթենք որ աստուածային տնօրինումով այդպէս ալ շարունակէ մնալ:

Վերադառնալով Գարեգին Բ. Կաթողիկոսի Եգիպտոս այցելութեան, հաւանաբար ոմանք կը յիշեն թէ այդ առթիւ անարժանաբար ինծի վիճակուեցաւ Վեհին թարգմանի պաշտօնը եւ այդ բերումով հետեւեցայ Վեհափառին շքախումբին, Վեհին բոլոր պաշտօնական այցելութիւններուն ընթացքին:

Կաթողիկոսական այդ շնորհաբեր այցելութեան առիթով, օր մը, ազատ պահու մը երբ առանձին էինք, Վեհափառ Հայրապետը տեղեակ ըլլալով Եգիպտոսի Բարեգործականին հետ ունեցած առընչութեանս, հարց տուաւ, թէ ինչպէս կ'ընթանան Բարեգործականի Եգիպտոսի գործերը:

Եւ ես, ամենայն խանդավառութեամբ, ի հաշիւ Գահիրէի Բարեգործականին իմ բոլոր վարչակիցներուս, Վեհափառին պատմեցի մեր գործունէութեան մասին, չմոռնալով վերջաւորութեան ակեցնել, թէ ՀՀ-ի դեսպանութեան նստավայրը եւս կը պատկանի Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Չագրր Հիմնադրամին եւ Բարեգործականը զայն տրամադրած է դեսպանութեան:

Վեհը զիս մտիկ ընելէ յետոյ, հանդարտ եւ մտածկոտ ըսաւ.

- Հապա ինծի ըսին, թէ այդ շէնքը Բարեգործականի ձեռքէն պիտի երթար եւ զայն փրկելու համար Հայաստանի դեսպանատան տրամադրած են:

Կրնաք երեւակայել հոգեկան այն բեկումը, զոր ապրեցայ այդ պահուն՝ Բարեգործականի մեր ամբողջ վարչակազմին եւ իմ հաշույս:

Ուժերս հաւաքելով, Վեհին հարցուցի.

- Վեհափառ Տէր, ի՞նչ տուաւ Ձեզի այդ տեղեկութիւնը:

Վեհափառը, հաւանաբար նկատելով դէմքիս վրայ ուրուագծուած զուսպ ընդվզումը, Վեհի մը վայել բարձրագի վերաբերումով պատասխանեց.

- Մարդիկ:

Տիրող կարճատեւ լռութիւնը խզելով, Վեհին ըսի.

- Վեհափառ Տէր, վստահ եղէք որ Գահիրէի Բարեգործականը տէր եւ տիրական չունեցող կազմակերպութիւն մը չէ, որպէսզի ուրիշներ իր հաշույն տնօրինումներ կատարեն: Սաթենիկ Չագըր մենատունը Հայաստանի դեսպանութեան տրամադրելու մէջ, ոչ ոք դեր ունեցած է, բացի Գահիրէի Բարեգործականի վարչութենէն, գիտութեամբը եւ հաճութեամբը Բարեգործականի Կեդրոնին:

Եւ աւելցուցի, թէ Վեհափառը եթէ կը փափաքի, կրնայ այս մասին հարցնել ՀՀ-ի Եգիպտոսի նախորդ դեսպան Տոքթ. Էտուարտ Նալպանտեանին, որ այժմ ՀՀ-ի Ֆրանսայի դեսպանն է եւ քաջատեղեակ է այս հարցին բոլոր ծալքերուն:

Այս մասին քանի մը վարչական գործակիցներ տեղեակ են:

Նոյնիսկ, վկայ մեր առաջնորդ Սրբազան Հայրը. իրեն ալ բան մը չեմ ըսած այս մասին, զինք չվշտացնելու համար, որովհետեւ վստահ եմ որ ան ոչ պիտի ընդունէր եւ ոչ ալ պիտի թոյլատրէր որ մեր գաղութէն մէկը նման սխալ տեղեկութիւն փոխանցէ Վեհափառ Հայրապետին:

Այժմ, այս դէպքին վրայէն վեց ամիս անցած է եւ ես անձնապէս շնորհապարտ եմ Վեհափառ Հայրապետին որ անուն չտուաւ: Եւ արդէն անունը կարելոր չէ, կարելորը արարքն է, որուն որեւէ գնահատական չենք ուզեր տալ,

այդ բանը ձգելով մեր ժողովուրդին, եւ ինչու չէ, նաեւ պատմութեան դատաստանին:

Պատմութեան մասին խօսելով, այսօր արդէն իսկ պատմութեան անցած յայտարարութիւն մը պիտի կարդամ Ձեզի.

«Այսօրեղ ես կ'ուզենայի յարկապէս ընդգծել Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի մասնաճիւղի դերը, որը հակառակ գոյութիւն ունեցող դժուարութիւններին, հնարաւորութիւն գտաւ մեզի տրամադրել այդ հիասքանչ շէնքը:

Սա եւս մէկ ապացոյցն էր Հ.Բ.Ը.Մ.ի հայոց պետականութեանը զօրավիգ լինելու պատրաստակամութեան:

Հ.Բ.Ը.Մ.ը գոյութեան ընթացքում միշտ հաւատարիմ է մնացել իր հայրենասիրական սկզբունքներին՝ անխոնջ ծառայելով համազգային խնդիրների լուծմանը:

Այսօր դեսպանութիւնը բոլորիս՝ թէ՛ դեսպանութեան անձնակազմի, թէ՛ եգիպտահայ գաղթօճախներից ժամանող հիւրերի հպարտութիւնն է»:

Ինչ որ կարդացի, մէջբերում մըն է Գահիրէի Բարեգործականին «Տեղեկատու» պարբերաթերթի Ապրիլ 1997-ի թիւին մէջ լոյս տեսած հարցազրոյցէ մը, զոր վարած է թերթին այդ շրջանի խմբագիր պր. Հարի Չէչճէնեան, այդ ժամանակուայ ՀՀ-ի Եգիպտոսի դեսպան Ն.Գ. Էտուարտ Նալպանտեանի հետ:

Կարծեմ որեւէ յաւելեալ մեկնաբանութիւն աւելորդ է:

Որպէս եզրափակում կ'ուզէինք շեշտել, թէ Գահիրէի Բարեգործականը ինքզինք մրցակից չի նկատեր գաղութին մէջ գործող որեւէ այլ կազմակերպութեան: Ընդհակառակը, ան ինքզինք կը նկատէ գործակից եւ լծակից գաղութի բոլոր այն կառոյցներուն, որոնք կ'ընդունին այդ գործակցութիւնը եւ լծակցութիւնը:

Ան բոլորին կը մօտենայ փոխադարձ սիրոյ եւ յարգանքի ըմբռնումով եւ, բնականաբար, բոլորէն կ'ակնկալէ համա-

պատասխան վերաբերում:

Մեր մաղթանքն է, որ մեր ազգաշէն Միութիւնը յառաջիկային եւս բոլորէ եւ տօնէ նոր ամեակներ՝ միշտ վայելելով մեր հոգեւոր պետերուն հովանաւորութիւնը, ՀՀ-ի դեսպանութեան աջակցութիւնը, մեր համայնքին զաւակներուն սէրն ու վստահութիւնը եւ մեր գաղութին մէջ շարունակէ գոյատեւել որպէս բարիքի, յոյսի եւ լոյսի մշտական աղբիւր:

Շնորհակալութիւն, Ձեր երկարատեւ ուշադրութեան համար:

Գահիրէի Հ.Բ.Ը.Մ. Սաթենիկ Չագըր Հիմնադրամի Յատկացումներու Հնգամեայ Ցուցակ (Եգիպտական Ոսկիով)

	1996	1997	1998	1999	2000	Ընդհանուր Գումար
Մշակութային Ծրագիրներ	135 357	141 089	326 034	138 687	238 228	979 395
Հայկական Միութիւններու Յատկացումներ	86 350	134 251	102 166	96 532	40 638	459 937
Պետական եւ Համաեգիպտական Ծրագիրներ	80 000	80 000	80 000	100 000	50 000	390 000
Հայկական Վարժարաններու Յատկացումներ		27 045	14 564			41 609
Ընկերային Օժանդակութիւններ	4 000	54 803	25 033	116 564	121 767	422 257
Կրթաթոշակներ	28 843	56 727	106 346	166 658	208 729	567 213
Առողջապահական Հոգատարութեան Ծրագիր					394 072	394 072
Գումար	334 550	493 915	754 143	618 441	1 053 434	3 254 483

ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը.Մ.Ի Ն ՊԱՏԱԿՆԵՐԸ

Ըստ կազմակերպության կանոնագրի վերջնագրում փոփոխություններում վաերացուած Միութեան 12 Ապրիլ 2000-ի Բացարկի Ընդհանուր Ժողովին:

1-Ընկերային ծառայություն եւ օժանդակություն:

2-Մշակութային եւ գիտական ծառայություններ:

3-Առողջապահական գործունեություն:

4-Աշխատիլ տարբեր միջոցներով բարձրացնել հայ համայնքի զուակներում մտաւորական եւ բարոյական մակարդակը:

5-Նիւթապէս օգնել հայ անձերու եւ ընտանիքներու՝ բարձրացնելու համար անոնց կենսամակարդակը, ըստ Միութեան ներքին կանոնագրով նախասահմանուած պայմաններում:

6-Դարմանական օժանդակություն ընձեռել հայ համայնքի զուակներում, ըստ Միութեան ներքին կանոնագրով նախասահմանուած պայմաններում:

7-Օժանդակել հայ համայնքի միջոցներ չունեցող զուակներում, շարունակելու իրենց ուսումը, ուսման բոլոր հանգրուաններում, վճարելով անոնց ուսումնական սակերն ու գիրքերու եւ ուսման հետ կապ ունեցող ծախսերը:

8-Քաջալերել յատաջաղէմ եւ գիտականօրէն գերփայլուն անձերը, անոնց տրամադրելով կրթաթոշակներ եւ քաջալերական յատկացումներ:

9-Քաջալերել մշակութային ժառանգութեան վերաբերեալ պրպտումները եւ ուսումնասիրությունները, պարապմունքի յատկացումներ կամ նիւթական օժանդակություններ ընձեռելով:

10-Քաջալերել ԵԱՀ-ի զուակները, ուսումնասիրելու հայ լեզուն եւ հայ մշակոյթը: Նոյնպէս, քաջալերել հայերը՝ արաբերէն լեզուն եւ արաբական մշակոյթը ուսումնասիրելու:

11-Քաջալերել գիրքերու հեղինակություններու եւ ուսումնասիրություններու հրատարակությունը:

12-Գիրքեր գնել՝ զանոնք նուիրելու մասնագէտներու եւ հաստատություններու:

13-Օրջաբերականներ կամ պարբերականներ լոյս ընծայել, ներառեալ Միութեան պարբերաթերթը, որ անվճար կը բաժնուի Միութեան անդամներում եւ այլոց:

14-Զանազան տեսակի օրացոյցներու հրատարակություն:

15-Հնչուն կամ նիւթական օժանդակություններու յատկացում հետեւեալ հայկական հաստատություններում:

ա-Հայկական վարժարաններ:

բ-Մշակութային միություններ:

գ-Մարզարաններ:

դ-Ընկերային եւ բարեսիրական հաստատություններ:

16-Մշակութային հանդիսություններու եւ ասուլիսներու, ինչպէս նաեւ ցուցահանդէսներու կազմակերպություն:

17-Արուեստագէտներու եւ այլեայլ արուեստագիտական խումբերու քաջալերություն, որպէսզի ցուցադրեն իրենց ստեղծագործությունները:

18-Ձեռքբերում եւ ցուցադրություն Եգիպտահայ արուեստագէտներու գործերում:

19-Բոլոր ձեւերով քաջալերել երիտասարդական գործունէությունը, կազմակերպելով ճամբարներ, զբօսապտոյտներ եւ դասախօսություններ կամ մասնակցելով անոնց:

20-Մշակութային ուսումնասիրություններու կեդրոնի մը հաստատում: Հայագիտական նիւթերու մասնագիտական գրադարանի մը հաստատում եւ մանրաժապաւեճի փաստագրական կեդրոնի հաստատում , ծառայություններ մատուցանելու ուսումնասիրողներու եւ պրպտումներ կատարողներու:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՕՍՔ «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ»
ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԻԹՈՎ
ՀՀ ԳԱՀԻՐԷԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ 2010

Ամենէն առաջ կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել ՀՀ-ի Եգիպտոսի Արտակարգ եւ Լիազօր դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեանին եւ դեսպանատան անձնակազմին, այս շնորհանդէսին կազմակերպութեան համար:

Նոյնպէս, շնորհակալութիւն կը յայտնեմ եգիպտահայ թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեանի, որ իր ներկայութեամբ պատուեց այս միջոցառումը:

Բնականաբար, շնորհակալութեան խօսք ունիմ նաեւ մեր եկեղեցւոյ հոգեւոր հայրերուն, Գահիրէի Թեմական ու Քաղաքական Ժողովներու ատենապետներուն եւ զոյգ ժողովներու անդամներուն, ինչպէս նաեւ մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներուն, եգիպտահայ մամուլի խմբագիրներուն եւ բոլոր ներկաներուն, որոնք եկած են այսօր բաժնեկից ըլլալու այս առթիւ:

Խոռվայոյզ մտքով եւ ալեկոծ հոգիով կը դիմաւորեմ ձեզ բոլորդ, որովհետեւ խառն զգացումներ կը համակեն էութիւնս:

Նախ, ուրախութեամբ կ'արձանագրեմ որ կը պատկանիմ այն բախտաւոր սերունդին, որ տեսաւ Հայաստանի անկախացումը եւ առիթը ունեցաւ իր գործօն մասնակցութիւնը բերելու, եւ ականատես ըլլալու Գահիրէի մէջ հայրենի դեսպանատան հոգի եւ մարմին առնելուն ու վայելելու անոր մշտական ներկայութիւնն ու զօրավիգը:

Արդարեւ, ասկէ միայն երկու տասնամեակ առաջ, մեզմէ ոչ ոքի մտքէն կրնար անցնիլ որ Եգիպտոսի մէջ հայերէն լեզուով լոյս տեսած գրքի մը շնորհանդէսը կրնար տեղի ունենալ հայրենի հողէն մաս մը համարուող մեր

դեսպանատան նստավայրին մէջ: Այդ աներեւակայելին իրականութիւն է այսօր:

Երկրորդ պարագան, զոր պիտի ուզէի նշել, այն է թէ 1977-ին՝ երբ պարագաներու բերումով կը սկսէի աշխատակցիլ «Արեւ»ին, երբեք յաւակնութիւնը չունէի, թէ գրող մըն եմ կամ գրող մը կրնամ ըլլալ:

Այսօր, մօտ 33 տարի ետք, յօդուածներէս, ելոյթներէս եւ հարցազրոյցներէս ծաղկաքաղ մը ամփոփող հատորիս յառաջաբանը գրած է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի տնօրէն, Տոքթ. Պրոֆէսօր Աշոտ Մելքոնեանը, որուն ընծայած այս պատիւին համար իմ հրապարակային շնորհակալութիւնս կը յայտնեմ:

Այս երեւոյթը ինքնին երկրորդ աներագելի երագ մըն է, որ իրականութիւն դարձած է:

Երրորդ պարագան այն է, որ այսօր եգիպտահայութեան մատուցուող այս հատորը, ներկայ շնորհանդէսէն առաջ, արդէն իսկ Հայրենիքի, Միջին Արեւելքի, Եւրոպայի, Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկաներու մէջ տարածուած ըլլալով, բազմաթիւ դրական արձագանգներ ստացուած են վաստակաշատ մտաւորականներէ, գրողներէ եւ հասարակական գործիչներէ, որոնք գնահատանքով արտայայտուած են անոր մասին:

Երկար տասնամեակներու վաստակ ունեցող գրողներ զիս, անարժանաբար, իրենց «Գրչեղբայր»ը հռչակած են: Հատորը ստացողներէն շատեր գրած են որ զայն կարդացած են մէկ շունչով: Ոմանք գնահատած են լեզուն, ուրիշներ գրելաոճը՝ կարգ մը յօդուածներ դասելով որպէս գեղարուեստական հրապարակախօսութիւն: Այլ ընթերցողներ հատորին մէջ տեղ գտած քննադատութիւնները նկատած են որպէս զուսպ, դիպուկ, անաչառ եւ ոչ վիրաւորական: Եղած են բազմաթիւ այլ դրուատիքներ, որոնք կրնան դիւրութեամբ զգեստնել եւ խորտակել նոյնիսկ

ամենէն տոկուն համեստութիւնը:

Այսպիսի պարագաներու, միակ ապաւէնս մեր գրական մեծերն են, որոնց հետ կը նկրտիմ ինքզինքս բաղդատել, անմիջապէս վերագտնելու համար իմ խոնարհ ու համեստագոյն տեղս եւ հոգիի խաղաղութիւնս: Բաւ է մտաբերել միայն Մեծարենցն ու Դուրեանը, որոնք իրենց ծաղիկ հասակին դասական արժէքներ ստեղծած էին:

Պատկերը ամբողջական եւ հարազատօրէն ներկայացնելու համար, պարտիմ ըսել թէ ներկայացուող հատորը անթերի չէ եւ նկատուած կարգ մը թերութիւններուն մասին կատարուած են տեղին նշումներ, ճշդումներ եւ ուղղումներ, զորոնք կատարողներուն շնորհակալութիւններս կը յայտնեմ:

Այժմ, արտասահմանէն վերադառնանք Եգիպտոս՝ մեր սիրելի եգիպտահայ համայնքին:

Այսօր ներկայացուող հատորին բովանդակութիւնը, բացի «Յաւելուած»-ի բաժինէն, նորութիւն չէ, քանի որ հոն տեղ գտած գրութիւնները երկար տարիներու ընթացքին բոլորն ալ լոյս տեսած են Գահիրէի մէջ:

Այդ գրութիւններուն մէկ կողքի տակ վերահրատարակութիւնը, ինչպէս ընթերցող մը իր նամակին մէջ գրած է. «...ընթերցողին հասցնում է ժամանակի համն ու հոտը, ստեղծում 1980-ական թուականների եգիպտահայ իրականութեան մի համապատկերը, մի ամբողջ ժամանակի վկայագիր ներկայացուած նուիրեալ, սրտացաւ եւ ազնիւ մտաւորականի կողմից»:

Հարկ է նշել, թէ այդ գրութիւններէն ոմանք, երբ ատենին լոյս տեսած են, բնականօրէն նոյն ընկալումը չեն ունեցած բոլոր եգիպտահայերէն:

Գրութիւններուն մէջ տեղ գտած կարգ մը քննադատութիւններ, որքան ալ շինիչ եւ կառուցողական ոգիով եղած են, կարգ մը անձերու մօտ լարուած դիրքորոշում յառաջացուցած են:

Այդ վերաբերմունքին պատճառը հարկ է փնտռել այն իրողութեան մէջ որ զիրար մտիկ ընելու եւ, մանաւանդ, մեր կարծիքէն տարբեր կարծիքներ լսելու ունակութիւնը կորսնցուցած ենք:

Խօսքը այս պարագային չի վերաբերիր միայն իրարմէ տարբեր ուղղութիւն ունեցող կազմակերպութիւններու կամ անհատներու: Յաճախ կը պատահի որ նոյն ժողովին կամ կառոյցին անդամները, կարծիքներու տարբերութեան բերումով, գտնուին իրերամերժ դիրքերու վրայ եւ այդ դիրքորոշումը կրնայ երբեմն զարգանալ մինչեւ ծայրայեղ անհանդուրժողութիւն եւ նոյնիսկ թշնամանք:

Թերեւս այս է պատճառը որ եգիպտահայ մամուլը, խուսափելու համար նման կացութիւններէ, երկար ժամանակէ ի վեր լքած է հարցերուն քննականօրէն մօտենալու աւանդոյթը: Մինչդեռ, որեւէ մամուլի առաջնահերթ առաքելութիւնն է հարցերու անաչառ պարզաբանումը, ժողովուրդին լուսաբանումը, այլ խօսքով՝ ուղղութիւն տալը:

Այդ պատճառով իսկ քաղաքակիրթ հաւաքակա- նութիւններու մօտ բազմակարծութիւնը ի պատուի է եւ աւանդական երեք իշխանութիւններուն՝ օրէնսդիրին, գործադիրին եւ դատականին կողքին, մամուլը կը նկատուի չորրորդ իշխանութիւն:

Մեր համայնքին մէջ տեսակէտներու ազատ արտա- յայտութեան մերժումը եւ լայնախոհութեան բացակայու- թիւնը իր ժխտական անդրադարձը ունեցած է մեր ազգային կեանքին վրայ:

Կը մաղթեմ որ տարիները իրենց բարերար դերը ունեցած ըլլան եւ հատորին կարգ մը գրութիւնները այժմ աւելի լայնախոհութեամբ ընկալուին:

Անշուշտ ըսելիք եւ պատմելիք շատ բաներ կան, սակայն խօսքս կ'եզրափակեմ բանաստեղծ, վիպագիր, երաժիշտ, նկարիչ, թատերագիր եւ 1913-ին գրականութեան Նոպէլեան մրցանակի արժանացած մեծատաղանդ ու

բազմաշնորհ մտաւորական Ռապինտրանադ Թակորի «Աղօթք»-էն կարգ մը մէջբերումներով, որոնք կրնան օրուան պատգամը համարուիլ:

*Ով Տէր, եթէ ինձի յաջողութիւն տաս,
համեստութիւնս մի առներ,
եւ եթէ ինձի համեստութիւն տաս,
արժանապատուութիւնս մի առներ:*

*Ով Տէր, օգնէ ինձի որ պատկերին միւս կողմն ալ տեսնեմ
եւ մի ձգեր որ այսպանեմ հակառակորդներս,
որովհետեւ ինձմէ փարբեր կարծիք ունին:*

*Ով Տէր, օգնէ ինձի որ սիրեմ մարդիկ, ինչպէս որ անձս կը սիրեմ
եւ իմ անձէս հաշիւ պահանջեմ,
ինչպէս որ ուրիշներէ կը պահանջեմ:*

*Ով Տէր, սորվեցուր ինձի որ ներողամտութիւնը ուժի ամենաբարձր
աստիճանն է,
իսկ վրէժխնդրութիւնը տկարութեան առաջին արտայայտութիւնը:*

*Ով Տէր, եթէ ուրիշները նեղացնեն,
տուր ինձի քաջութիւնը ներողութիւն խնդրելու,
իսկ եթէ ուրիշներ զիս ցաւցնեն, տուր ինձ քաջութիւնը ներելու:*

*Ով Տէր, նոյնիսկ եթէ Քեզ մոռնամ,
Դուն զիս երբեք մի մոռնար:*

**ԳԱՀԻՐԵԻ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ՈՒՂՂՈՒԱԾ ԳԱՀԻՐԵԻ ՀՐԸՄ-ԻՆ**


١٧٩ شارع رمسيس بالقاهرة - ١٢٨٥
ساندوتق بريد ٤٨ القجالة
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
PATRIARCAT ARMÉNIEN

R 512
28.11.94

Գահիրեի, 21-հունիս-1994
Le Caire, le
179 Ave. Ramsés, Le Caire - Tél. 901385
B. P. 48 Foggala

Մեծայարգ
Տիար Ատենապետ
Հ.Բ.Ը.Մ.-եան Գահիրեի Յանձնաժողովի

Աստ

Ազնի Տիար Ատենապետ եւ յարգելի ժողովականներ
Գահիրեի Թեմական ժողովը ի նիստ գումարուած Ուրբաթ, 18 Նոյ. 1994-ին, վերահասու եղաւ նամակներու որոնք դրկուած են գաղութս ազգայինի մը կողմէ: Հարցը կը վերաբերի բարեյիշատակ Բարերարուիի Տիկին Սաթենիկ Չաքըրի կտակին: Վերոյիշեալ նամակին կցուած է նաեւ նկարահանեալ պատճէնը կտակին:

Նամակագիրը կը յայտնէ թէ գաղութս մէջ կարգ մը ազգայիններ եւս հետաքրքրուած են այն մասին թէ Բարերարուիին Հ.Բ.Ը.Մ.-եան տեղական մասնաճիւղը նշանակած է կտակակատար եւ թէ տոյն կտակի եկամուտներէն պէտք է օգտուին, գաղութս մշակութային խնամատարական եւ այլ կազմակերպութիւններ:


Նամակագիրը կը յայտնէ նաեւ թէ շուրջ տասնը ութ տարիներ անցած են եւ չէ իրականացած նուիրատուին փափաքը ցարդ: Միւս կողմէ կ'իմացուի թէ Կալուածին վրայի վիլլան վարձու պիտի տրուի. այդ պարագային ինչ պիտի ըլլան կարգ մը կազմակերպութիւններու ակնկալութիւնները որոնք ըստ կտակի, եկամուտներէն պէտք է օգտուին:

Յանկալի պիտի ըլլար որ վերոյիշեալ հարցերու մասին լրիւ տեղեկութիւններ ունենանք որպէսզի, կարենանք պատասխանել նամակագրին եւ տոյն հարցերով հետաքրքրուող ազգայիններուն:

Կանխայայտ շնորհակալութիւններով, սպասելով Ձեր պատասխանին եւ լուազոյն մաղթանքներով,

Ի դիմաց, Գահիրեի Թեմական ժողովի
Ատենագիր
Sopra. Սուրէն Պայրամեան

Ատենապետ
Անդրանիկ Մետրոպեան





**ԲԱՐԵՐԱՐՈՒՇԻ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳՐԻ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ԳԱՇԻՐԵԻ ՀԲԸՄ-Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ
ՈՒՂՂՈՒԱԾ ԳԱՇԻՐԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ**

جمعية القاهرة الخيرية العامة
مشيخة وزارة الشؤون الاجتماعية تحت رقم ٩٧٤
١٥ شارع صفاة الدين بالقاهرة - ص.ب. ١٠٧٩ القاهرة ١١٥١١ - تليفون ٥١١٩١٣٦

ՀԱՅԳԱՎԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒԹԻՒՆ - ԳԱՇԻՐԵ
15 ԿԱՍԵ ԷՍ. ՑՆ. ԳՐԸՄ - ԳԱՇԻՐԵ
2083400 5919636 - 4083497, 1079-11511 ԳԱՇԻՐԵ



SOCIETE GENERALE ARMENIENNE
DE BIENFAISANCE DU CAIRE
15, Rue Emad el-Dine, Le Caire
Tel.: 5919636 - B.P.1079-11511 Le Caire

Գահիրե՛ 20 Դեկտեմբեր 1994

Գերաշնորհ Նախագահ Սրբազան Հայր,
Մեծայարգ Տիար Ատենապետ եւ Անդամներ
Պատկառելի Թեմական Ժողովի,
Գահիրե՛

Գերաշնորհ Նախագահ եւ
Մեծայարգ Տեարք

28 Նոյեմբեր 1994-ին ստացած ենք Հ.Բ.Ը.Մ.-ի Գահիրեի Յանձնաժողովին ուղղուած Ձեր 21 Նոյեմբեր 1994 թուակիր նամակը, որուն մէջ կարգ մը հարցադրումներ փոխանցուած են վարչութեանս, բարերարուհի Սաթենիկ Չագըրի Միութեանս կատարած նուիրատուութեան մասին:

Այդ հարցադրումները ամփոփուած են հետեւեալ կէտերուն մէջ:

1. Կարգ մը ազգայիններ հետաքրքրուած են, թէ սոյն կտակին եկամուտներէն պէտք է օգտուին, գաղութիս մշակութային, ինամատարական եւ այլ կազմակերպութիւններ:

2. Շուրջ 18 տարիներ անցած են եւ ցարդ չէ իրականացած նուիրատուին փափաքը:

3. Կալուածին վրայի վիլլան եթէ վարձու տրուի, ի՞նչ պիտի ըլլան կարգ մը կազմակերպութիւններու ակնկալութիւնները, որոնք ըստ կտակի (ճշդել նուիրատուութեան) պէտք է օգտուին նուիրատուութեան եկամուտներէն:

Արդ, պիտի աշխատինք կարելի ամփոփումով գոհացում տալ վերոյիշեալ հարցադրումներուն:

1. Բարերարուհի Սաթենիկ Չազրրի նուիրատուութիւնը Միութեանս փոխանցուած է, 1976-ին նօտարական աքթով, որուն հետեւիւած են նօտարական աքթով, երկու լրացուցիչ բարեփոխումներ, յաջորդաբար 1977-ին եւ 1979-ին:

Բարերարուհին իր նուիրատուութիւնը նախապէս ուզած էր կատարել Զուիցերիական իրաւավիճակով Հ.Բ.Ը.Մ.-ին, նկատի ունենալով այդ Միութեան աւանդական համահայկական լայնածիր եւ բազմերես գործունէութիւնը:

Նուիրատուն որպէս եգիպտացի, չէ կրցած իրագործել իր նախնական փափաքը, որ խոտոր կը համեմատէր տիրող եգիպտական տարադրամի օրէնքներուն:

Հետեւաբար, իբրեւ երկրորդ այլընտրանք բարերարուհին իր նուիրատուութիւնը կատարած է Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ ըստ օրինի, եգիպտական մշակութային եւ բարեսիրական միութիւն մըն է, ենթակայ եգիպտական օրէնքներուն եւ Ընկերային Գործոց նախարարութեան:

Սոյն կարելոր նուիրատուութեան տրամադրութիւնները եգիպտական օրէնքներով գործադրելի դարձնելու միտումով, անոր առաջին, ինչպէս նաեւ յաւելուածական երկու աքթերուն մէջ, նուիրատուն մանրամասնած է նախատեսելի բոլոր այն մարզերը, որոնց Հ.Բ.Ը.Մ.-ը կրնայ յատկացումներ կատարել, ԱՌԱՆՅ ՄԱԿԱՅՆ ԱՆՈՒՆՈՎ ՄԱՍՆԱԻՈՐԵԼՈՒ, որեւէ եգիպտահայ կառոյց կամ կազմակերպութիւն, ինչ որ տարբեր է եգիպտահայ գաղութին մէջ այլ բարերարներու կողմէ հաստատուած հիմնադրամներու կամ նուիրատուութիւններու եկամուտներու պարագաներէն, որոնք ի սկզբանէ, նպատակադրուած են, անունով յիշուած հաստատութիւններու կամ նպատատարուող դասակարգերու համար, ինչպէս օրինակ՝ Գալուստեան Վարժարան, Եղիայեան սանէր, եգիպտահայ վարժարաններու մէջ դասաւանդող հայագիտական նիւթերու ուսուցիչներ, եգիպտահայ մամուլի օրկաններ, Այծեմնիկ Տիկնանց Միութիւն եւլն:

Ինչպէս ըսուեցաւ, ի տարբերութիւն վերեւ յիշուած կտակ-

ներուն, բարերարուհի Սաթենիկ Չազրրի նուիրատուութեան աքթին մէջ յիշուած են բոլոր այն մարզերը, որոնց յատկացում կարելի է կատարել, առանց սակայն անունով նշելու նպաստատուութեան կառոյցները եւ դասակարգերը, կամ կատարուելիք յատկացումներուն քանակն ու պայմանները: Այդ բոլորին ճշդումը ձգուած է Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ին տնօրինումին, նուիրատուութեան աքթին մէջ այդ ուղղութեամբ տեղադրուած յատուկ յօդուածով մը:

Հետեւաբար, իրականութեան համապատասխան չէ Ձեր նամակին մէջ յիշուած ծանօթ նամակագիր ազգայինին կողմէ տարածուող այն վարկածը, ըստ որուն եզիպտահայ բոլոր կառոյցները (կարիք ունենան կամ ոչ, գործունէութիւն ունենան կամ ոչ, անդամակցութեան շօշափելի թիւ ունենան կամ ոչ), ամսական հաստատ եկամուտի իրաւունքի իրենց բաժինը ունին, Հ.Բ.Ը.Մ.-ի Սաթենիկ Չազրր նուիրատուութեան եկամուտներէն:

2. Բարերարուհի Սաթենիկ Չազրր երբ իր նուիրատութիւնը կատարեց Յունիս 1976-ին, Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իբրեւ իրեն նուիրուած կալուածին օրինական նոր տերը, նամակով մը բարերարուհիին տեղեկացուց, թէ ան կրնար խնդրոյ առարկայ կալուածին մէջ բնակիլ, որքան ժամանակ որ փափաքի:

Բնականաբար, ասիկա նուագագոյն երախտագիտական ժեսթն էր, զոր կարելի էր ընել մեծ բարերարուհիին հանդէպ:

Վստահ ենք որ ամէն ոք, ներառեալ նամակագիր ազգայինը, մեզի հետ համաձայն է, որ կարելի չէր բարերարուհին՝ իր իսկ նուիրած կալուածէն դուրս հանելով, կալուածը վաճառել ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՒԻՐԱՏՈՒԻՆ ՓԱՓԱՔԸ:

Նամակագիր ազգայինը, եթէ ձանձրոյթը առած ըլլար Գահիրէի Ազգային Առաջնորդարանին մահերու տոմարին դիմելու, պիտի տեղեկանար, թէ բարերարուհին մահացած է Գահիրէի մէջ 10 Մայիս 1982-ին:

Հետեւաբար, յստակ է թէ, երբեք արդար չէ, նամակագիրին վերագրուած, 18 տարիներու ժամանակաշրջանի մը մասին

խօսիլը, երբ ամեն ոք գիտէ, թէ միայն 1982-էն յետոյ է, որ կարելի էր կալուածին վաճառքով զբաղիլ:

Դարձեալ, ամեն ոք քաջ գիտէ թէ այդ թուականէն ասդին, կալուածին վաճառքին առջեւ ծառայան, բազմապիսի օրինական բարդութիւններ, որոնց մասին մի առ մի պիտի անդրադառնանք ստորեւ:

3. 1982 թուականին, բարերարուհիին մահուրնէ յետոյ, Միութեանս այդ ժամանակուան վարչութիւնը, անմիջապէս ձեռնարկեց կալուածին վաճառքին համար հարկ եղած քայլերուն:

Առաջին առթիւ, կապ պահուեցաւ երկրիս կարելորագոյն դրամատուներէն մէկ քանիին պատկան տնօրէնութիւններուն հետ, անոնց միջոցով կալուածը հրապարակային աճուրդով վաճառելու համար:

Այդ առիթով, դրամատուներու բոլոր պատասխանատուներն ալ դիտել տուին, որ կալուածին վրայ եթէ որեւէ ոտնձգութիւն գոյութիւն ունի, կարելի չէ զայն լաւ գինով վաճառել:

Իսկ, եթէ վաճառքը կատարուի կալուածին վրայ եղած ոտնձգութիւնով հանդերձ, վաճառքին գինը կրնայ հսկայ համեմատութիւններով անկում կրել:

Հոս տեղին է յիշել, թէ բարերարուհիին մահուան ժամանակ, Սաթենիկ Չագրը կալուածին վրայ ոտնձգութիւններ գոյութիւն ունէին, արդիւնք նուիրատուութենէն յետոյ, բարերարուհիին կողմէ բարեսրտաբար տրուած ոչ օրինական թոյլատուութիւններու, քանի որ ըստ օրինի բարերարուհին այլեւս կալուածին տէրը չէր համարուէր: Միութեան այդ ժամանակուան պատասխանատուները, բարերարուհիին տրուած իրենց հերթական այցելութիւններուն ընթացքին, բարերարուհիէն թախանձանօք խնդրած են որ յետս կոչէ իր թոյլատուութիւնները:

Բնական է, որ Միութեան վարչութիւնը բարոյական թէ գործնական պատճառներով, կը զգուշանար որեւէ օրինական քայլի դիմելէ, չվշտացնելու համար մեծ բարերարուհին, միշտ սակայն բացատրելով իրեն, թէ տրուած թոյլատուութիւնները

կրնան հետագային նուիրատուութեան համար օրինական ծանր բարդութիւններ յառաջացնել:

Բարեյիշատակ բարերարուհիին մահուրնէն յետոյ, դժբախտաբար իրականութիւն դարձաւ վարչութեան նախատեսութիւնը եւ Միութիւնը ստիպուած եղաւ զոյգ դատեր բանալու:

Առաջինը՝ կալուածին հողատարածքին վրայ գտնուող մասնաշէնք մը, ապօրինի կերպով իբր վաճառատուն զբաղեցնող անձի մը դէմ:

Երկրորդը՝ վիլլային կից, պարապ հողի վրայ գտնուող խանութ մը իբր բնակարան գործածող անձի մը դէմ:

Այս երկու հիմնական դատերէն զատ կային նաեւ այլ բնոյթի դատեր, որոնց մանրամասնութիւններուն մասին տեղի տրութեան պատճառով, չենք անդրադառնար:

Առաջին դատը, մասնաշէնքին վերաբերեալ, բացուած է նախ աճապարեալ հարցերու դատարանի առջեւ՝ ապա նախնական եւ վերաքննիչ ատեանի առջեւ քննուելէ յետոյ, Միութեան աննպաստ վճիռ արձակուած է, որովհետեւ ոտնձգութիւն կատարող անձը, օգտուելով բարերարուհիին յառաջացեալ տարիքէն եւ նկուն առողջական վիճակէն, անծանօթ պայմաններու տակ կրցած է ձեռք բերել, բարերարուհիին կողմէ ստորագրուած նօտարական հաստատումով Օգոստոս 1980 թուակիր յայտարարութիւն մը, ըստ որուն յիշեալ անձը (ոտնձգութիւն կատարողը), իր զբաղեցուցած մասնաշէնքին մէջ կը գտնուէր, որպէս վարձակալ՝ 1975 Փետրուարէն սկսեալ, այսինքն՝ ՆՈՒԻՐՄՏՈՒՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԷՆ ԱՌԱՋ:

Այժմ, այս դատը կը գտնուի վճռաբեկ ատեանի առջեւ, որուն համար տակաւին նիստի թուական չէ որոշուած, նկատի ունենալով նիստի թուականի սպասող դատերու երկար շարքը:

Երկրորդ դատը, որ կը վերաբերի վերեւ յիշուած խանութին, Միութիւնը զայն եւս կորսնցուց եւ խանութը զբաղեցնող անձը վարձակալական իրաւունքի վճիռ ձեռք ձգեց:

Այս անձը յառաջացած տարիքի առանց ժառանգորդի առանձին անձ մը ըլլալով, երբ մահացաւ, իր զբաղեցուցած խանութը պարպուեցաւ եւ այն հողամասը, որուն վրայ կը

գտնուէր, այլևս բնական ընթացքով ոտնձգութենէ զերծ դարձաւ:

Միութեան վարչութիւնը երբ տեսաւ որ մասնաշէնքին դատը կ'երկարի, սկզբնական շրջանին կապ պահեց ոտնձգութիւն կատարող անձին հետ օրինական համաձայնութեան մը գալու եւ զինք կալուածէն դուրս հանելու համար:

Վերոյիշեալ անձը Միութեան առաջարկին պատասխանեց, – տակաւին նախնական դատարանի եւ վերաքննիչատեանի վճիռները չարձակուած, – պահանջելով հարիւրաւոր հազարներու հասնող գումար մը:

Արդ, այդ գումարը նոյնիսկ եթէ իրականացուէր, անոր վճարումը կրնար օրինական կասկածանքի տակ դնել Միութիւնը եւ անոր վարչութիւնը Ընկերային Գործոց Նախարարութեան մօտ, առանց հաշուի առնելու համայնքիս մէջ գտնուող կարգ մը անձերը, որոնք մասնագիտացած են, պետական մարմիններուն մօտ ազգային տարբեր կառոյցներուն պատասխանատուներուն դէմ, անհիմն բողոքներ ներկայացնելու մէջ:

Իրերու այս կացութեան առջեւ, կալուածին վաճառքը արագացնելու համար 1992-ին Միութեան վարչութիւնը որոշեց հողը երեք մասերու բաժնել

ա) պարապ հողի տարածութիւնը շուրջ 1750 մէթր քառակուսի մէթր 35 մէթր ճակատով,

բ) վիլլան եւ իր շուրջի տարածութիւնը շուրջ 2200 քառակուսի մէթր տարածութեամբ եւ

գ) բնագրաւուած մասնաշէնքը շուրջ 140 քառակուսի մէթր տարածութիւնով:

Երբ այս ուղղութեամբ դիմում եղաւ թաղապետութեան պատկան գրասենեակին, անմիջական պատասխանը այն եղաւ թէ հողը կարելի է բաժնել միայն երկու մասի:

Վարչութիւնս յետ խորհրդակցութեան, յարմար դատեց պարապ հողը առանձնացնել (Ա. մաս) եւ վիլլան ու քովի մասնաշէնքը նկատել այլ հողամաս մը (Բ. մաս):

Այդ հիման վրայ, դիմումնագիր ներկայացուելով, երկար եւ

մաշեցուցիչ հետապնդումներէ յետոյ, կարելի եղաւ հողի բաժանման պաշտօնական արտօնագիրը ունենալ Փետրուար 1994-ին:

Կալուածին հողին բաժանման աշխատանքներուն առընթեր, վարչութիւնս դիմում կատարեց Ընկերային Գործոց Նախարարութեան, հողին մասնակի կամ ամբողջական վաճառքին համար արտօնութիւն բերելու:

Ընկերային Գործոց Նախարարութիւնը դիտել տուաւ, թէ նման արտօնութիւն մը ունենալու համար հարկ է Բացառիկ Ընդհանուր Ժողովով մը

ա) Միութեան կազմական կանոնագիրը բարեփոխել եւ զայն լրացնել, բոլոր այն նպատակներով, որոնք յիշուած են Սաթենիկ Չագրը նուիրատութեան մէջ եւ որոնք գոյութիւն չունէին Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի մինչ այդ ի գօրու եղող կազմական կանոնագրին մէջ:

բ) Միութեան Ընդհանուր Ժողովէն արտօնութիւն առնել կալուածին մասնակի կամ ամբողջական վաճառքին համար:

Ինչպէս ծանօթ է, այդ Բացառիկ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 31 Յունուար 1993-ին, Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ. Նուպարի հաւաքավայրին մէջ, անդամներու աննախադէպ թիւի մը ներկայութեան:

Միութեան վարչութիւնը այդ առիթով պատրաստած էր արաբերէն եւ հայերէն լեզուներով մանրամասնեալ բացատրագիր մը, որուն մէջ նշուած էին հին կազմական կանոնագրին նպատակները եւ նոր կազմական կանոնագրով ընդգրկելի նպատակները:

Նոյն առիթով, հրապարակային մանրամասն բացատրութիւններ տրուեցան ներկայ անդամներուն՝ Սաթենիկ Չագրը նուիրատութեան գործադրութեան ձեւին մասին:

Այս բոլորէն յետոյ, Բացառիկ Ընդհանուր Ժողովին որդեգրուած բանաձեւը նոյնութեամբ դրկուեցաւ Ընկերային Գործոց Նախարարութեան, որուն պահանջած բազմաթիւ փաստաթուղթերը լրացուեցան:

Հոս տեղին է դարձեալ յիշել, թէ գաղութիս ազգայիններէն մին,

Բացառիկ Ժողովին ասդին, բողոք ներկայացուց Ընկերային Գործոց Նախարարութեան մօտ, վիլլային մէջ գտնուող կարասիներու աճուրդով վաճառքներուն մասին, որոնք կայացած էին յաջորդաբար 1983-ին, 1985-ին եւ 1989-ին, ամբաստանելով Միութեան իրերայաջորդ վարչութիւնները օրինազանցութիւններու մէջ:

Այս առաջին բողոքին հետեւանքով, Ընկերային Գործոց Նախարարութեան քննիչներուն կողմէ Միութեան տոմարները քննուելէ յետոյ, երբ պարզուեցաւ հարցերուն էութիւնը, բողոքող ազգայինը չգոհանալով քննութեան արդիւնքէն, երկրորդ բողոք մը եւս ներկայացուց նախարարութեան, որուն հետեւանքով նոր քննիչներ եկան վերստուգելու նախորդ քննիչներուն կատարած աշխատանքը:

Այս իրերայաջորդ բողոքներուն արդիւնքը այն եղաւ որ նախարարութիւնը սկիզբը չուզեց վաւերացնել Միութեան Բացառիկ Ընդհանուր Ժողովին օրինականութիւնը:

Սակայն, Միութեան վարչութեան հետապնդումներուն եւ փաստացի տուեալներուն դէմ յանդիման, Բացառիկ Ժողովին մէջ որդեգրուած Միութեան կանոնագրային փոփոխութիւնը, փոքր սրբագրութիւններով վաւերացուեցաւ: Նախարարութեան պատկան գրասենեակը, այս հարցով զբաղող վարչականներուն բացատրած է, թէ Բացառիկ Ընդհանուր Ժողովին որոշումներուն վաւերացման մէկ տարիով ուշացումը, հետեւանքն էր բողոքներու յառաջացուցած կասկածին:

Այս մանրամասնութիւնները ակամայ կը հրապարակենք, ցոյց տալու համար, թէ ինչպէս անպատասխանատու քայլեր, երբեմն կրնան ուշացնել ազգօգուտ եւ բարի նպատակի մը իրագործումը:

Միութեան բարեփոխեալ կազմական կանոնագիրը, որուն վաւերացումը տեղի ունեցաւ Փետրուար 1994-ին, վերջնական այն փաստաթուղթն է, որ Ընկերային Գործոց Նախարարութեան բովէն անցնելէ յետոյ, իրագործելի կը դարձնէ Սաթենիկ Չազրը նուիրատուութիւնը եւ այդ վաւերացեալ կազմական կանոնագիրն է, եւ ոչ թէ նուիրատութեան տեքստը, որ այլեւս

օրինական ուղեցոյց պիտի դառնայ նուիրատուութեան գործադրութեան, քանի որ նուիրատուութեան մէջ որոշ կէտեր կարելի չեղաւ ըստ օրինի ներմուծել բարեփոխեալ կազմական կանոնագրին նպատակներուն մէջ:

Այս առիթով, առ ի լուսաբանութիւն, թարգմանաբար կ'արտագրենք Միութեան բարեփոխեալ կանոնագրին նպատակները, որոնք իրենց վերջնական ձեւին մէջ կ'ամփոփեն Սաթենիկ Չազրր նուիրատուութեան գործադրելի նպատակները:

1. Տարբեր միջոցներով աշխատիլ բարձրացնել հայ համայնքին մտաւորական եւ գրական մակարդակը:

2. Օգնել հայ համայնքի զաւակներուն, որպէսզի շարունակեն իրենց ուսումը, ուսման բոլոր հանգրուաններուն վճարելով անոնց ուսումնական թոշակները, գիրքերու փոխարժէքը եւ հարկ եղած այլ ծախսերը:

3. Օգնել նիւթապէս կարիքաւոր հայ ընտանիքներու՝ բարձրացնելու համար անոնց կենսամակարդակը, համաձայն Միութեան կանոնադրութեան:

4. Քաջալերել գիրքերու, հեղինակութիւններու եւ տեղեկատուներու հրատարակութիւնը, պատկան մարմիններուն կարծիքը ունենալէ յետոյ:

5. Հրատարակել պարբերաթերթ մը, որ ըլլայ Միութեան պաշտօնաթերթը, եւ զայն անվճար բաժնել Միութեան անդամներուն:

6. Հիմնադրութիւն հայ դպրոցներու, մշակութային եւ մարզական կեդրոններու, պատկան իշխանութիւններու կարծիքը առնելէ յետոյ:

7. Նիւթական օժանդակութիւն հայկական հետեւեալ հաստատութիւններուն՝

- Մասնաւոր վարժարաններ (Մատարէս Խասսա)

- Մշակութային Միութիւններ

- Մարզական ակումբներ

- Ընկերային եւ բարեսիրական հաստատութիւններ

Համաձայն Միութեան ներքին կանոնադրութեան տրամադ-

րութիւններուն:

Ինչ կը վերաբերի նուիրատուութեան իրագործումին, վերել տրուած բացատրութիւններէն յստակ է թէ կալուածը բաժնուած է երկու հոդամասերու՝

(Ա. մաս) Պարապ հողամասը շուրջ 1750 մէթր քառակուսի, որուն վրայ որեւէ ոսնձգութիւն գոյութիւն չունի եւ կարելի է անմիջապէս վաճառել եւ վաճառքին գումարը շահարկել յօգուտ նուիրատուութեան նպատակներուն:

(Բ. մաս) Վիլլան եւ քովի մասնաշէնքը, որուն վրայ ոսնձգութիւն գոյութիւն ունի, իր շուրջի հողատարածքով, շուրջ 2347 քառակուսի մէթր տարածութեամբ:

Այս երկրորդ բաժինը ՎԱՐՁՈՒԻ ԿԱՍ ՈՉ, ներկայիս կարելի չէ վաճառել իր վրայ գոյութիւն ունեցող ոսնձգութեան պատճառով:

Վաճառքին արգելքը, բնականօրէն արգելք կը դառնայ նաեւ այդ բաժինէն եկամուտ ունենալու ակնկալութեան:

Վարչութիւնս արդէն իսկ նուագորդի դրութեամբ, կապալառուի մը յանձնած է, թաղապետական արտօնութեան համաձայն, հողամասը երկու մասերու բաժնող ցանկապատի մը շինութիւնը, որուն աւարտէն անմիջապէս յետոյ պիտի ձեռնարկէ հրապարակային աճուրդով պարապ հողը վաճառելու:

Մասնագէտներու կողմէ վարչութեանս տրուած հաւաստիացումներուն համաձայն, կ'ակնկալուի որ միայն այդ մասին վաճառքով կարելի պիտի ըլլայ գոյացնել այնքան դրամագլուխ, որուն եկամուտները կրնան ներկայ հանգրուանին լիովին բաւարարել եգիպտահայ գաղութին բոլոր նախատեսելի արդար կարիքները:

Վերջացնելէ առաջ, կը փափաքինք նշած ըլլալ, թէ Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ի վարչութիւնը համարատու է միայն իր Անդամական Ընդհանուր Ժողովին եւ Եգիպտոսի Ընկերային Գործոց

Նախարարութեան:

Այսուհանդերձ, վարչութիւնս յարգելով Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովին զուտ բարոյական հեղինակութիւնը, յանձն առաւ այս մանրամասնեալ բացատրագիրը դրկել Ազգային Առաջնորդարանին:


Բաց աստի աւելցնենք, թէ երբ Ազգային Առաջնորդարանի պատասխանատուները, անպաշտօն կերպով կապ պահեցին վարչութեանս հետ, լուսաբանութիւններ ունենալու նամակագիր ազգայինին հարցադրումներուն մասին, վարչութեանս պատասխանատուները խնդրեցին որ Ազգային Առաջնորդարանը նամակով մը փոխանցէ այդ հարցադրումները, որպէսզի Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.-ը գրաւոր պատասխան տայ այդ նամակին, այն ակնկալութեամբ որ Ազգային Առաջնորդարանը այդ պատասխանը իր նամակին առընթեր, հրատարակութեան խնդրանօք պիտի դրկէ եզիպտահայ մամուլի օրկաններուն, որպէս լուսաբանութիւն հանրային կարծիքին:

Ուրախ ենք որ Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովը 18 Նոյեմբեր 1994-ի իր նիստին, որդեգրած է այս տեսակէտը եւ որոշած մեր պատասխանը յղել եզիպտահայ մամուլին:

Ձեր ազգաշէն գործունէութեան յաջողութեան լաւագոյն մաղթանքներով


Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

Ատենադպիր



Մ. Չէչճէնեան

Ատենապետ



Պ. Թէրզեան

ՅՈՒՇԱԳԻՐ՝

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 21 ՄԱՐՏ 1986-Ի ՆԻՍՏԻՆ
Ի ՄԱՍԻՆ**

**ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՄԵՐՃԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԸ ՏԱՐԵԿԱՆ 60 ՀԱՋԱՐ ՏՈԼԱՐՈՎ
ՎԱՐՁԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ**

Նկատի ունենալով որ ազգային իշխանության պատասխանատուներուն մեծամասնության մօտ ընդհանուր միտում մը գոյութիւն ունի Մերճանեան մանկապարտէզը վարձու տալու առաջարկը ընդունելու, ստորագրեալներս՝ Պերճ Թէրզեան եւ Մարտիկ Պալաեան, հարկը զգացինք ներկայ յուշագրով այս մասին մեր անձնական տեսակէտը գրաւոր կերպով պարզելու, խնդրելով որ ան ամբողջութեամբ ներառնուի այսօրուան նիստին ատենագրութեան մէջ:

Մերճանեան մանկապարտէզը վարձու տալու առաջարկը ընդունելու համար, որպէս արդարացում կը տրուին գլխաւոր հետեւեալ երկու պատճառները.

Ա) ՆԻԻԹԱԿԱՆ ՇՕՇԱՓԵԼԻ ԵՎԱՄՈՒՏԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Կը նախատեսուի տարեկան 60 հազար տոլար եկամուտ մը, որ ներկայ անպաշտօն սակով (Մարտ 1986) կ'ընէ տարեկան շուրջ 110 հազար եգիպտական ոսկիի եկամուտ մը, յառաջիկայ հինգ տարիներուն համար, որ առաջարկուած վարձակալութեան համար նախատեսուած ժամանակամիջոցն է:

Բ) ԱԶԳԱՅԻՆ ԳԵՏՆԻ ՎՐԱՅ ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒՄ

Նկատի ունենալով որ գաղութին նօսրացումը պատճառ դարձած է մեր վարժարաններու աշակերտութեան թիւին նօսրացումին, կարելի է Մերճանեան մանկապարտէզին մէջ գոյութիւն ունեցող կրթական եւ այլ դիրութիւններուն համար, յարմարութիւններ ստեղծել Նուպարեան Վար-

Ժարանին շէնքին մէջ, այսպիսով, շօշափելի եկամուտի մը առընթեր, բաղձացուած ինքնամփոփումն ալ կ'իրականանայ:

Մեր յուշագիրը շարունակելէ առաջ, փափաքելի է որ հպանցիկ անդրադաճ մը ունենանք Ազգային Առաջնորդարանի գործերուն ներկայ վիճակին մասին եւ ընդհանուրին մէջ տեղադրենք Նուպարեան վարժարանի տեղը եւ դերը Հելիոպոլսոյ մէջ, ապա միայն անցնինք յիշուած երկու կէտերուն առարկայական քննարկումին:

Շուրջ քառորդ դարէ ի վեր մեր գաղութին թիւը աստիճանական նուազում կը կրէ, սկիզբը զօրաւոր՝ իսկ ներկայիս աւելի դանդաղ թափով:

Այս իրողութիւնը դիւրութեամբ կարելի է ստուգել մեր վարժարաններու աշակերտութեան թիւէն, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի մկրտութեան եւ ամուսնութեան տոմարներէն:

Այս պարագան ինքնին պէտք է մղած ըլլար ազգային իշխանութիւնը մշակելու համապարփակ ծրագիր մը, որ հաշուի առնէր ինքնամփոփումի կարելիութիւնները, թէ՛ մեր կալուածները ծրագրուած կերպով հետզհետէ լուծարքի ենթարկելու, թէ՛ մեր մշակելի հողերուն մասին իրատես լուծում մը գտնելու:

Իսկ այս համապարփակ ծրագրին կրթական բաժինը պէտք է նախատեսէր ոչ թէ շէնքերու ինքնամփոփում, այլ աշակերտներու ինքնամփոփում, քանի որ բացայայտ է որ հայ ուսուցիչ գտնելու դժուարութիւն ալ ունինք:

Վերջին տասնամեակին, այսինքն 1975-ի ընտրութիւններէն ասդին, երբ Ազգային Առաջնորդարանի գործերուն հեզասահ ընթացքին համար աւելի մեծ կարելիութիւններ ստեղծուեցան, ազգային իշխանութեան ծրագրումով ծախուած միակ կարեւոր կալուածը, Հելիոպոլսոյ մէջ գտնուող Քլէոփաթրա փողոցի թիւ 45 վիլլան եղաւ:

Ատկէ դուրս, Ազգային Առաջնորդարանը ունեցաւ եւ դեռ

հաւանաբար կ'ունենայ բազմաթիւ նուիրատուութիւններ, սակայն, երբեք չէ մտածուած ինքնամփոփումի մասին, երբ գիտենք թէ կալուած պահպանելը եւ յանձանձելը որքան դժուար դարձած է, եւ ազգային վարչամեքենայէն ներս տրամադրելի տարրեր գտնելը հետզհետէ որքան դժուար կը դառնայ:

Գալով պիտճէի հարցին, մեր զոյգ ազգային վարժարանները կը խլեն մեր ազգային պիտճէին 63/64%ը, այսինքն 2/3ը:

Այսպէս, 1983 թուականին ազգային ընդհանուր ծախսերը եղած են 224 հազար ոսկի, որմէ 143640 ոսկի ծախսուած է մեր զոյգ վարժարաններուն համար:

Իսկ 1984 թուականին ազգային ընդհանուր ծախսերը եղած են 287 հազար ոսկի, որմէ մեր զոյգ վարժարաններուն համար ծախսուած է 180 հազար ոսկի:

Ասոր դիմաց սակայն, ուսուցչական ասպարէզին մէջ աշխատողներուն վճարումները մեծամասնութեամբ կը մնան միջակէն վար եւ չենք կրնար նոր տարրեր կապել մեր վարժարաններուն, կամ վարժարաններուն անձնակազմին միացողները հարկ եղածին պէս վարձատրել:

Այս առթիւ, կարելորութեամբ կը շեշտենք թէ առանց ծրագրի աշխատիլը մեզի պիտի դնէ հետզհետէ աւելի դժուար կացութիւններու առջեւ:

Այսպէս, Գալուստեան վարժարանի նախկին շէնքը, երբ մեզմէ անկախ, պետական ապաստփականացումի պատճառով փլուեցաւ, վարժարանին աշակերտութիւնը ժամանակաւոր կերպով ամփոփուեցաւ Գալուստեան մանկապարտէզի նախկին շէնքին մէջ:

Կատարուած ժամանակաւոր եւ անբնական կարգադրութիւնը, այժմ շուրջ տասնամեակ մըն է նուիրագործուած է, եւ որեւէ ծրագիր չունինք իրատես լուծում գտնելու այդ վարժարանի անբնական կացութեան:

Կրթական այս անբաղձալի վիճակին լուծում գտնելու

համար եւ մեր ազգային եկամուտները աւելցնելու նպատակով, Թեմական ժողովը կազմեց յատուկ Յանձնախումբ մը 4 Փետրուար 1983-ի իր նիստին:

Այս յանձնախումբը շուտով անդամալուծուեցաւ:

Վերոյիշեալ Յանձնախումբը վերակենդանացնելու նոր ճիգ մը եղաւ Թեմական ժողովի 1 Փետրուար 1985-ի նիստին եւ կազմուեցաւ նոր Յանձնախումբ մը, որ դարձեալ գործի չձեռնարկեց:

20 Դեկտեմբեր 1985-ին գումարուած Թեմական ժողովին նիստին խնդրոյ առարկայ եղաւ մեր զոյգ վարժարաններու երկրորդական բաժինները միացնելու հարցը, սակայն այս հարցն ալ չքննուեցաւ:

Դարձեալ, 1 Փետրուար 1985-ի նիստին Թեմական ժողովը երկարօրէն քննեց Զակազիկի եկեղեցւոյ խորանը եւ սրբատաշ մարմարները Հելիոպոլիս, այսինքն Նուպարեան եւ Մերճանեան վարժարաններու շրջափակը փոխադրելու հարցը եւ պաշտօն յանձնեց Քաղաքական ժողովին՝ այս մասին պետական արտօնութիւն ձեռք բերելու:

Եւ ահա, հազիւ տարի մը անցած, այժմ կը քննենք Մերճանեան մանկապարտէզը վարձու տալու հարցը, այս անգամ եկամուտ ապահովելու եւ ինքնամփոփումի զոյգ պատճառները առաջ բերելով:

Այս բոլորը ցոյց կու տան թէ մենք չենք յաջողած ընդհանուր եւ յստակ ծրագիր մը մշակել եւ անոր գործադրութեան հետեւիլ:

Այդ պարտականութիւնը կ'իյնայ գլխաւորաբար Թեմական ժողովին վրայ, որ ազգային իշխանութեան օրէնսդիր եւ ծրագրող թեւն է:

Քաղաքական ժողովը, որ գործադիր մարմին մըն է, որքան ալ կարող եւ գործունեայ տարրերէ կազմուած ըլլայ, չի կրնար իր հեւքոտ առօրեային եւ քրոնիկ հոգերուն մէջ, համապարփակ ծրագիրներու մշակումով զբաղիլ:

Այդ պարտականությունը կ'իյնայ Քաղաքական ժողովէն դուրս մնացող անդամներուն մշակել եւ Քաղաքական ժողովին գործը դիւրացնել:

Հելիոպոլսոյ Նուպարեան վարժարանը եւ անոր շրջաբակին մէջ գտնուող հաստատութիւնները կը ներկայանան որպէս ազգային ամբողջական համալիր մը, որովհետեւ հոն պարփակուած են.

1. Նուպարեան վարժարանի շէնքը
2. Մերճանեան մանկապարտէզի շէնքը
3. Պըլըքտանեան ազգային հանդիսասրահը
4. Մերճանեանի շէնքին մէջ գտնուող աղօթատեղին

Ասկէ զատ, վերջերս ուսումնասիրութեան առարկայ էր Պըլըքտանեան հանդիսասրահի վարի մասը գտնուող ճաշարանը ամբողջութեամբ բարեփոխելով մատուռի վերածել, թէեւ այս մասին եւս յստակ եւ վերջնական որոշում չէ առնուած:

Հելիոպոլսոյ մէջ գտնուող ազգային այս կեդրոնին կարելորութիւնը ասելի կը շեշտուի, եթէ դիտենք անցեալ տասնամեակներուն Գահիրէի հայ գաղութին տեղաշարժը, որուն հետեւանքով քաղաքի հայութիւնը հետզհետէ փոխադրուեցաւ Հելիոպոլիս, ուր նաեւ այսօր կը գտնուի հայկական մշակութային եւ մարզական միութիւններուն մեծամասնութիւնը:

Այս տեսանկիւնէն դիտուած, Նուպարեան վարժարանի համալիրը իբրեւ ազգային կեդրոն, կը համարուի ներկայի եւ մանաւանդ ապագայի ազգային միջնաբերդը եւ սխալ պիտի ըլլար «ինքնամփոփում»ը միջնաբերդէն սկսիլ, փոխանակ այլ տեղերէ սկսելու:

Մեր յուշագիրը եզրափակելու համար, ստորեւ կը ներկայացնենք զանազան բնոյթի առարկութիւններու շարքը, զոր ունինք Մերճանեան մանկապարտէզը վարձու տալու առաջարկին կապակցութեամբ.

1. Պատճառաբանություն՝ այն մասին թե՛ մեր մշակելի հողերը առժամեայ գրաման տակ են եւ թե՛ վերջնական գրաւումի մը պարագային, նիւթական անել կացութեան կը մատնուինք:

Այս պատճառաբանութիւնը իրականութենէն շատ հեռու է: Ազգային Առաջնորդարանը ներկայիս կը յանձանձէ շուրջ 2000 ֆէտտան մշակելի հողեր, եւ շուրջ 1000 ֆէտտան անմշակ հողեր:

Սոյն հողերէն միայն մշակելի 2000 ֆէտտան տարածութիւնն է որ եկամտաբեր է:

Այդ հողերուն զուտ եկամուտն էր՝
1983-ին շուրջ 85283 Ե.Ո.
1984-ին շուրջ 85203 Ե.Ո.

(Քաղուած 1983 եւ 1984 տարեշրջաններու հաշուեկշիռներու, կալուածական հասոյթներու եւ ծախսերու տախտակէն Մ. 2):

Դարձեալ նոյն տարիներուն, ազգային ընդհանուր մուտքերը եղած են՝

1983-ին 270271 Ե.Ո.
1984-ին 366914 Ե.Ո.

Ասոնցմէ եթէ հեռացնենք իւրաքանչիւր տարուան ընթացքին եկած պատահական հասոյթները (հնչուն նուիրատուութիւն եւ այլն), որոնք եղած են՝

1983-ին շուրջ 20000 Ե.Ո.
1984-ին շուրջ 49000 Ե.Ո.

Վերոյիշեալ զոյգ տարիներուն սովորական եկամուտները կ'ըլլան՝

1983-ին շուրջ 250271 Ե.Ո.

1984-ին շուրջ 317914 Ե.Ո.

Այս ձեռով, մշակելի հողերէն ամբողջ զուտ եկած եկամուտները Ազգային Առաջնորդարանի սովորական եկամուտներուն հետ բաղդատած, կը ներկայացնեն հետեւեալ տոկոսը՝

1983-ին 34%

1984-ին 26,8%

Արդ, եթէ պատահի որ պետութիւնը գործադրէ 1971-ի թիւ 35 օրէնքը, Ազգային Առաջնորդարանին պիտի մնան՝

իր մշակելի հողերէն 767 ֆէտտան

իր անմշակ հողերէն 400 ֆէտտան

(Տեսնել Թեմական ժողովի 29/6/81-ի նիստին այս մասին ներկայացուած մանրամասն տեղեկագիրը):

Մեր հողերուն վերջնական գրաման պարագային պիտի շարունակենք ունենալ մեր մշակելի հողերուն ներկայ եկամուտներուն 50% էն աւելին, մանաւանդ եթէ հաշուի առնենք Շէյխ Էթմանի մէջ մեր վարձած շուրջ 40 ֆէտտանէ աւելի տարածութեան յարաբերաբար բարձր վարձակալական արժէքը (նուազագոյնը տարեկան 20000 Ե.Ո.) զուտ եկամուտ:

Այս տեսակէտը հաստատելու համար, կու տանք հետեւեալ մօտաւոր գնահատումները՝

Շուրջ 2000 ֆէտտան մշակելի հողերու ներկայ տարեկան զուտ եկամուտ (միջին հաշիւ) 85000 Ե.Ո.:

Պակաս: 40 ֆէտտան Շէյխ Էթմանի վարձքը 20000 Ե.Ո.

Շուրջ 1960 ֆէտտանի զուտ տարեկան եկամուտ 65000 Ե.Ո. որ կ'ընէ միջին հաշուով ֆէտտան գլուխ շուրջ Ե.Ո. աւելի:

Գրառումէն վերջ մեր եկամուտներուն պատկերը պիտի ըլլայ հետեւեալը:

Եթէ մեզի մնալիք 767 ֆէտտան մշակելի հողէն վերցնենք Շէյխ Էթմանի 40 ֆէտտանը, մնացեալին զուտ եկամուտը, ներկայ եկամուտներուն հիման վրայ պիտի ըլլայ՝

$$\begin{array}{r} 727 \text{ ֆէտտան} \times 33.160 \text{ Ե.Ո.} = 24107 \text{ Ե.Ո.} \\ \text{Շէյխ Էթման} \quad 40 \text{ ֆէտտան (նուազագոյն)} = \underline{20000} \text{ Ե.Ո.} \\ \text{Գումար} \quad 767 \text{ ֆէտտան} \quad 44107 \text{ Ե.Ո.} \end{array}$$

Ինչ որ կը հաւասարի 1983-ի եւ 1984-ի հողային զուտ եկամուտին միջինին (85000 Ե.Ո.) 51.8%ին:

Ասկէ զատ, մեզի մնալիք 400 ֆէտտան անմշակ հողերը եթէ ծախուին, իրենց գոյացնելիք մայր գումարէն գալիք տոկոսը, լիովի եւ աւելիով կը գոցէ երկրագործական հողերէ պակսելիք եկամուտները:

Այս գնահատումը եղած է այն հիման վրայ, որ տարեկան 50 հազար Ե.Ո. տոկոս պիտի գայ 400,000 Ե.Ո.ի մայր գումարէ մը, եթէ մեզի մնալիք 400 ֆէտտան անմշակ հողերը ծախենք ֆէտտանը միայն 1000 Ե.Ո.ի, այսինքն մեթր քառակուսին 1 Ե.Ո. էն պակաս:

Այս բոլորին կողքին, դեռ հաշուի չենք առներ այն փոխ հատուցումները, որ 1971-ի թիւ 35 օրէնքի 3-րդ յօդուածով, Ազգային Առաջնորդարանի պարտին վճարուիլ փոխան՝

$$\begin{array}{r} 1233 \text{ ֆէտտան մշակելի հողերու եւ} \\ 600 \text{ ֆէտտան անմշակ հողերու} \end{array}$$

Այս բաժինը վերջանալէ առաջ ըսենք, թէ ժամանակի անբաւարարութեան պատճառաւ ամբողջական տուեալներ չենք կրցած ունենալ մասնաւորաբար ինչ կը վերաբերի Շէյխ Էթմանի տարածութեան եւ վարձակալական ներկայ եկամուտին:

Սակայն, վստահ ենք որ իրականութեան պատկերը ասելի խրախուսիչ է քան մեր ներկայացուցածը, քանի որ Շէյխ Էթմանի եկամուտները ենթադրուած են տարուէ տարի յաւելում կրել:

Կը յուսանք որ այսքանը արդէն համոզէ մեր յարգելի երեսփոխան ընկերները որ Ազգային Առաջնորդարանը կարելոր եկամուտներ գոյացնելու մեծ հնարաւորութիւններ ունի:

2. Վարժարանը վարձու տալու համար պետական արտօնութիւն ստանալու անհրաժեշտութիւն:

Ներկայիս ի զօրու եղող 1981-ի թիւ 139 կրթական օրէնքը իր 61-րդ յօդուածով կը նշէ թէ.

-Արտօնեալ վարժարան մը իրաւունք չունի հետեւեալ քայլերէն որեւէ մէկը առնելու առանց արտօնագիր տուող պատկան մարմնին հաւանութեան:

-Փոփոխութիւն այն տուեալներուն, որոնց հիման վրայ տրուած է արտօնագիրը:

-Վարժարանի դրութեան փոփոխութիւնը կամ ուսումնական ծրագիրներու փոփոխութիւնը եւայլն, եւայլն:

-Վարժարանի դրութեան փոփոխութիւնը մէկ հանգրուանէն միւսը կամ նոր հանգրուաններու յաւելումը:

-Վարժարանի աշխատանքներուն կասեցումը կամ անոր առաքելութիւնը շարունակելէ ետ կենալը:

-Վարժարանի վայրին փոփոխութիւնը կամ սեփականատիրութեան փոփոխութիւնը:

Երբ հաստատուի թէ վարժարանը այս պարտաւորութիւններէն որեւէ մէկը խախտած է, պատկան կրթական շրջանը կրնայ վարժարանը դնել ֆինանսական եւ վարչական հսկողութեան ներքեւ, եւ այս պարագային

կրթական շրջանը կը ստանձնէ վարժարանին տնօրէնութիւնը մինչեւ որ կատարուած խախտումը սրբագրուի:

Այս յօդուածը յստակ կը դարձնէ թէ վարժարանի որեւէ մէկ բաժինը վարձու տալէ առաջ պարտինք անհրաժեշտօրէն պատկան կրթական շրջանէն արտօնութիւն ձեռք բերել:

3. Պատճառաբանութիւն՝ այն մասին թէ վարձուող շէնքը մանկապարտէզի շէնք է եւ մանկապարտէզները գերծ ըլլալով կրթական նախարարութեան հակակշռէն, հարկ չկայ պետական արտօնութիւն առնելու այս վարձակալութեան համար:

Վերել յիշուած 1981-ի թիւ 139 կրթական օրէնքին 54-րդ յօդուածին թիւ 1 պարբերութիւնը յստակօրէն կ'ըսէ, թէ մասնաւոր վարժարան չեն համարուիր:

Այն մանկապարտէզները, որոնք կը գտնուին Ընկերային Գործոց նախարարութեան հսկողութեան ներքեւ:

Գալուստեան-Նուպարեան վարժարանի պետութեան կողմէ վաւերացուած ներքին կանոնագրին մէջ յստակօրէն յիշուած է թէ վարժարանը ունի մանկապարտէզի բաժին:

Այս իրողութիւնը ինքնին մեզի կը դնէ պետական արտօնութիւն առնելու պարտադրութեան առջեւ:

4. Պատճառաբանութիւն՝ այն մասին թէ Մերճանեան մանկապարտէզը քանի որ այլ վարժարանի մը պիտի վարձուի, կրթական նախարարութիւնը առարկութիւն չ'ընէր:

Վերոյիշեալ կրթական օրէնքին եւ վերոյիշեալ յօդուածին թիւ 2 պարբերութիւնը կը սահմանէ թէ մասնաւոր վարժարան չեն համարուիր (այսինքն մատրասա խասսա):

Այն վարժարանները, որոնք կը հիմնուին օտար կազմակերպութիւններու կողմէ եւ որոնց մէջ կ'ուսանին դիւանագիտական եւ հիւպատոսական անձնակազմի

անդամներու, ոչ-եգիպտացի զաւակները, ինչպէս նաեւ այլ օտարականներու զաւակները:

Հետեւաբար, վարձակալութեան համար մեզի ներկայացող կազմակերպութեան վարժարանը, կրթական նախարարութեան սահմանումով՝ մասնաւոր վարժարան չի նկատուիր, ինչ որ վարձակալութեան պարագային կրնայ առարկութեան դուռ բանալ:

5. Վարձակալութիւնը իրականանալու պարագային տուրքի ենթակայ ըլլալու հարց

Թէեւ ստոյգ չէ, սակայն շատ հաւանական է, որ որպէս կահաւորեալ՝ վարձու վայր, վարձակալութիւնը ենթակայ ըլլայ տուրքի, որ տուրքերու ներկայ սակերով կը հասնի տարեկան 9600 տոլարի (տարեկան 16% ի միջին հաշուով):

6. Վարձակալական թեկնածուին

ա) հանրային սպասարկութիւն մատուցանելու պարագան,

բ) եգիպտական բարոյական անձնաւորութիւն (բէրսոն մորալ կամ շախսիա իթիպարիա) ըլլալու պարագան:

Եթէ վարձակալութիւն առաջարկող ընկերակցութիւնը Ընկերային Գործոց նախարարութեան մօտ արձանագրուած եգիպտական ընկերակցութիւն մըն է, եգիպտահպատակ բարոյական անձնաւորութիւն կը համարուի:

Այս պարագային ուսումնասիրելի կը մնան օրէնքին տրամադրութիւնները, այն մասին թէ հինգ տարուան վարձակալութեան աւարտին ինչ դժուարութիւններ կրնան ծագիլ.

1. Եթէ Ազգային Առաջնորդարանը փափաքի դադրեցնել վարձակալութիւնը եւ վարձակալը, իբր հանրային սպասարկութիւն մատուցանող կազ-

մակերպություն, պնդէ վարձակալութիւնը շարունակել եւ վարժարանը չպարպել:

2. Վարձակալութիւնը շարունակելու պարագային, վարձակալին եգիպտահպատակ ըլլալու հանգամանքը, իրաւունք չի տար օրէնքի ուժով փոխելու վարձակալութեան բնոյթը, զայն վերածելով սովորական վարձակալութեան փոխան կահաւորեալ վարձակալութեան դրութեան, հինգ տարուայ օրինական շրջանի աւարտին:

7. Մերճանեան Մանկապարտէզը պարպելու առիթով, Նուպարեան վարժարանի մէջ կառուցուելիք շինութիւններուն պարագան

Յատկանշական է որ այս հարցով զբաղելու համար կազմուած յատուկ յանձնախումբը միայն մէկ նիստ գումարելով (Ուրբաթ, 14 Մարտ 1986), յաջողած է այն եզրակացութեան յանգիլ, թէ կարելի է Մերճանեան մանկապարտէզին մէջ ներկայիս գոյութիւն ունեցող կրթական թէ այլ դիւրութիւնները, որոնցմէ ընթացիկ տարեշրջանին կ'օգտուին վարժարան յաճախող 105 աշակերտներէն 47 փոքրիկներ (18 մանկապարտէզ եւ 29 նախակրթարան), կարելի է փոխարինել Նուպարեան վարժարանի մէջ ստեղծուելիք դիւրութիւններով:

Կասկածելի է որ նման կարգադրութեան մը առթիւ յառաջ գալիք մանկավարժական, առողջապահական, ճարտարապետական, վարչական եւ թեքնիք այլ անպատեհութիւնները իրենց բարուք լուծումը գտած ըլլան:

Միւս կողմէ, ստեղծուելիք որեւէ անպատեհութեան հետեւանքը, մեր աշակերտութիւնը պիտի կրէ յառաջիկայ տարիներուն:

Գալուստեան վարժարանի օրինակը շատ խօսուն է այս պարագային:

Առանց լուրջ ուսումնասիրութեան եւ ծրագրումի, քանի

մը ամսուան ընթացքին հապճեպով շինուելիք որեւէ կառոյց տեսականօրէն պիտի խաթարէ Նուպարեան վարժարանի դիմագիծը եւ ապագան:

8. Ակնկալուած նիւթական եկամուտ

Եթէ Մերճանեան մանկապարտէզը վարձելու համար տարուած ենք միայն նիւթական եկամուտ ապահովելու ակնկալութենէն, Ազգային Առաջնորդարանը վստահաբար կրնայ 110.000 Ե.Ռ.ի եկամուտ ապահովելու չափ մայր դրամագլուխ մը գոյացնել:

110.000 Ե.Ռ. տարեկան եկամուտ մը գոյացնելու համար, պարտինք իրականացնել 880.000 Ե.Ռ. մայր գումար մը՝ 12,5% տոկոսի ակնկալութեամբ:

Առաջին առթիւ, եթէ ծախսի Զակագիկի Ս. Խաչ եկեղեցին եւ շրջակայի հողը, արդէն կարելի է գոյացնել 450 հազար Ե.Ռ.ի մայր գումար մը:

Բնականաբար, որեւէ տրամաբանութեամբ տարին մէկ օր գործածուող եկեղեցի մը, ազգային տեսակէտով, չի կրնար աւելի կարելոր ըլլալ, քան ամէն օր գործածուող կրթական օճախ մը:

Անշուշտ, կան նաեւ այլ կալուածներ, որոնց վաճառքը կրնայ գոյացնել ակնկալուած 880.000 Ե.Ռ.էն շատ աւելին:


Իբրեւ եզրակացութիւն, Մերճանեան մանկապարտէզը վարձու տալու ծրագիրը կը նմանեցնենք, մեծահարուստ մարդու մը պարագային, որ նիւթական բազմաթիւ կարելութիւններ ունենալով հանդերձ, հնչուն դրամ ունենալու համար իր սեփական բնակարանին մէկ մասը կահաւորեալ կը վարձէ՝ աչք առնելով այդ կացութեան բոլոր անպատեհութիւնները, փոխանակ իր նիւթական մեծ եւ նպաստաւոր կարելիութիւնները ծրագրուած կերպով շահարկելու:

Կը յուսանք որ ներկայ յուշագրին մէջ ներկայացուցած առարկայական տուեալները եւ մանաւանդ մեր երեսփո-

խան ընկերներուն առարկայական մօտեցումը, կը յանգին Մերճանեան մանկապարտէզը վարձու տալու առաջարկը միանգամընդմիջտ մերժելու:

ՄԱՐՏԻԿ ՊԱԼԱԵԱՆ

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ



Գահիրէ Թեմական ժողովի եւ Հելիոպոլսոյ
Գալուստեան-Նուպարեան վարժարանի
հոգաբարձութեան անդամներ

Ծանօթ. -

Թեմական ժողովը հետագայ նիստի մը մէջ
օրակարգի 5-րդ կէտով պիտի բանաձեւէր հետեւեալը՝

5- Ի Հելիոպոլիս, Մերճանեան Մանկապարտէզը
անգլիական վարժարանի մը ամսական 5000 Ամերիկեան
Տոլարով, եւ հինգ տարուան համար ամէն տարի 10 առ
հարիւր յաւելմամբ վարձու տալու հարց:

Կարդացուեցաւ, Պատ. Քաղաքական ժողովի 21 Մարտ
1986 թուակիր տեղեկագիրը յիշեալ հարցին առնչու-
թեամբ:

Կարդացուեցաւ նաեւ երեսփոխաններ Տեարք Պերճ
Թէրզեանի եւ Մարտիրոս Պալաեանի պատրաստած
յուշագիրը:

Ժողովական երեսփոխաններ կարծիքներու եւ
տեսակէտներու փոխանակում ունեցան հարցին առնչուող
զանազան պայմաններուն մասին:

Դիտել տրուեցաւ, թէ սահմանափակ ժամանակամիջոցի մը ընթացքին, որոշում առնել կարելի չէ, նկատի ունենալով որ պէտք եղած ուսումնասիրութիւնը կատարելու առիթը չենք ունեցած:

Ժողովը սկզբունքային գետնի վրայ, միաձայնութեամբ համամտութիւն յայտնեց վարձու տալու ուղղութեամբ, եւ սակայն որոշուեցաւ Քաղաքական ժողովէն պահանջել մանրամասն ուսումնասիրութիւն մը կատարել օրինական, վարձակալական եւ հարցին բոլոր տեսանկիւններէն առաձ, արդիւնքը Թեմական ժողովին ներկայացնելու համար առ ի վաւերացում:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Մարդկային կեանքի հելքոտ թաւալումին ընթացքին, լայն հասարակութեան անդամները չեն անդրադառնար նորամուտ երեւոյթներու առկայութեանը եւ կամ ժամանակի ընթացքին հին երեւոյթներու մոռացումին:

Փորձենք պահ մը վերլուծել Սփիւռքի թէ հայրենիքի մէջ գոյութիւն ունեցող երեւոյթներու՝ կենցաղային պայմաններու բերումով եղած եղափոխումը:

Այսպէս, եգիպտահայ համայնքի պարագային, երեւոյթներ գոյութիւն ունէին, որոնք այսօր «հին ազգաց պատմութիւն» են:

Օրինակ, քանի մը տասնամեակ առաջ, երբ մեր միութիւնները պարահանդէսներ կը կազմակերպէին, ներկայ կ'ըլլային համայնքի զաւակները՝ ընտանեօք:

Ձեռնարկին օրը հիւրերը կու գային խումբերով, որոնց աւանդականօրէն մաս կը կազմէին ընտանիքներու հայրերը, մայրերը, ինչպէս նաեւ անոնց տղայ կամ աղջիկ զաւակները:

Պարահանդէսի սեղաններուն շուրջ նկատուող այս տոհմիկ երեւոյթը, տարիներու ընթացքին՝ մտայնութիւններու փոփոխութեան հետեւանքով, սկսաւ կորսուիլ:

Արդարեւ, նոր սերունդին եթէ պատմէք այդ պարահանդէսներու մասին, ծիծաղելով կամ քրքջալով մտիկ կ'ընեն ձեր ըսածները:

Օրինակ, սովորութիւն էր որ պարահանդէսին ընթացքին երիտասարդ տղաքը երթային դէպի որեւէ սեղան՝ հոն նստած օրիորդ մը պարահարթակ հրաւիրելու: Ասիկա կը պատահէր ծնողքին լուռ հաւանութեամբ եւ ներկայ հասարակութեան գոհունակ ակնարկներուն տակ:

Ժամանակի ընթացքին, նոր սերունդները չէին ընկերանար իրենց ծնողքին եւ կը նախընտրէին նստիլ

իրենց տարեկից բարեկամներուն եւ բարեկամուհիներուն հետ:

Այսօր, գոյութիւն չունին անցեալի տոհմիկ պարահանդէսները, եւ երիտասարդները խանդավառ չեն հայկական ակումբի մէջ զուարճանալու գաղափարով ու կը նախընտրեն յաճախել օտար հաստատութիւններ:

Այլ պարագայ մըն էր շրջանաւարտներու պատմութիւնը: Այսպէս, իւրաքանչիւր մշակութային միութիւն տարեվերջի արձակուրդին սկիզբը կը կազմակերպէր պաղպաղակասեղան մը, որուն ընթացքին կը հիւրասիրուէին նոյն տարին ուսումնական հանգրուան մը ավարտած շրջանաւարտ աշակերտները:

Սոյն պաղպաղակասեղանին ներկայ կ'ըլլային շրջանաւարտներուն ընտանիքները եւ մօտիկ անձերը:

Շրջան մը սովորութիւն էր նաեւ կազմակերպիչ միութեան կողմէ՝ միութեան անդամակցութեան դիմումնագիր բաժնելը շրջանաւարտներուն:

Դարձեալ, սովորութիւն էր որ այդ ձեռնարկներուն ընթացքին, կրթական կամ մշակութային մարզերէն ներս գործող երէց անձ մը «Հուսկ Բանք» մը արտասանէր:

Այսօր այդ սովորութիւնը իսպառ մոռցուած է:

Ուրիշ պարագայ մըն է ընտրապայքարի չգոյութիւնը:

Գիտենք որ, 1975-էն սկսեալ, մեր գաղութին մէջ (Գահիրէ եւ Աղեքսանդրիա) Թեմական ժողովներուն անդամակցութեան համար փոխադարձ համաձայնութեան համագործակցական ցանկին մաս կազմող ընտրելիները կը ներկայանային այդ ընտրութեան:

Այսօրուան երիտասարդ սերունդը (մինչեւ 50 տարեկան) գաղափար չունի ընտրապայքարի էութեան մասին:

Այսպէս, գոյութիւն կ'ունենային երկու հակադիր ճակատներ, որոնց անդամները կը պայքարէին ձեռք բերելու ընտրող հասարակութեան քուէները: Պայքարը կը տարուէր մամուլով, որուն մէջ հակադիր կողմերը զիրար

կը քննադատէին: Իւրաքանչիւր կողմին ընտրապայքարը կը տարուէր նաեւ կողմերուն պատկանող սրահներուն մէջ, ինչպէս նաեւ ընտրութեան օրը կ'ապահովէին ընտրողներուն փոխադրութիւնը դէպի քուէատուփ, վստահ ըլլալու համար թէ իրենց ակնկալած քուէները պիտի ունենան:

Նուիրատուութիւններու պարագան: Հինէն ի վեր արմատացած երեւոյթ մը կար գաղութին մէջ, ուր ըստ պարագայի (ծնունդի, նշանախօսութեան, ամուսնութեան, մահուան եւ յաջող շրջանաւարտութեան) նուիրատուութիւններ կ'ըլլային համայնքին մէջ աշխոյժ գործունէութիւն ունեցող միութիւններուն եւ Ազգային Առաջնորդարանին հովանաւորութեան տակ գործող մարմիններուն:

Սակայն, այն օրէն որ Ազգային Առաջնորդարանին պիտոճէն զգալիօրէն բարելաուեցաւ, ժողովուրդը կորսնցուց նուիրատուութիւն ընելու իր սովորութիւնը, պատրուակելով թէ նուիրատուութիւն ստացող կազմակերպութիւնները անոր կարիքը չունին:

Այժմ փորձենք ներկայացնել սփիւռքահայու աչքով դիտուած, մեր հայրենի ժողովուրդին մօտ նշմարուած կարգ մը երեւոյթները:

60-ական թուականներուն սկիզբները մեր հայրենի եղբայրները եւ քոյրերը սկսան հերթաբար՝ խումբերով Եգիպտոս այցելել:

Սկիզբի շրջանին այցելուները Նոյեմբեր, Դեկտեմբեր եւ Յունուար ամիսներուն Եգիպտոս կու գային՝ սպիտակ կօշիկներ հագած:

Այդ ամիսներուն Եգիպտոսի մէջ բաւական ցուրտ կ'ընէր եւ սպիտակ կօշիկները զարմանք կը պատճառէին տեղացիներու:

Քիչ ժամանակ ետք հասկցուեցաւ այս երեւոյթին էութիւնը:

Եկող հիւրերուն տեղեկութիւն կը տրուէր, թէ Եգիպտոս

Ափրիկէի մէջ գտնուելով, «տօթակէզ» երկիր կը համարուէր, եւ անոր համար այցելուները ձեռք կ'առնէին նախազգուշութեան միջոցներ, որոնք տիրող կլիմայական պայմաններուն չէին յարմարեր:

Բարեբախտաբար, այս երեւոյթը շատ չտեսց եւ ժամանակի ընթացքին չքացաւ:

Ուրիշ երեւոյթ էին հայրենիքէն եկողներուն բերանին մէջ տեղադրուած ոսկեայ ակռաները, որոնք ենթադրուած էին յուշել ենթակային ընկերային բարօր կարգավիճակին մասին:

Այս երեւոյթն ալ ժամանակի ընթացքին կորսուեցաւ:

Տարբեր պատմութիւն մըն էր հայրենիքէն եկող այր մարդոց հանդերձանքը: Անոնց մէկ մասը, որ ըստ երեւոյթին նախապէս հայրենի սահմաններէն դուրս չէր եղած, կը հետեւէր սովետական նորածեւութեան:

Այսպէս, այս դասակարգին պատկանողներուն բաճկոնները լայն կ'ըլլային, փէշը՝ երկայն, մասնաւորաբար թեւերը կը ծածկէին ձեռքին երեք քառորդը եւ մատները հազիւ կը տեսնուէին:

Անոնք կօշիկի փոխարէն գուլպայով սանտալ կը հագնէին, ինչ որ իրենց ինքնուրոյն հով մը կու տար: Ժամանակի ընթացքին թեւերը կարճցան եւ սանտալները կօշիկով փոխարինուեցան ու ամէն ինչ իր բնականոն տեղը գտաւ:

Այս երեւոյթներուն վրայ պէտք է անելցնել հայրենիք այցելող սփիւռքահայերուն նկատումները:

Խօսքը, անշուշտ, անկախութենէն առաջուայ շրջանին կը վերաբերի:

Անսովոր երեւոյթ մը չէր որ ճաշարանին սպասեակը ձեր ապսպրած ճաշը բերելով, գլանիկ մը վառէր եւ զայն ըմբռնելէ յետոյ միայն միտքը իյնար մինչ այդ արդէն պաղած ճաշը ձեզի հրամցնել:

Նշելի երեւոյթ մըն էր պանդոկներուն մէջ տիրող

կացութիւնը:

Ամէն յարկի վրայ պատասխանատու տիկին մը կար, որ կը զբաղէր իր յարկին վրայ գտնուող հիւրերով:

Այս պաշտօնը ունեցողները, չէք գիտեր թէ զուգահիսութեամբ կամ ծրագրուած ընտրութեամբ, հասարակաց գիծեր ունէին:

Առաջին պայմանը՝ բոլորն ալ իրենց շրթներուն վերը աղուամազ ունէին, որ պէխի մը խաբկանքը կու տար:

Երկրորդ յատկանիշը այն էր որ իրենց խօսակցական լեզուն յարձակողական էր եւ աղմկոտ:

Այս առիթով կը յիշենք պարագայ մը, ուր բարեկամներով հայրենիք գացած էինք եւ իջած՝ ծանօթ պանդոկ մը:

Մեր բարեկամներէն մէկը շուկայէն թարմ պտուղներու տեսակներ գնելով, իր սենեակը տարած էր:

Սենեակին մէջ տեղաւորելէ յետոյ, խլրտում մը կը լսէ եւ յանկարծ կը նշմարէ որ մուկ մը կ'արածի պտուղներուն վրայ:

Անմիջապէս սենեակէն դուրս գալով, կը դիմէ այդ յարկի պատասխանատու տիկնոջ, բողոքելով որ սենեակին մէջ մուկ կայ: Յարկին պատասխանատու տիկինը, փոխանակ մուկէն ձերբազատուելու միջոցներ ձեռք առնելու կամ ներողութիւն խնդրելու, յարձակողական ոճով մը կը պոռայ. «Դ՛րն հասուն տղամարդ էս եւ մուկէն կը վախնամս»:

Այս կացութեան առջեւ, մեր բարեկամը «կը նահանջէ» իր սենեակը՝ աւելորդ բախում մը չստեղծելու համար պատասխանատու տիկնոջ հետ:

Այս կիները աւելի ըմբշամարտիկ երեսոյթ ունէին, քան այսօր զիրենք փոխարինող նրբակազմ եւ հեզահամբոյր օրհորդներն ու տիկինները:

Այս երեսոյթը եւս գոյութիւն չունի այսօր:

Կը մնայ վերջին օրինակ մը այն երեսոյթներէն, որոնք

գոյութիւն ունէին Սովետական շրջանին, անկախութենէն առաջ:

Սփիւռքէն հայրենիք այցելող որեւէ խումբի համար ընդունուած կարգ էր Սփիւռքի Հետ Մշակութային Կապի Կոմիտէին այցելութիւն մը տալ:

Պատահեցաւ որ, այցելութիւններէն մէկուն ընթացքին, եգիպտահայ խումբ մը հանդիպի Սփիւռքի Կոմիտէին, մինչ նոյն պահուն ամերիկահայ խումբ մը ներկայ էր դահլիճին մէջ: Այցելու երկու խումբերուն անդամները կը սպասէին տեղի ունենալիք ելոյթներուն: Յանկարծ, դահլիճ մտաւ Սփիւռքի Կոմիտէի Նախագահը եւ սկսաւ խօսիլ զանազան մարզերու մէջ՝ 1913 թուականէն սկսեալ Հայաստանի ունեցած նուաճումներուն մասին:

Շրջան մը, Հայաստանէն Սփիւռք եկող ոեւէ պատասխանատու, երբ խօսք առնէր, այդ խօսքին սկիզբը պէտք է անպայման յիշէր 1913 թուականը:

Շատերու միտքին մէջ յստակ չէր ատոր պատճառը:

Յետագային, լուսաբանուեցանք թէ Համաշխարհային Առաջին Պատերազմէն (1914-1918) առաջ, վերջին տարին էր որ կը գործէր հին ռեժիմը:

Վերադառնալով Սփիւռքի Կոմիտէի դահլիճը, ուր ներկաներուն հարցումներուն պատասխան կը տրուէր, ամերիկահայ տիկին մը, ոտքի կանգնելով, Սփիւռքի Կոմիտէի Նախագահին ուղղուած եւ անգլերէնէ թարգմանուած հարցում մը ըրաւ. «Դուն ղվ ես»:

Ամբողջ դահլիճը սկսաւ հռհռալ, թէեւ հարցում հարցնողը իրաւունք ունէր, քանի որ դահլիճին մէջ գտնուող Սփիւռքի Կոմիտէի պատասխանատուները՝ ենթադրելով որ Պարոն Վարդգէս Համազասպեանը ամէնուն ծանօթ է, հարկ չէին տեսած զայն հանգամանօրէն ներկայացնելու: Իբրեւ անդրադարձ այդ հարցումին, Կոմիտէի պատասխանատու մը ներկայացուց Սփիւռքի Կոմիտէի Նախագահին անունը եւ հանգամանքը:

Այժմ, անկախութեան տարիներուն, այս ամանդութիւնն
ալ կորսուած է:

Այս բոլորէն վերջ, չենք կրնար նախատեսել կամ
պատկերացնել, թէ մեր ժողովուրդը ապագային ինչ այլ
երեւոյթներ պիտի դիմակալէ:

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳԻՐՔԵՐԸ ԵՒ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

- 2008 Եգիպտահայ Հայեացքներ Պատմութեան, Քաղաքականութեան եւ Մշակութային Ժառանգութեան Մասին (արաբերէն)
- 2009 Ինչպէս Տօնուեցաւ Հայ Պարբերական Մամուլի 200-ամեակը Գահիրէի Մէջ
- 2010 Անտեղի Պատիւի Մը Շռայլումին Առիթով
- 2010 Յետադարձ Անդրադարձ - Յօդուածներու Ժողովածոյ
- 2011 Տեղեկագիր Գալուստեան Եւ Նուպարեան Վարժարաններու 1989-ին Վաւերացուած Կանոնագիրներուն Մասին
- 2012 Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամի Հրատարակչական Գործունէութիւնը
- 2012 ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը - Ակնարկ 20-ամեայ Հեռաւորութենէ
- 2014 Սպիտակի երկրաշարժը, Եգիպտոսի ՀԲԸՄ-ը Եւ Եգիպտոսի համայնքը (համահեղինակ Արաքսի Տէօվլէթեան)
- 2014 «ԱՐԵԻ»ի Արաբերէն Ամսօրեայ Յաւելուածը
- 2014 Պատասխան Առ որ Անկ է
- 2015 Սրտցաւ Կոչ հայոց լեզուին համար
- 2016 Տիգրան Պապիկեան (Համադրում)
- 2017 Գահիրէի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը
- 2019 Հայաստան-Սփիւռք Համահայկական Ա. Համաժողով - Մտորումներ Քսանամեայ Հեռաւորութենէ
- 2022 Հրաչ Մանուկեան ՀԲԸՄի եւ ՀԵԸի վաստակաւոր անդամ
- 2024 Գրախօսականներ եւ Անդրադարձներ Պերճ Թէրզեանի Գիրքերուն մասին, եւ իր հետ եղած Հարցազրոյցներ
- 2024 Դոկտ. Աւետիս Եափուճեանի Երկու Գրախօսականները Պերճ Թէրզեանի Երկու Գիրքերուն Մասին: 1-«Յետադարձ Անդրադարձ»:

- 2-«Ինչպէս Տօնուեցաւ Հայ Պարբերական Մամուլի 200-ամեակը Գահիրէի Մէջ»
- 2025 Կարելի է Արեւմտահայերէնը Փրկել Այսօրուան Ցաւալի Վիճակէն
- 2026 Եգիպտահայ Համայնքի Անդամներուն Կիսադարեան Համերաշխ Գոյակցութիւնը (յետմահու հրատարակուած)

ՎԵՂԻՆԱԿԻՆ ՍՏԱՑԱԾ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԵՐԸ ԵՒ ՄԵՏԱԼՆԵՐԸ

- 1999 Սեպտեմբերին ստացած է Մաշտոցի անուան Մատենադարանի յատուկ վկա յագիր եւ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ յուշամետալը:
- 2005 Դեկտեմբերին ստացած է ՀՀ վարչապետին շնորհակալագիրը:
- 2007 Ապրիլին ստացած է ՀՀ նախագահին շնորհակալագիրը:
- 2010 Հոկտեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոսէն պարգեատրուած է Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ շքանշանով եւ Հայրապետական Կոնդակով:
- 2011 Մայիսին ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովին որոշումով արժանանացած է ՀԲԸՄ-ի «Պատուոյ Անդամ»ի տիտղոսին:
- 2011 Սեպտեմբերին ՀՀ Նախագահին հրամանագրով պարգեատրուած է ՄԻՍԻԹԱՐ ԳՕՇ մետալով:
- 2013 Հոկտեմբերին պարգեատրուած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան ՄԱՅՐԵՆԻԻ ԴԵՍՊԱՆ մետալով:
- 2018 Յունիսին Գնահատանքի Վահանակ ՀԲԸՄ-ՀԵԸ (Պէյրուֆ) Կեդրոնական Վարչութեան կողմէ հետեւեալ արձանագրութեամբ *Տիար Պերճ Թէրզեանին՝ Երկարամեայ եւ անխոնջ նուիրեալ ՀԲԸՄ-ի ղեկավարին եւ խիզախ մտաւորականին:*

*Համակարգչային ծելաւորում՝ Շահէ Լուսարարեան
Տպարան՝ AFRICAN PRESS*